Զեռնարկը նախատեսված է ինչպես արդարադատության իրականացման գործընթացում ներգրավված անձանց (մասնավորապես ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների և ՀՀ քննչական կոմիտեի քննիչների, ինչպես նաև դատախազների և դատավորների), այնպես էլ այդ թեմայով դասավանդողների համար՝ ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու նպատակով: Այն մշակվել է՝ հաշվի առնելով կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ներպետական դատական պրակտիկայում դրա կիրառման հիմնահարցերը:

ARM

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի դրույթների կատարումը:

**www.coe.int**

Եվրոպական միությունը 28 եվրոպական ժողովրդավարական երկրների տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է՝ իր 500 միլիոն քաղաքացիների համար առավել արդար և ապահով աշխարհում խաղաղություն, բարգավաճում և ազատություն ապահովելու նպատակով: Այս ամենն իրագործելու համար ԵՄ երկրները հիմնել են մարմիններ՝ ԵՄ աշխատանքներն իրականացնելու և նրա օրենսդրությունն ընդունելու համար: Նրա հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը (որը ներկայացնում է Եվրոպայի ժողովրդին), Եվրոպական միության խորհուրդը (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը):

**http://europa.eu**

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Սերգեյ Առաքելյան
Ջուլիա Կոզմա

# Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը

**http://eap-pcf-eu.coe.int**

Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Սերգեյ Առաքելյան
Ջուլիա Կոզմա

# Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը

ԵՐԵՎԱՆ 2017

*Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի միջոցներով: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ ձևով չեն արտահայտում Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:*

© Եվրոպայի խորհուրդ
© Արդարադատության ակադեմիա

## Բովանդակություն

1. Ներածություն ..... 4
2. Վերապատրաստման դասընթացի բովանդակությունը..... 9
Դաս 1. Ներածություն ..... 9
Դաս 2. Կյանքի իրավունքը ..... 19
Դասեր 3–4. Խոշտանգման արգելքը ..... 46
Դասեր 5–10. Արդյունավետ քննությունը ..... 76
3. Օգտագործված գրականություն .....136
4. Հավելված .....144

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կյանքի իրավունքը մարդու մնացած իրավունքների (այդ թվում՝ խոշտանգման չենթարկվելու) իրականացման հիմնական նախադրյալն է: Այն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում, որոնք վավերացրել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Հաճախ կարելի է լսել բավականին տարածված, բայց սխալ կարծիք այն մասին, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիան (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) պաշտպանում է միայն «հանցագործներին»՝ տուժողների համար չպարունակելով որևէ երաշխիք: Այս թյուր մոտեցումը հաճախ օգտագործվում է հասարակ մարդկանց շրջանում Կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ կամ Դատարան) դերի ու նշանակության նսեմացման նպատակով և զուրկ է ինչպես տեսական, այնպես էլ գործնական հստակ հիմնավորումներից:

Կոնվենցիայի հոդված 2–ի հիմնական նպատակը յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքի պաշտպանության երաշխավորումն է և, համապատասխանաբար, դիտավորությամբ (կանխամտածված կերպով) մարդուն ապօրինաբար կյանքից զրկելու բացառումը: Նույն հոդվածի համաձայն՝ դիտավորությամբ մեկ ուրիշին կյանքից զրկելն իրավաչափ է միայն օրենքի հիման վրա և միայն օրենքով սահմանված դեպքերում: Այսինքն՝ նշված սահմաններից դուրս կյանքի իրավունքը բացարձակ բնույթ է կրում:

«2–րդ հոդվածը, որը երաշխավորում է կյանքի իրավունքը և սահմանում այն դեպքերը, երբ կյանքից զրկելը կարող է իրավաչափ լինել, Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթներից է, որից բացառություններ կատարել չի թույլատրվում: 3–րդ հոդվածի (խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելք) հետ մեկտեղ այն նաև ամրագրում է Եվրոպայի խորհրդի կազմի մեջ մտնող ժողովրդավարական հասա-

ракությունների հիմնարար արժեքներից մեկը»[1]: ՄԻԵԴ–ն իր վճիռներում քանիցս կրկնել է կյանքի իրավունքի և խոշտանգման ու վատ վերաբերմունքի արգելքի վերաբերյալ այս տեսակետը: Իսկապես, չնայած այն սկզբունքին, որ մարդու բոլոր իրավունքները հավասարապես կարևոր են մարդու արժանավայել կյանքի համար, ակնհայտ է, որ մյուս իրավունքներից ոչ մեկը հնարավոր չէր լինի կիրառել, եթե խախտվեր ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածը, և եթե անձը զրկվեր կյանքից:

Այսպիսով՝ Կոնվենցիայի համաձայն՝ անձի կյանքի իրավունքը կարող է սահմանափակվել. հանրային իշխանությունը շատ բացառիկ հանգամանքներում իրավունք ունի կյանքից զրկելու անձին, ինչը չի համարվի կյանքի իրավունքի խախտում: Եվրոպայում (այսինքն՝ Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններում) մահապատժի վերացումից հետո կյանքի իրավունքի հիմնական սահմանափակումը բխում է ինքնապաշտպանության (կամ մեկ այլ անձի կյանքի պաշտպանության) սկզբունքից կամ օրինական ձերբակալությունն իրականացնելու կամ այլոց համար վտանգավոր ճանաչված անձի փախուստը կանխելու նպատակից: Այնուամենայնիվ, Դատարանը կանոնավոր կերպով կիրառում է համաչափության շատ խիստ գնահատում՝ հաճախ հանգելով եզրակացության, որ իշխանությունների կողմից անձին կյանքից զրկելն անհրաժեշտ չի եղել, ուստի առաջացրել է կյանքի իրավունքի խախտում:

Միևնույն ժամանակ, միջազգային իրավունքը բացարձակ արգելք է սահմանում խոշտանգումների կապակցությամբ: Այսինքն՝ դրանց կիրառումը որևէ պարագայում չի կարող արդարացվել: Միավորված ազգերի կազմակերպությունը դատապարտել է խոշտանգումը՝ հայտարարելով, որ այն հակասում է իր Կանոնադրությանը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներին:

Հավանաբար հենց դա է պատճառը, որ խոշտանգումն արգելված է առաջադեմ բոլոր պետությունների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) ազգային օրենսդրություններով: Ընդ որում՝ նույնիսկ այն

[1] Տես Makaratzis–ն ընդդ. Հունաստանի (գանգատ թիվ 50385/99), 20–ը դեկտեմբերի, 2004 թ., պարբ. 56:

դեպքերում, երբ ազգային օրենսդրությամբ խոշտանգումն ինքնուրույն հանցակազմով քրեականացված չէ, գոյություն ունեն քրեաիրավական այլ նորմեր կամ այլ օրենքներ, որոնց համապատասխան, խոշտանգումներ կիրառողները պատասխանատվության են ենթարկվում: Մինչդեռ, չնայած այս ամենին, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձևերի կիրառումը դեռևս տարածում ունի ողջ աշխարհում:

ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածով սահմանված՝ խոշտանգման և անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը Դատարանը դիտարկում է կյանքի իրավունքին հավասար հարթության վրա, քանզի այն ամրագրում է մարդու արժանապատվության անխախտելիության հիմնարար հայեցակարգը: Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի նպատակն է նվաստացնել մարդու արժանապատվությունը. դրանք նսեմացնում են մարդ արարածին՝ նրան պատճառելով ֆիզիկական կամ հոգեկան ծանր տառապանքներ: Այս արգելքը, իսկապես, գործում է աշխարհի բոլոր պետություններում՝ անկախ մարդու իրավունքներին վերաբերող և նման վերաբերմունքն արգելող համաձայնագրին նրանց մասնակցությունից. այն միջազգային իրավունքի «յուս կոգենս» նորմ է դարձել: Ավելին՝ խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքը խիստ սակավաթիվ «բացարձակ» իրավունքներից է, այսինքն՝ երբևէ հիմնավորված չի կարող լինել դրա որևէ սահմանափակումը: Անգամ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ, օրինակ, վտանգված են բազմաթիվ անձանց կյանքեր, օրինական չէ անձին վատ վերաբերմունքի ենթարկելը:

Խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման վտանգը հատկապես մեծանում է, երբ անձը գտնվում է փակ դռների հետևում՝ զրկված է ազատությունից, ձերբակալված է, նախնական կալանք է կրում կամ հարցաքննվում է: Այս առումով հատկապես խոցելի են այն անձինք, ովքեր անազատության մեջ գտնվելիս զրկված են արտաքին աշխարհի հետ կապից: Բացի այդ՝ նման վերաբերմունքից տուժողների ճնշող մեծամասնությունը գործնական և իրավական լրջագույն խոչընդոտների է հանդիպում, երբ պնդում է, թե ենթարկվել է

խոշտանգման: Նմանապես, ազատազրկման վայրերում կամ իշխանությունների հսկողության տակ գտնվելու ընթացքում մահացածների ընտանիքներին հաճախ դժվար է ապացուցել, որ իրենց հարազատների կյանքի իրավունքը խախտվել է:

Հաշվի առնելով խոշտանգումից և ապօրինաբար կյանքից զրկելուց տուժողների առանձնահատուկ վիճակը՝ ՄԻԵԴ–ը մշակել է որոշակի խիստ չափորոշիչներ, որոնք պետք է կիրառել նման հանցագործությունները քննելիս: Բազմաթիվ դեպքերում, անգամ առանց ՄԻԵԿ–ի 2–րդ կամ 3–րդ հոդվածի նյութական խախտում արձանագրելու, Դատարանը վճռել է, որ Կոնվենցիայի մասնակից պետություններն այդ հոդվածները խախտել են «դատավարական բաղադրիչի» առումով, այսինքն՝ իշխանությունների կողմից սպանության կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների քննությունը չի եղել բավականաչափ արդյունավետ՝ անկախ և անկողմնակալ, անհապաղ, համարժեք, և/կամ չի ապահովվել տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի ներգրավումը:

ՄԻԵԴ–ը բազմիցս է նման եզրակացության հանգել մի շարք պետությունների պարագայում: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Այնուհանդերձ, նման գործերով կիրառվող սկզբունքների առավել հստակ ընկալման դեպքում Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության (այսուհետ նաև՝ ՀՔԾ) քննիչները, իսկ ապագայում նաև նրանց վերահսկող դատախազները, հնարավորություն կունենան խուսափելու ՄԻԵԿ–ի 2–րդ և 3–րդ հոդվածների դատավարական բաղադրիչի խախտումներից, ինչպես նաև անպատժելիության դեմ պայքարում հանդես գալ որպես ակտիվ գործընկերներ:

Սույն ձեռնարկը նախ և առաջ նախատեսված է Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի այն դասընթացավարների համար, ովքեր իրականացնելու են ՀՔԾ–ի ծառայողների վերապատրաստում: Այն կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետությունում նախաքննություն իրականացնող այլ մարմինների, դատական–դատախազական համակարգերի, իրավապահ այլ մարմինների աշխատողների, փաստաբանների, ինչպես նաև իրավա-

բանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասախոսների և քննարկվող հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

Ձեռնարկը պարունակում է թեմայի վերաբերյալ ընդհանուր հիմնարար գիտելիքներ, որոնք լրացվելու են լրացուցիչ գրականության և դատական պրակտիկայի (նախադեպային որոշումների) նյութերի ուսումնասիրությամբ:

## 2. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ԴԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս դասի նպատակն է ընդհանուր գծերով ներկայացնել մարդու իրավունքների ներկայիս միջազգային համակարգը, կոնվենցիաները և ինստիտուտները, մասնավորապես՝ դրա կիրառելիությունը Հայաստանում: Մարդու իրավունքների հիմնական սկզբունքները և եզրութաբանությունը հիշեցնելուց հետո անհրաժեշտ է, որ մասնակիցները խորամուխ լինեն մարդու իրավունքների բնագավառին: Մարդու իրավունքների վերլուծությունն է այն հիմնական գործիքը, որով որոշվում է, թե արդյոք պետության որոշակի գործողություններ առաջացրել են մարդու իրավունքների խախտում, թե ոչ. այն օգնում է պարզաբանելու սահմանափակման ենթակա մարդու իրավունքների և մարդու բացարձակ իրավունքների տարբերությունը:

### ԹԵՄԱ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Լայն իմաստով՝ Հայաստանի համար մարդու իրավունքների համապատասխան շրջանակներն են Միավորված ազգերի կազմակերպության միջազգային համակարգը և Եվրոպայի խորհրդի եվրոպական համակարգը:

Միավորված ազգերի կազմակերպության համակարգում Հայաստանը որպես պետություն միացել է մարդու իրավունքների հետևյալ համաձայնագրերին.

| Համաձայնագիր | Ստորագրում | Վավերացում / Միացում (ա) |
|---|---|---|
| CAT – Խոշտանգման և դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ այլ վերաբերմունքի կամ պատժի դեմ պայքարի կոնվենցիա | | 13 սեպտ., 1993 (ա) |
| CAT–OP – Խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի կամընտիր արձանագրություն | | 14 սեպտ., 2006 (ա) |
| CCPR – Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր | | 23 հունիս, 1993 (ա) |
| CCPR–OP2–DP – Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրություն՝ ուղղված մահապատժի վերացմանը | | |
| CED – Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիա | 10 ապր., 2007 | 24 հունվ., 2011 |
| CEDAW – Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա | | 13 սեպտ., 1993 (ա) |
| CERD – Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա | | 23 հունիս, 1993 (ա) |
| CESCR – Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր | | 13 սեպտ., 1993 (ա) |

| | | |
|---|---|---|
| CMW – Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա | 26 սեպտ., 2013 | |
| CRC – Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա | | 23 հունիս, 1993 (ա) |
| CRC–OP–AC – Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը զինված ընդհարումներին երեխաների ներգրավման մասին | 24 սեպտ., 2003 | 30 սեպտ., 2005 |
| CRC–OP–SC – Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի վաճառքի մասին | 24 սեպտ., 2003 | 30 հունիս, 2005 |
| CRPD – Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա | 30 մարտ, 2007 | 22 սեպտ., 2010 |

Հայաստանը կամ վավերացրել է դրանք, կամ միացել դրանց:

Վավերացումը միջազգային գործողություն է, որով պետությունն արտահայտում է իր համաձայնությունը՝ կրելով տվյալ համաձայնագրով սահմանված պարտավորությունները, եթե մասնակիցները մտադիր են եղել այդ գործողությամբ ցույց տալու իրենց համաձայնությունը: Վավերացման ինստիտուտը պետություններին անհրաժեշտ ժամանակ է տալիս համաձայնագրի համար անհրաժեշտ ներպետական հաստատումը ստանալու և համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական օրենսդրությունն ընդունելու համար:

*Տես Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 2–րդ հոդվածի (1)(բ) կետը, 14–րդ հոդվածի (1)–ին կետը և 16–րդ հոդվածը*

Միանալը գործողություն է, որով պետությունն ընդունում է այլ պետությունների կողմից արդեն բանակցված և ստորագրված համաձայնագրին մասնակից դառնալու առաջարկը կամ հնարավորությունը: Այն իրավական նույն ուժն ունի, ինչ վավերացումը: Միանալը սովորաբար տեղի է ունենում համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո: Միանալու պայմանները և ընթացակարգը կախված են տվյալ համաձայնագրի դրույթներից:

*Տես Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 2–րդ հոդվածի (1)(բ) կետը և 15–րդ հոդվածը*

Վերոհիշյալ հիմնական համաձայնագրերից յուրաքանչյուրի համար գործում է համաձայնագրի մարմինը տարաբնույթ լիազորություններով, օրինակ՝ պետությունների զեկույցների պարբերական ուսումնասիրությունը, անհատական կամ միջպետական բողոքների ստացումը և/կամ հարցման ընթացակարգերը՝ կախված տվյալ մասնակից պետության ընդունման հանգամանքից:

Հայաստանն ընդունել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (ՔՔԻՄԴ) և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով (ԿԽՎԿ) նախատեսված անհատական բողոքների ընթացակարգը: Դա նշանակում է, որ ՔՔԻՄԴ–ի մարմինը՝ Մարդու իրավունքների հանձնաժողովը, ինչպես նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը կարող են բողոքներ ստանալ այն անհատներից, ովքեր իրավական դժգոհություն ունեն Հայաստանի իշխանությունների գործողություններից կամ անգործությունից: Այդ մարմինների՝ դատականին շատ նմանվող որոշումների կատարումը, սակայն, կախված է համապատասխան պետությունից: Նշված հանձնաժողովները դեռևս

ըստ էության չունեն Հայաստանի վերաբերյալ կայացված որոշումներ[2]:

Ավելին՝ Հայաստանն ընդունել է Խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայով (CAT), Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիայով (CED) և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով սահմանված հարցման ընթացակարգերը: Հետևելով CAT–ի օրինակին՝ դա նշանակում է, որ Խոշտանգման դեմ պայքարի հանձնաժողովը (Committee Against Torture) իրավունք ունի հարցում կատարելու՝ ներառյալ այցելություն համապատասխան մասնակից պետություն, եթե ստացել է արժանահավատ տեղեկություններ, որոնք ըստ երևույթին պարունակում են հիմնավոր տվյալներ այն մասին, որ տվյալ պետության տարածքում խոշտանգման համակարգային պրակտիկա գոյություն ունի (CAT–ի 20–րդ հոդված):

Ի վերջո՝ Հայաստան են այցելել Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի մի շարք, այսպես կոչված, «հատուկ ընթացակարգեր», որոնք տեղում գնահատում են մարդու որոշակի իրավունքների հետ կապված իրավիճակը և հանձնարարականներ են տալիս իշխանություններին: Վերջին շրջանում Հայաստան են այցելել Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի հարցերով հատուկ զեկուցողը, Կամայական ազատազրկման հարցերով աշխատանքային խումբը և Իրավապաշտպանների վիճակի հարցերով հատուկ զեկուցողը:

2001 թվականի հունվարի 25–ին Հայաստանն անդամակցեց Եվրոպայի խորհրդին: Ներկայումս Եվրոպայի խորհրդի կազմում են 47 եվրոպական պետություններ: Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար դիմելիս Հայաստանը պարտավորվեց նաև վավերացնել կազմակերպության կարևորագույն համաձայնագրերը մարդու իրավունքների ոլորտում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, որը առավել քա-

[2] Տես Խաչատրյանն ընդդ. Հայաստանի գործը (ծանուցում թիվ 1056/2002, որոշումը՝ 28–ը հոկտեմբերի, 2005 թ.), որը վերաբերում էր արդար դատաքննության խնդիրներին և անընդունելի ճանաչվեց Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից:

ջածանոթ է որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ)։ ՄԻԵԿ–ը ստորագրման համար բացվեց Հռոմում 1950 թվականի նոյեմբերի 4–ին և ուժի մեջ մտավ 1953 թվականին։ Այն առաջին փաստաթուղթն էր, որով կյանքի կոչվեցին և պարտադիր ուժ ստացան Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով նախատեսված որոշ իրավունքներ։ 1950 թվականից՝ ընդունումից ի վեր, Կոնվենցիան մի քանի անգամ փոփոխվել է, և սկզբնական տեքստում տեղ գտած իրավունքներին ավելացվել են մի շարք այլ իրավունքներ։

Կոնվենցիայի կարևորությունը պայմանավորված է ոչ միայն դրանով պաշտպանվող մարդու իրավունքներով, այլ նաև Ստրասբուրգում ստեղծված պաշտպանական մեխանիզմով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանով (ՄԻԵԴ կամ Դատարան), որը քննում է ենթադրյալ խախտումները և ապահովում Կոնվենցիայով ստանձնված պարտավորությունների կատարումը պետությունների կողմից։

2002 թվականից ի վեր, երբ ՄԻԵԿ–ը վավերացվեց Հայաստանի կողմից, ՄԻԵԴ–ը պարտադիր ուժ ունեցող 60 դատավճիռներ է կայացրել Հայաստանի դեմ ներկայացված բողոքների հիման վրա՝ դատավճիռներից 55–ում արձանագրելով ՄԻԵԿ–ում զետեղված այս կամ այն իրավունքի առնվազն մեկ խախտում։ Դատավճիռների մեծ մասը վերաբերում է ազատության և անձեռնմխելիության իրավունքին (ՄԻԵԿ–ի 5–րդ հոդված) և արդար դատաքննության իրավունքին (ՄԻԵԿ–ի 6–րդ հոդված), ինչպես նաև սեփականության պաշտպանությանը (ՄԻԵԿ–ի 1–ին արձանագրության 1–ին հոդված)։ Մի շարք դատավճիռներում արձանագրվել են նաև խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքի (ՄԻԵԿ–ի 3–րդ հոդված) խախտումներ։

ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻԵԿ–ի 34–րդ հոդվածի համաձայն՝ Դատարանն իրավունք ունի բողոքներ ստանալու ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որը պնդում է, որ տուժել է Կոնվենցիայով կամ դրա արձանագրություններով ամրագրված

իրավունքների՝ Մասնակից պետության կողմից խախտման հետևանքով:

Բողոքների ընդունելիության չափանիշները սահմանված են ՄԻԵԿ–ի 35–րդ հոդվածում: Դատարանն իրավունք ունի խնդիրը քննելու միայն ներպետական բոլոր ատյանների սպառումից հետո, ընդ որում՝ վերջնական որոշման կայացման ամսաթվից հետո վեցամսյա ժամանակահատվածում: Դատարանը չի քննում անանուն բողոքները կամ այնպիսի դիմումները, որոնք էականորեն նույնն են, ինչ Դատարանի կողմից նախկինում արդեն իսկ քննված խնդիրը, կամ որոնք արդեն ներկայացվել են համեմատելի մեկ այլ միջազգային ընթացակարգի շրջանակում: Դատարանն անընդունելի է ճանաչում այն բողոքները, որոնք անհամատեղելի են ՄԻԵԿ–ի դրույթներին, ակնհայտորեն անհիմն են կամ պարունակում են անհատական բողոքի իրավունքի չարաշահում:

ՄԻԵԿ–ից և վերջինիս արձանագրություններից զատ՝ Հայաստանն առ այսօր վավերացրել է նաև Եվրոպայի խորհրդի մոտ 40 համաձայնագրեր և լրացուցիչ արձանագրություններ, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ժողովրդավարությանը և իրավունքի գերակայությանը[3]՝ ներառյալ Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան (ԽԿԵԿ կամ CPT), որով ստեղծվել է Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովը (ԽԿՀ կամ CPT): ԽԿՀ–ն պարբերական (հերթական և արտահերթ) այցելություններ է կատարում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ՝ ներառյալ Հայաստան, և գաղտնի զեկույցներ է ներկայացնում իր բացահայտումների և հանձնարարականների վերաբերյալ, որոնց նպատակն է ամրապնդել ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի բոլոր ձևերի կանխարգելումը:

[3] Այդ համաձայնագրերը ներառում են, օրինակ, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ:

## ԹԵՄԱ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքները կարելի է դասակարգել տարբեր եղանակներով: Օրինակ՝ դրանք կարելի է խմբավորել որպես քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքներ կամ որպես անհատական կամ կոլեկտիվ իրավունքներ: Ավելին՝ կան իրավունքներ, որոնցից հնարավոր են շեղումներ (դերոգացիաներ) արտակարգ իրավիճակներում, սակայն կան նաև անշեղելի իրավունքներ:

ՄԻԵԿ–ի 15–րդ հոդվածը
*Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում*

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:
2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2–րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ կամ 3–րդ հոդվածի, 4–րդ հոդվածի 1–ին կետի և 7–րդ հոդվածի դրույթներից:
3. […]

Ավելին՝ մարդու իրավունքները կարող են լինել «բացարձակ» իրավունքներ կամ սահմանափակման ենթակա իրավունքներ: Մարդու իրավունքների ճնշող մեծամասնությունը ենթակա է սահմանափակման: Ի հակադրություն՝ խիստ սակավաթիվ են բացարձակ իրավունքները, որոնք *չեն կարող սահմանափակվել* որևիցե պարագայում: Մարդու առավել նշանակալի բացարձակ իրավունքներն են խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը և ստրկության արգելքը: Դա նշանակում է, որ ոչ ոք որևիցե պարագայում չի կա-

րող խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկվել կամ պահվել ստրկության մեջ:

Մյուս իրավունքները, սակայն, կարող են սահմանափակվել միմիայն որոշակի սկզբունքների պահպանմամբ, որոնք համառոտ ամրագրված են ՄԻԵԿ–ում զետեղված մի շարք իրավունքներում: Մասնավոր և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի համար (ՄԻԵԿ–ի 8–րդ հոդված), օրինակ, համապատասխան հոդվածի երկրորդ մասում նախատեսվում է, որ «չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

ՄԻԵԴ–ը կանոնավոր կերպով կոնկրետ գործերի նկատմամբ կիրառում է այս կամ նմանաբնույթ այլ սահմանափակող նորմերում ամրագրված չափանիշը՝ թեստը[4], որի միջոցով որոշում է, թե արդյոք պետությունը խախտել է դիմողի մեկ կամ ավելի իրավունքներ: ՄԻԵԴ–ում գործին ընթացք տալու համար բողոքը ներկայացնողը պետք է ընդամենը հիմնավորի, որ իր գործով տեղի է ունեցել միջամտություն ՄԻԵԿ–ով պաշտպանվող իրավունքի նկատմամբ: Այնուհետև պետությունն է կրում միջամտության օրինականությունը և Կոնվենցիայի համաձայն հիմնավորվածությունն ապացուցելու պարտավորությունը՝ բեռը: Այսպիսով՝ Դատարանն առաջին հերթին պետք է պարզի, թե արդյոք կոնկրետ խնդիրը տեղավորվում է Կոնվենցիայով նախատեսված **մարդու իրավունքի շրջանակի** մեջ: ՄԻԵԴ–ը, որպես կանոն, լայն մեկնաբանություն է տալիս ՄԻԵԿ–ով նախատեսված իրավունքներին. օրինակ՝ Դատարանը համարել է, որ շրջակա միջավայրի ծանր աղտոտումը ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի հիման վրա առաջացնում է մասնավոր

[4] Խնդրում ենք օգտագործել Մարդու իրավունքների վերլուծության գործիքը, որը զետեղված է հավելվածում:

և ընտանեկան կյանքի իրավունքին առնչվող խնդիրներ (տե՛ս *López Ostra–ն ընդդ. Իսպանիայի*, գանգատ թիվ 16798/90, 9 դեկտեմբեր, 1994 թ.): Ավելին՝ Դատարանը պետք է համոզվի, որ գոյություն ունի մարդու իրավունքի նկատմամբ «**միջամտություն**»: Պետության գործողությունը կամ անգործությունը, անգամ օրենքները կարող են մարդու իրավունքների նկատմամբ միջամտություն առաջացնել:

Այնուհետև ՄԻԵԴ–ը հետևյալ սկզբունքների կիրառությամբ պարզում է, թե արդյոք միջամտությունը հասել է մարդու իրավունքի խախտման, թե ոչ.

• **Օրինականություն:** Որպեսզի կանխվի կամայականությունը, մարդու իրավունքների նկատմամբ կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով: Օրենքը պետք է բավարար չափով հասանելի լինի. անձը պետք է ի վիճակի լինի համարժեքորեն իմանալու տվյալ հանգամանքներում կոնկրետ գործի նկատմամբ կիրառելի իրավական կանոնները: Ավելին՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն բավականաչափ ճշգրտորեն ձևակերպված չէ, որպեսզի անձն ի վիճակի լինի կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է ի վիճակի լինի տվյալ հանգամանքներին բնորոշ ողջամտության սահմաններում կանխատեսելու կոնկրետ գործողության հնարավոր հետևանքները [*Sunday Times–ն ընդդ. Միացյալ Թագավորության*, գանգատ թիվ 6538/74, 26 ապրիլ, 1979 թ.]:

• **Իրավաչափ նպատակ:** Պետական իշխանությունները չեն կարող մարդու իրավունքի նկատմամբ միջամտությունը հիմնավորելու համար մեջբերել կամայական նպատակ: ՄԻԵԿ–ում թվարկված են իրավաչափ նպատակները, այսինքն՝ այն կարևոր իրավական շահերը, որոնք հետապնդելիս կարելի է սահմանափակել նշված իրավունքները: Այնուհանդերձ, այդ թվարկումը բավական ընդհանրական է (օրինակ՝ ազգային անվտանգություն, հանրային անվտանգություն, հասարակական կարգ, առողջություն կամ բարոյականություն, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանություն):

• **Անհրաժեշտություն և համաչափություն:** Մարդու իրավունքների նկատմամբ միջամտությունները պետք է սահմանափակվեն նրանցով, որոնք անհրաժեշտ են իրավաչափ նպատակի հասնելու համար:

Դրանք պետք է համահունչ լինեն «հրատապ սոցիալական կարիքին»: Ավելին՝ դրանք պետք է անհրաժեշտ լինեն «ժողովրդավարական հասարակությունում», այսինքն՝ բացառվում են այն միջոցառումները, որոնք չեն կարող համատեղելի համարվել ժողովրդավարությանը: Միջոցառումը պետք է համահունչ լինի հետապնդվող նպատակին: Եթե միևնույն նպատակին հասնելու համար առկա են նվազ ներխուժող այլընտրանքներ, ապա պետք է կիրառվեն առավել մեղմ միջոցառումները: Հետապնդվող նպատակը պետք է համաչափ լինի այն վնասին, որը պատճառվում է իրավունքի սահմանափակմամբ. որքան ավելի ծանր է միջոցառման վնասակար հետևանքը, այնքան ավելի կարևոր պետք է լինի նպատակը, որպեսզի միջոցառումը հիմնավորված համարվի:

## ԴԱՍ 2. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Այս դասի նպատակն է մասնակիցներին ներկայացնել կյանքի իրավունքի տարաբնույթ բաղադրիչները: Ընդ որում՝ անհրաժեշտ է անդրադառնալ նաև այնպիսի բարդ խնդիրների, որոնք առնչվում են մահապատժի վերացմանը, հղիության արհեստական ընդհատմանը և էվթանազիային: Ավելին՝ ՄԻԵԿ–ի և ՄԻԵԴ–ի դատական նախադեպի հիման վրա պետք է ներկայացնել կյանքի իրավունքն օրինական կարգով սահմանափակելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, միջազգային չափանիշներից զատ, պետք է ներկայացնել խնդրո առարկային վերաբերող ազգային օրենքները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ինչպես նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», «Ոստիկանության մասին», «Ոստիկանության զորքերի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Զենքի մասին», «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Մարդու իմունային անբավարարության վիրուսի հիվանդության կանխարգելման մասին», «Արտակարգ իրավիճակ-

ներում բնակչության պաշտպանության մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքները և ՀՀ Կառավարության 2004 թ. «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 1116–Ն ու 1998 թ. «Բժշկական ամլացումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 425 որոշումները: Ի վերջո՝ մասնակիցները կուսումնասիրեն կյանքի իրավունքից բխող՝ պետության տարբեր պարտավորությունները:

## ԹԵՄԱ 1. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ՄԱԿ–ի Մարդու իրավունքների հանձնաժողովի թիվ 6 ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ կյանքի իրավունքը «Հիմնարար իրավունք է, որից շեղումներ չեն թույլատրվում…»:

«ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածը Կոնվենցիայի առավել հիմնարար դրույթներից է»:
(ՄԻԵԴ, *McCann–ը և այլք ընդդ. ՄԹ–ի,* գանգատ թիվ 18984/91, 27 սեպտեմբեր, 1995 թ.)

Չնայած այն փաստին, որ ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքը Կոնվենցիայի առավել հիմնարար դրույթներից է, որից շեղումներ չեն թույլատրվում (ՄԻԵԿ–ի 15–րդ հոդված), այն բացարձակ իրավունք չէ: 2–րդ հոդվածի երկու մասերը պարունակում են այն հանգամանքները, որոնցում կյանքից զրկելը կարող է հիմնավորված և օրինական լինել:

ՄԻԵԿ–ի 2–րդ հոդված

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ) օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ) խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

Կյանքի աստվածատուր իրավունքից առաջին ակնհայտ բացառությունը մահապատժին վերաբերող դրույթն է: 1950 թվականին, երբ 12 պետություններ ստորագրեցին ՄԻԵԿ–ը, նրանցից միայն 4–ն էին վերացրել մահապատիժը (Գերմանիա, Դանիա, Իսլանդիա և Իտալիա): 2–րդ հոդվածում մահապատժին վերաբերող բացառության մասին դրույթը չներառելը թերևս զգալիորեն կարգելակեր Կոնվենցիայի բանակցությունները[5]:

ՄԻԵԴ–ը տարիներ շարունակ մահապատժին առնչվող խնդիրները քննության չէր առնում 2–րդ հոդվածի ներքո: Այնուհանդերձ, 1980–ականների վերջերին այն սկսեց խնդիրը քննության առնել ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի ներքո (խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը): Հանելուկային փաստն այն էր, որ Դատարանն առանց առանձնակի դժվարության 3–րդ հոդվածի խախտում էր համարում համեմատաբար ոչ ծանր մարմնական՝ ֆիզիկական պատիժը (*Tyrer–ն ընդդ. Միացյալ Թագավորության*, գանգատ թիվ 5856/72, 25 ապրիլ, 1978 թ.)՝ միևնույն ժամանակաշրջանում սկզբում չկարողանալով այդպիսի եզրակացության հանգել ֆիզիկական պատժի թերևս վատթարագույն ձևի՝ մահապատժի կապակցությամբ: 1989 թվականին քննելով մի գործ, որը վերաբերում էր անձին Ամերիկայի Միացյալ Նահանգներ հանձնելուն, որտեղ նա հավանաբար ենթարկվելու էր մահապատժի, ՄԻԵԴ–ը վճռեց.

[5] Jean–Paul Costa, The right to respect for life and the abolition of the death penalty, in The Right to Life under Article 2 of the European Convention on Human Rights. Twenty Years of Legal Developments since McCann v. the United Kingdom. Wolf Legal Publishers, Oisterwijk, 2016, pp. 9–16, at p. 11.

[ո]րևէ բանտարկյալի մահվան դատապարտելու պարագայում անխուսափելի են պատժի նշանակումից մինչև ի կատար ածումը որոշակի ձգձգումը և խիստ ռեժիմում ազատազրկման համար անհրաժեշտ պայմաններից բխող ուժեղ սթրեսի կենսափորձը: […] Մահապատժի ի կատար ածմանը սպասող ազատազրկվածների աջակցության համար առկա են ծառայություններ, մասնավորապես՝ հոգեբանական և հոգեբուժական ծառայություններ:

Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ հաշվի առնելով նման ծայրահեղ պայմաններում մահապատժի ի կատար ածմանը սպասելու վրա ծախսվող շատ տևական ժամանակը և մահապատժի ի կատար ածմանը սպասելու հանգամանքով պայմանավորվող մշտական և ծանրացող տառապանքը, ինչպես նաև գանգատաբերի անձնական հանգամանքները՝ հատկապես տարիքը և հանցանքը կատարելու պահին նրա հոգեվիճակը, գանգատաբերին ԱՄՆ հանձնելու դեպքում վերջինիս համար կառաջանա 3–րդ հոդվածով սահմանված նվազագույն շեմը գերազանցող վերաբերմունքի ռիսկ:

*Soering–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 14038/88, 7 հուլիս, 1989 թ.*

Դատարանի նախադեպի զարգացումներին զուգահեռ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները համաձայնեցրին Կոնվենցիայի երկու լրացուցիչ արձանագրություններ, որոնցով Եվրոպայում արգելվեց մահապատիժը: 6–րդ արձանագրությունը (ընդունվեց 1983 թվականին և ուժի մեջ մտավ 1985–ին) ընդհանուր իմաստով վերացրեց մահապատիժը, սակայն պետություններին հնարավորություն վերապահեց կիրառելու այդ պատժատեսակը պատերազմի կամ դրա անմիջական սպառնալիքի ժամանակ: 2002 թվականին ընդունված և 2003 թվականից ուժի մեջ մտած 13–րդ արձանագրությամբ վերջնականապես և բոլոր հանգամանքներում վերացվեց մահապատիժը: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները, բացառությամբ Ռուսաստանի Դաշնության, որտեղ գործում է մահապատժի փաստացի մորատորիումը, վավերացրել են 6–րդ արձանագրությունը: 13–րդ արձանագրությունը

դեռևս չի վավերացվել Հայաստանի (որն այն ստորագրել է 2006 թվականին), Ադրբեջանի և Ռուսաստանի կողմից: Այնուամենայնիվ, Եվրոպան, բացառությամբ Բելառուսի, որը Եվրոպայի խորհրդի անդամ պետություն չէ, կարող է համարվել մահապատժից զերծ տարածաշրջան:

Նոր հազարամյակում ՄԻԵԴ–ի դատական նախադեպը նույնպես մահապատժի հարցում ավելի կտրուկ դարձավ: Այս առումով ուշադրության արժանի գործ է *Öcalan–ն ընդդ. Թուրքիայի* գործը (գանգատ թիվ 46221/99, 12 մայիս, 2005 թ.), որի շրջանակում Դատարանի Մեծ պալատը 2005 թվականին հայտարարեց, որ «խաղաղության օրոք մահապատիժն արդեն համարվում է պատժի անընդունելի, եթե ոչ՝ անմարդկային ձև, որն այլևս թույլատրելի չէ 2–րդ հոդվածի ներքո»:

Ի վերջո՝ *Bader–ը և Kanbor–ն ընդդ. Շվեդիայի* գործի (գանգատ թիվ 13284/04, 8 նոյեմբեր, 2005 թ.) շրջանակում Դատարանը քննարկեց Սիրիա վտարելու հնարավորությունը, որտեղ գանգատաբերներից մեկի համար առկա էր մահապատժի ենթարկվելու իրական ռիսկ՝ ի խախտումն ՄԻԵԿ–ի 2–րդ և 3–րդ հոդվածների, ընդ որում՝ Դատարանն անգամ չանդրադարձավ «մահապատժի ի կատար ածմանը սպասելու երևույթին», որը վճռորոշ գործոն էր եղել *Soering*–ի գործով ավելի վաղ կայացված որոշման համար:

Նմանապես, ինչպես նաև լրացուցիչ հղում կատարելով ՄԻԵԿ–ի թիվ 6 արձանագրության 1–ին հոդվածին՝ Դատարանը *Al Nashiri–ն ընդդ. Լեհաստանի* գործով (գանգատ թիվ 28761/11, 24 հուլիս, 2014 թ.) վճռեց, որ Լեհաստանը խախտել է Կոնվենցիայի 2–րդ և 3–րդ հոդվածները՝ Կոնվենցիայի թիվ 6 արձանագրության 1–ին հոդվածի հետ միասին վերցրած, քանի որ ԱՄՆ–ի Հետախուզության կենտրոնական վարչությանը հնարավորություն է ընձեռել գանգատաբերին տեղափոխելու Գվանտանամոյի ափում գործող՝ ԱՄՆ–ի ռազմական հանձնաժողովի իրավազորության ներքո: Գանգատաբերը Լեհաստանի տարածքում ենթադրաբար պահվել էր ԱՄՆ–ի Հետախուզության կենտրոնական վարչության գաղտնի օբյեկտում, որից հետո «արտակարգ ի կատար ածման» թռիչքով տեղափոխվել էր Գվանտանամոյի ափ, որտեղ կրել էր դատավարությունից հետո մահապատժի դատապարտման ռիսկ:

Ինչ վերաբերում է ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածի ներքո դիտարկվող այլ իրավիճակներին, օրինակ՝ ակտիվ կամավոր էվթանազիային կամ ինքնասպանությանը նպաստելուն, ինչպես նաև հղիության արհեստական ընդհատմանը, ապա Դատարանը նախկինում հիմնականում թողել է, որպեսզի պետություններն իրենք քաղաքականություններ և օրենսդրություն մշակեն այս ոլորտներում, քանի որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները կոնսենսուսի չեն հանգել վերարտադրողական իրավունքների հարցում կամ անձի՝ սեփական կյանքին վերջ դնելու եղանակը և ժամանակն ընտրելու իրավունքի հարցում: Այլ կերպ ասած՝ ՄԻԵԴ–ը «հայեցողության լայն շրջանակ» է վերապահել հղիության արհեստական ընդհատման կամ էվթանազիայի/աջակցությամբ ինքնասպանության հարցերի կապակցությամբ քննվող գործերի շրջանակում:

Ավելին՝ Դատարանն իր քննած գործերում այդ հարցերը հիմնականում դիտարկել է ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի (մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունք), այլ ոչ 2–րդ հոդվածի ներքո: Ինչ վերաբերում է աջակցությամբ ինքնասպանությանը/էվթանազիային, ապա Դատարանը *Pretty–ն ընդդ. Միացյալ Թագավորության* գործով (գանգատ թիվ 2346/02, 29 April 2002) ուղղակիորեն նշեց հետևյալը.

> Դատարանի քննած բոլոր գործերի շրջանակում հետևողականորեն ընդգծվել է կյանքը պաշտպանելու՝ պետության պարտավորությունը: Դատարանը չի համոզվել, որ 2–րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքը կարող է մեկնաբանվել որպես նեգատիվ պարտավորություն: Կոնվենցիայի 11–րդ հոդվածի համատեքստում, օրինակ, վճռվել է, որ միավորման ազատությունը ներառում է ոչ միայն միությանը միանալու իրավունքը, այլ նաև միությանը միանալուն չհարկադրվելու համարժեք իրավունքը, և Դատարանը նկատել է, որ ազատության հասկացությունը ներառում է նաև դրանից օգտվելու հարցում որոշակի ընտրություն […] Կոնվենցիայի 2–րդ հոդվածն այլ ձևակերպում ունի: Այն չի վերաբերում կենսամակարդակի խնդիրներին կամ սեփական կյանքում անձի կողմից կատարվող ընտրություններին: Այնքանով, որքանով դրանք մարդու վիճակի համար այնքան հիմնարար են համարվում, որ պետք է

պաշտպանվեն պետության միջամտությունից, դրանք կարող են արտացոլվել Կոնվենցիայի այլ հոդվածներով երաշխավորված իրավունքների կամ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային այլ փաստաթղթերի մեջ: 2–րդ հոդվածն առանց լեզվի աղավաղման չի կարող մեկնաբանվել որպես տրամագծորեն հակառակ իրավունք, այն է՝ մահանալու իրավունքը վերապահող դրույթ: Այն նաև չի կարող ինքնորոշման իրավունք առաջացնել՝ անձին կյանքի փոխարեն մահն ընտրելու իրավունքը վերապահելու իմաստով:

Գանգատաբերը, որ տառապում էր անբուժելի և դեգեներատիվ հիվանդությամբ, պնդում էր, թե իր պարագայում խախտվել են Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքները, քանի որ Պետական դատախազության տնօրենը հրաժարվել է խոստանալուց, որ քրեական հետապնդում չի իրականացնի գանգատաբերի ամուսնու նկատմամբ, եթե վերջինս աջակցի գանգատաբերին վերջինիս կյանքին վերջ դնելու գործում, և որ Անգլիայի գործող օրենսդրության համաձայն՝ ինքնասպանությանն աջակցելն իր պարագայում համարվում էր քրեական հանցագործություն:

Այնուամենայնիվ, էվթանազիայի/աջակցությամբ ինքնասպանության հետ կապված այդ և հետագա գործերի շրջանակում Դատարանը ձևավորեց այն կարծիքը, թե «եթե անձն ի վիճակի է ազատորեն որոշում կայացնելու տվյալ հարցում և համապատասխան քայլեր ձեռնարկելու դրա հիման վրա, ապա սեփական կյանքին վերջ դնելու միջոցները և ժամանակն ընտրելու՝ անհատի իրավունքը մասնավոր կյանքի հարգման իրավունքի տարրերից է Կոնվենցիայի 8–րդ հոդվածի իմաստով» (համեմատության համար տե՛ս, օրինակ, *Haas–ն ընդդ. Շվեյցարիայի*, գանգատ թիվ 31322/07, 20 հունվար, 2011 թ.):

Նմանապես, Դատարանը հղիության արհեստական ընդհատմանն առնչվող գործերը նույնպես դիտարկել է ՄԻԵԿ–ի 8–րդ, այլ ոչ 2–րդ հոդվածի ներքո, որպես մայրերի և հայրերի մասնավոր և ընտանեկան կյանքին վերաբերող խնդիր, այլ ոչ որպես դեռևս չծնվածի կյան-

քի իրավունքի խնդիր[6]: *Vo–ն ընդդ. Ֆրանսիայի* գործով (գանգատ թիվ 53924/00, 8 հուլիս, 2004 թ.) ՄԻԵԴ–ը վճռեց հետևյալ կերպ.

> […] չծնված երեխան չի համարվում Կոնվենցիայի 2–րդ հոդվածով ուղղակիորեն պաշտպանվող «անձ», և եթե չծնվածն ունի «կյանքի իրավունք», ապա դա անուղղակիորեն սահմանափակված է մոր իրավունքներով և շահերով: Կոնվենցիայի կառույցները, սակայն, չեն բացառել որոշակի հանգամանքներում երաշխիքների գործողությունը նաև չծնված երեխայի նկատմամբ տարածելու հնարավորությունը: […] 8–րդ հոդվածի 1–ին մասը չի կարող մեկնաբանվել այնպես, որ ստացվի, թե հղիությունը և դրա ընդհատումը սկզբունքորեն բացառապես մոր մասնավոր կյանքի հարցեր են […]: Այդ գործերի ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ տվյալ խնդիրը լուծելու համար մշտապես կշեռքի նժարներին են դրվել տարբեր, երբեմն էլ հակադիր իրավունքներ կամ ազատություններ, որոնք կինը, մայրը կամ հայրն ունեն միմյանց կամ չծնված երեխայի նկատմամբ:

ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածի 2–րդ մասում, որպես կյանքի իրավունքի սահմանափակումներ, ուղղակիորեն նշված են ինքնապաշտպանության և ուրիշների պաշտպանության հասկացությունները, ինչպես նաև մահաբեր պոտենցիալ ունեցող ուժի գործադրումը ձերբակալում իրականացնելու կամ կալանավորված անձի փախուստը կանխելու համար կամ խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով:

Այնուհանդերձ, այդ բացառություններն իշխանություններին «ամեն ինչ անելու իրավունք» չեն ընձեռում թվարկված նպատակներից որևէ մեկը հետապնդելիս: Ընդհակառակը, ՄԻԵԴ–ը կանոնավոր կերպով շատ խիստ թեստ է կիրառել՝ պարզելու համար, թե արդյոք պետության կողմից մահաբեր ուժի կիրառությունը եղել է բացարձակապես

[6] Այնուհանդերձ, այս առումով անհրաժեշտ է համեմատության մեջ դիտարկել Մարդու իրավունքների միջամերիկյան կոնվենցիայի 4–րդ հոդվածը. «Յուրաքանչյուր ոք ունի իր կյանքի հարգման իրավունք: Այս իրավունքը պետք է պաշտպանված լինի օրենքով, ընդ որում՝ այն պետք է ընդհանուր առմամբ պաշտպանված լինի բեղմնավորման պահից: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից»:

անհրաժեշտ և համաչափ: Այս կապակցությամբ առաջատար գործը *McCann–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* գործն է (գանգատ թիվ 18984/91, 27 սեպտեմբեր, 1995 թ.), որով Դատարանը վճռեց, որ 2–րդ հոդվածը թույլ է տալիս բացառություններ անել կյանքի իրավունքից միայն այն դեպքում, երբ դա «բացարձակապես անհրաժեշտ» է.

> Երբ որոշվում է, թե արդյոք պետության գործողությունը Կոնվենցիայի 8–րդ և 11–րդ հոդվածների 2–րդ մասերի իմաստով «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում», պետք է կիրառել անհրաժեշտության սովորաբար կիրառվող ստուգողական չափանիշից ավելի խիստ և ավելի համոզիչ չափանիշ:
>
> *McCann–ն ընդդ. Միացյալ Թագավորության*

Նշված գործի շրջանակում Դատարանն արձանագրեց կյանքի իրավունքի խախտում, քանի որ գործողությունը, որի ընթացքում Օդային հատուկ ծառայության զինվորները կրակելով սպանել էին Իռլանդական հանրապետական բանակի (IRA) երեք անդամների, ովքեր կասկածվում էին իրենց մոտ ռումբ պայթեցնող հեռակառավարման սարք պահելու մեջ, կարող էր պլանավորված և վերահսկված լինել այնպես, որպեսզի անհրաժեշտ չլիներ սպանել կասկածյալներին: Պարտադիր չէ, որ այնպիսի ուժի գործադրումը, որը կարող է մահվան հանգեցնել, թույլատրված լինի ազգային օրենսդրությամբ, սակայն ոստիկանական օպերացիաները պետք է բավարար չափով կարգավորված լինեն ազգային օրենսդրությամբ, կամայականությունը և ուժի գործադրումը բացառող համարժեք և արդյունավետ երաշխիքների համակարգի շրջանակում, որը երաշխիքներ կպարունակի անգամ այնպիսի պատահարները կանխելու համար, որոնցից հնարավոր է խուսափել: Դատարանը նախկինում անդրադարձել է այն հարցին, թե արդյոք ոստիկանական գործողությունը իշխանությունների կողմից ծրագրվել և վերահսկվել է այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվեն մահաբեր ուժի կիրառությունը և մարդկային կյանքի կորուստը, և թե արդյոք գործողության անվտանգության միջոցները և մեթոդներն ընտրելիս ձեռնարկվել են նախազգուշական բոլոր հնարավոր քայլերը:

McCann–ի գործից մի փոքր տարբերվող, սակայն նմանօրինակ գործ է չեչեն անջատողականների կողմից Մոսկվայի «Դուբրովկա» թատրոնում 2002 թվականին պատանդներ վերցնելու գործը (*Finogenov–ը և այլք ընդդ. Ռուսաստանի*, գանգատներ թիվ 18299/03 և 27311/03, 20 դեկտեմբեր, 2011 թ.): Թեպետ Դատարանը գտավ, որ պատանդներին առնչվող ճգնաժամը ուժով և գազի կիրառությամբ հաղթահարելու մասին իշխանությունների որոշումը տվյալ հանգամանքներում հիմնավորված է եղել, այն վճռեց, որ 2–րդ հոդվածը խախտվել է, քանի որ փրկարարական գործողությունը բավարար չափով չի ծրագրվել՝ հատկապես պայմանավորված նրանով, որ «տարբեր ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակումը բավարար չէր եղել, տարհանումը սկսվել էր ուշացմամբ, տեղում սահմանափակ էր եղել տարբեր ծառայությունների համակարգումը, տեղում չեն ապահովել համապատասխան բուժօգնություն և բժշկական տեխնիկա, և բավարար չեն եղել կազմակերպական աշխատանքները»:

Ինչպես նշվեց, կյանքի իրավունքը 2–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով սահմանափակելու դեպքում պետք է կիրառել անհրաժեշտության և համաչափության շատ խիստ թեստ: Օրինակ՝ ՄԻԵԴ–ը կյանքի իրավունքի խախտում է արձանագրել բանտում տեղի ունեցած ապստամբության դեպքում, որի ընթացքում 8 բանտարկյալներ սպանվել էին, 6–ը՝ ստացել մարմնական վնասվածքներ, քանի որ գործադրված ուժը չէր եղել «բացարձակապես անհրաժեշտ» (*Perişan–ը և այլք ընդդ. Թուրքիայի*, գանգատ թիվ 12336/03, 20 մայիս, 2010 թ.): Դատարանը նաև համարում է, որ այդ անհրաժեշտությունը սկզբունքորեն կարող է նաև գոյություն չունենալ, եթե հայտնի է, որ փախուստի դիմող անձը վտանգավոր չէ կյանքի կամ առողջության համար և չի կասկածվում բռնի հանցանք գործած լինելու մեջ, անգամ եթե մահաբեր ուժ չգործադրելու հետևանքով կարող է բաց թողնվել փախուստի դիմաց անձին ձերբակալելու հնարավորությունը:

Տարբեր գործերի շրջանակում 2–րդ հոդվածի խախտումն արձանագրվել է այն բանի պատճառով, որ անձանց սպանելու համար պատասխանատու իրավապահները բավարար չափով վերապատրաստ-

ված չեն եղել, որպեսզի գնահատեն հրազենի գործադրման անհրաժեշտությունը և մարդու կյանքի՝ որպես հիմնարար արժեքի կարևորությունը, կամ բավարար ստուգումներ չեն անցել նախքան հրազեն ստանալը կամ առերևույթ համարվել են հրազեն կրելու պահանջներին համապատասխանող (*Nachova–ն և այլք ընդդ. Բուլղարիայի*, գանգատներ թիվ 43577/98 և 43579/98, 6 հուլիս, 2005 թ., *Gorovenky–ն և Bugara–ն ընդդ. Ուկրաինայի*, գանգատներ թիվ 36146/05 և 42418/05, 12 հունվար, 2012 թ., *Sašo Gorgiev–ն ընդդ. Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության,* գանգատ թիվ 49382/06, 19 ապրիլ, 2012 թ.):

Եվ վերջապես՝ Դատարանը բազմիցս քննադատել է ուժի գործադրումը կարգավորող իրավական դաշտի թերի լինելը, օրինակ՝ *Soare–ն և այլք ընդդ. Ռումինիայի* գործի շրջանակում (գանգատ թիվ 24329/02, 22 փետրվար, 2011 թ.): Այս գործի հաջորդ հետաքրքիր առանձնահատկությունն այն է, որ Դատարանը, ինչպես նախկինում՝ *Makaratzis–ն ընդդ. Հունաստանի* գործի շրջանակում, վճռեց, որ պարտադիր չէ, որ անձը կյանքը կորցրած լինի, որպեսզի համարվի, որ խախտվել է նրա կյանքի իրավունքը, եթե գործադրված ուժը կարող էր մահաբեր լինել, և տուժողը կենդանի է մնացել զուտ պատահականությամբ:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում համապատասխանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 2–րդ հոդվածի պահանջներին:

Կյանքի իրավունքն ամրագրված է ***ՀՀ Սահմանադրության հոդված 24–ում,*** որի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:

3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»:

Տվյալ հոդվածից բխում են հետևյալ իրավադրույթները.

1) Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, որին թղթակցում է բոլորի պարտականությունը՝ ձեռնպահ մնալ մարդուն կյանքից զրկելուն ուղղված քմահաճ ոտնձգություններից կամ որևէ կերպ վտանգել այլոց կյանքի իրավունքը:

2) Պետությունը պարտավոր է բոլոր միջոցներով ապահովել և պաշտպանել մարդու կյանքի իրավունքը:

3) Կյանքի իրավունքը պահպանվում է օրենքով և ոչ ոքի չի կարելի քմահաճ ձևով զրկել կյանքից:

4) Արգելվում է օրենսդրությամբ մահապատժի որևէ հիմքի սահմանում և կիրառում[7]:

Սահմանադրական վերոհիշյալ դրույթն իր արտացոլումն է ստացել նաև ՀՀ օրենքներում և նորմատիվ այլ ակտերում:

***ՀՀ քրեական օրենսգիրքը,*** պաշտպանելով կյանքի իրավունքը, քրեական պատասխանատվություն է նախատեսում մեկ ուրիշին ինչպես դիտավորությամբ (սպանություն՝ հոդվածներ 104–108), այնպես էլ անզգուշությամբ (հոդված 109) մահ պատճառելու, ինքնասպանության հասցնելու (հոդված 110), ինքնասպանության հակելու (հոդված 111), պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության (հոդված 305), օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի սպանության (հոդված 388–ի 2–րդ մաս) համար:

ՀՀ քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է նախատեսված նաև մարդու (մարդկանց) կյանքի համար վտանգ ստեղծող այնպիսի արարքների համար, ինչպիսիք են մարդուն իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը (հոդված 123), վտանգի մեջ թողնելը (հոդված 128), հիվանդին օգնություն ցույց չտալը (հոդված 129), ահաբեկչությունը (հոդված 217), պատանդ վերցնելը (հոդված 218), ատոմային էներգետիկայի օբյեկտներում անվտանգության կանոնները խախտելը (հոդված 227), ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (հոդված 235), սանիտարահակահամաճարակային կանոնները խախտելը (հոդված 277), մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը (հոդված 278), շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված որոշ հանցագործություններ և այլն:

---

[7] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., «Իրավունք», 2010, էջեր 179–180:

ՀՀ քրեական օրենսգիրքը համապատասխան դրույթ է պարունակում նաև հանցանք կատարողներին հանձնելու խնդրի վերաբերյալ: Այսպես՝ քր. օր. 16–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն, եթե նշված անձանց հանձնելը պահանջող երկրի օրենսդրությամբ տվյալ հանցագործության համար մահապատիժ է նախատեսված, ապա հանցանք կատարած անձանց հանձնումը կարող է մերժվել, եթե պահանջող կողմը բավարար երաշխիքներ չներկայացնի, որ մահվան դատավճիռ ի կատար չի ածվի:

Հարկ է նշել նաև, որ քրեական օրենսգիրքը (հոդված 46) կարգավորում է հիմնավորված ռիսկի՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքի հարցը: Այդ հոդվածի 3–րդ մասն ամրագրում է, որ ռիսկը հիմնավորված չէ և քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե այն ակնհայտորեն զուգորդված է եղել երրորդ անձանց զոհվելու, էկոլոգիական կամ հասարակական աղետի սպառնալիքով:

Կյանքի իրավունքի պաշտպանության առումով կարևորվում են նաև ***ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի*** այն դրույթները, որոնք պատասխանատվություն են սահմանում ծննդկանի կողմից երեխայի սպանությանը նպաստելու (հոդված 164), էվթանազիայի (հոդված 166) և ինքնասպանությանը նպաստելու (հոդված 169) համար: Այս առումով նախագիծն էապես տարբերվում է գործող օրենսգրքից, որում նշված արարքների վերաբերյալ իրավակարգավորումները կա՛մ բացակայում են, կա՛մ թերի են:

***ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի*** հոդված 11–ի («Անձի անձեռնմխելիությունը») 9–րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում արգելվում է մարդու կյանքին և առողջությանը, շրջակա միջավայրին վտանգ ներկայացնող միջոցներ կիրառելը»:

Բնական մահվան դեպքում հետաքննություն չի սկսվում: Եթե հայտնաբերվում է դիակ բռնության հետքերով կամ առանց դրանց, բայց մահվան պատճառները հայտնի չեն, քրեական գործ է հարուցվում: Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 108–ն էլ նախատեսում է, որ նման դեպքերում մահվան պատճառների բացահայտման նպատակով դատաբժշկական փորձաքննության նշանակումը պարտադիր է:

***Տուժողի մահվան դեպքում*** նրա իրավահաջորդները, ՀՀ գործող օրենսդրության համաձայն, իրավունք ունեն փոխհատուցում ստանալու մահվամբ պատճառված վնասի չափով՝ քաղաքացիական պատասխանատվության կարգով (***ՀՀ քաղաքացիական օրենսգրքի*** հոդվածներ 1081–1087):

Կոնվենցիայի 2–րդ հոդվածին է առնչվում նաև ***պետական մարմինների կողմից ուժի գործադրման խնդիրը***՝ ոստիկանության, զինված ուժերի, իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև քաղաքացիների կողմից զենք, հատուկ միջոցներ կամ ֆիզիկական ուժ գործադրելու հարցերը: Ներկայումս հանրապետությունում գործում են մի շարք օրենքներ, որոնցում այդ հարցերը մանրամասնորեն կարգավորված են: Դրանք են Հայաստանի Հանրապետության «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թ., «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» 2004 թ., «Զենքի մասին» 1998 թ., «Ոստիկանության մասին» 2001 թ. օրենքները:

***Զենքի գործադրման դեպքերի կապակցությամբ*** վերոհիշյալ օրենքների դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում նպատակաուղղված են մարդու կյանքի պաշտպանությանը և հանցագործին բռնելուն: Սակայն առկա են նաև դեպքեր, որոնք դուրս են գալիս բացարձակ անհրաժեշտության սահմաններից և, հետևաբար, առաջ են բերում Կոնվենցիայի 2–րդ հոդվածի խախտումներ (սրանց մասին ավելի մանրամասն կխոսվի հետագայում):

ՀՀ–ում ընդունվել և գործում են ***մի շարք այլ իրավական ակտեր,*** որոնք այս կամ այն կերպ առնչվում են կյանքի իրավունքին:

***«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ 1992 թ. օրենքը*** սահմանում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա ու ապագա սերունդների կենսունակության համար:

***«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ 1996 թ. օրենքը*** սահմանում է, որ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում (հոդված 16): Նույն օրենքի 19–րդ հոդվածի համաձայն՝ իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, ապօրինի բժշկական գործունեությամբ զբաղվողները պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մասնավորապես, բժշկի կողմից հիվանդին օգնություն ցույց չտալը քրեական պատասխանատվություն է առաջացնում ՀՀ քրեական օրենսգրքի 129–րդ հոդվածով: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ բժիշկն առանց հարգելի պատճառների չի կատարում հիվանդին բժշկական օգնություն ցույց տալու իր պարտականությունները:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում էվթանազիայի արգելումը: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էվթանազիայի կամ իրականացնում են այն, պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այսպես՝ էվթանազիայի դեպքերն ընկնում են ՀՀ քրեական օրենսգրքով սպանության համար պատասխանատվություն նախատեսող նորմերի գործողության տակ: Քրեական օրենսգիրքը նախատեսում է նաև էվթանազիայի հիմնախնդրի հետ առնչվող մեկ այլ դրույթ (հոդված 62–ի 1–ին մասի 5–րդ կետ), որի համաձայն՝ հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը համարվում է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Մարդու կյանքի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների կանխարգելմանն է ուղղված ***«Մարդու իմունային անբավարարության վիրուսի հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ 1997 թ. օրենքը:*** Այս առումով հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 123–րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված այլ անձին ՄԻԱՎ–ի

հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելու, ինչպես նաև դրանով վարակելու համար: Նշված հանցագործության սուբյեկտ կարող են հանդիսանալ այն անձինք, ովքեր գիտեին իրենց մոտ այդ հիվանդության առկայության մասին և անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել ուրիշին վարակելը կանխելու համար: Նշված հանցագործության համար պատասխանատվության կարող են ենթարկվել նաև այն բուժաշխատողները, ովքեր վիրահատության, արյան փոխներարկման, սրսկման և նման այլ դեպքերում նախազգուշական համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել և ուրիշներին ենթարկել են ՄԻԱՎ–ով վարակելու վտանգի:

***«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ 1998 թ. օրենքով*** սահմանվում են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմնական կանխարգելիչ միջոցառումներն ու դրանց իրականացման սկզբունքները: Մասնավորապես, օրենքի 6–րդ հոդվածի համաձայն՝բնակչության պաշտպանության հիմնական սկզբունքներից է մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայությունը (առաջնայնությունը): Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պարտականությունները դրվում են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների վրա: Նշված օրենքում մանրամասն կարգավորվում են նաև այդ սուբյեկտների կողմից ձեռնարկվող միջոցառումները, նրանց լիազորություններն ու պարտականությունները:

***«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ 2001 թ. օրենքի*** 6–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ արտադրողը պարտավոր է ծառայության ժամկետ սահմանել երկարատև օգտագործման այն ապրանքների համար, որոնք սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո կարող են վնաս պատճառել սպառողի կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին: Այդ ապրանքների անվանացանկը հաստատված է ՀՀ Կառավարության 2002 թ. մարտի 16–ի թիվ 248 որոշմամբ:

Կյանքի իրավունքի պաշտպանությանն է առնչվում նաև ***«Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ 2002 թ. օրենքը,*** որի 3–րդ հոդվածի համաձայն՝ կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով կարող է վերցվել միայն զույգ օրգաններից մեկը, կենտ օրգանի մասը կամ հյուսվածքը, որոնց բացակայությունը չի կարող առաջացնել դոնորի կյանքի համար վտանգ ներկայացնող փոփոխություններ: Նույն օրենքի 6–րդ հոդվածում նշվում է, որ առանց ռեցիպիենտի, նրա ծնողների կամ նրա շահերի օրինական ներկայացուցչի համաձայնության փոխպատվաստումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, երբ փոխպատվաստման հետաձգումը սպառնում է ռեցիպիենտի կյանքին, իսկ օրենքով սահմանված կարգով համաձայնության ստացումն անհնար է:

Մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով կարգավորվում են նաև աբորտի ու ամլացման (ստերիլիզացիայի) հետ կապված հարցերը:

Մասնավորապես, ***«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ 1996 թ. օրենքի*** 9–րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր զույգ կամ յուրաքանչյուր ոք իրավունք ունի անցանկալի հղիությունից և հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով օգտվելու ընտանիքի պլանավորման արդյունավետ միջոցներից և դրանց վերաբերյալ ստանալու անհրաժեշտ տեղեկություններ:

Հղիության արհեստական ընդհատումը և բժշկական ամլացումն իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Միևնույն ժամանակ, ***ՀՀ Կառավարության 2004 թ. օգոստոսի 5–ի «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 1116–Ն որոշման*** համաձայն՝ հղիության արհեստական ընդհատման վիրահատություն թույլատրվում է կատարել մինչև 12 շաբաթական ներառյալ հղիության ժամկետը բոլոր այն կանանց, ովքեր ցանկանում են ընդհատել հղիությունը և չունեն հակացուցումներ: 12 շաբաթականից ավելի ժամկետով հղիության դեպքում հղիության արհեստական ընդհատումը թույլատրվում է կատարել բժշկական և սոցիալական համապատասխան ցուցումների առկայու-

թյան դեպքում մինչև 22 շաբաթական ժամկետը: Հղիության արհեստական ընդհատումը մինչև 22 շաբաթական ժամկետը, վերը սահմանված դեպքերից դուրս, թույլատրվում է կատարել համապատասխան բուժհաստատության հանձնաժողովի որոշմամբ: Բացի այդ՝ հղիության արհեստական ընդհատում թույլատրվում է կատարել միայն համապատասխան որակավորում և ըստ ընդունված կարգի լիցենզիա ունեցող բժիշկների կողմից, համապատասխան մանկաբարձ–գինեկոլոգիական բուժհաստատություններում:

***Ապօրինի աբորտ կատարելը*** քրեական պատասխանատվություն է առաջացնում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 122–րդ հոդվածին համապատասխան:

Բժշկական ամլացման հետ կապված հարցերը կարգավորվում են ***«Բժշկական ամլացումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 1998 թ. թիվ 425 որոշմամբ,*** որի 1–ին հոդվածի 4–րդ կետի համաձայն՝ բժշկական ամլացումը կամավոր է և իրականացվում է քաղաքացու գրավոր դիմումի առկայության դեպքում:

Նույն որոշման 2–րդ հոդվածում սահմանվում են ամլացման նպատակահարմարության դեպքերը: Դրանք են՝ 1) եթե քաղաքացին վստահ է, որ այլևս չի ցանկանում երեխաներ ունենալ, 2) եթե կնոջ մոտ հղիությունն ուղեկցվում է բարձր ռիսկով, 3) եթե նախընտրելի չեն հակաբեղմնավորման ժամանակավոր եղանակները: Նույն հոդվածում նշվում է, որ ամլացումը կատարվում է այն դեպքերում, երբ՝ 1) կինը 40 տարեկան և ավելի է, 2) կինը ենթարկվել է եռակի կեսարյան հատման և ունի առողջ երեխաներ, 3) կինը տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնք ուղեկցվում են ախտաբանական անդարձելի փոփոխություններով, և որոնց դեպքում հղիությունն անհամատեղելի է տվյալ հիվանդության հետ ու սպառնում է կնոջ կյանքին: Որոշման 3–րդ հոդվածի համաձայն՝ ամլացման դիմողները պետք է տեղեկացվեն, որ ամլացումն անդարձելի միջամտություն է:

## ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 2–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2–ՐԴ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Ինչպես արդեն նշվել է, Կոնվենցիայի 2–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ կյանքից զրկելը չի համարվում 2–րդ հոդվածի խախտում, եթե այն հանդիսանում է ուժի գործադրման արդյունք, որը բացարձակ անհրաժեշտ է՝

1) անօրինական բռնությունից ցանկացած անձի պաշտպանելու համար,

2) օրինական կալանավորում իրականացնելու կամ օրինական հիմքերով ձերբակալված անձի փախուստը կանխելու համար,

3) խռովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար:

***1. Անօրինական բռնությունից ցանկացած անձի պաշտպանելու համար.***

Սա պաշտպանության այն ձևն է, որը թույլ է տալիս գործել ինչպես պետության ներկայացուցիչներին, այնպես էլ մասնավոր անձանց: Նշված սահմանափակումը, սակայն, կապված է որոշ բարդությունների հետ:

Մասնավորապես, գործնականում դրանց հետ է կապված անօրինական բռնության գործադրման կամ դրա սպառնալիքի և կատարված սպանության համամասնության խնդիրը: Վերջինս իր կարգավորումն է ստացել ՀՀ քրեական օրենսգրքի 42–րդ հոդվածում, որի 1–ին մասի համաձայն՝ հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է ***անհրաժեշտ պաշտպանության վիճակում,*** այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

ՀՀ քր. օր. 42–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ:

Նույն հոդվածի 3–րդ մասում նշվում է, որ անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց  կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և պաշտոնեական դիրքից:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ քրեական օրենսդրությունը թույլ է տալիս պաշտպանվել կյանքի համար վտանգավոր բռնությունից կամ դրա սպառնալիքից՝ ոտնձգողին կյանքից զրկելով: Միևնույն ժամանակ, կյանքի համար վտանգավոր բռնությունը կամ դրա սպառնալիքը լայն են մեկնաբանվում: Մասնավորապես, ըստ մեկնաբանությունների՝ թույլատրվում է հարձակվողին կյանքից զրկելով պաշտպանվել ոչ միայն սպանության սպառնալիքից, այլև տուժողի կյանքի համար վտանգավոր այնպիսի հանցագործություններից, ինչպիսիք են առողջությանը ծանր վնաս հասցնելը, բռնաբարությունը, մարդուն առևանգելը, ահաբեկչությունը, պատանդ վերցնելը և այլն:

Միանշանակ է լուծվում նաև այն հարցը, թե կարող է արդյոք պաշտպանվողն անհրաժեշտ պաշտպանություն իրականացնել այն դեպքերում, երբ կային ոտնձգությունից խուսափելու այլ հնարավորություններ (օրինակ՝ փախչել, օգնության դիմել և այլն): Ինչպես ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 42–րդ հոդվածի 3–րդ մասից, նույնիսկ այլ հնարավորությունների դեպքում անձը կարող է պաշտպանվել հարձակվողին վնասելու (տվյալ դեպքում՝ կյանքից զրկելու) միջոցով:

Զենքի և հատուկ միջոցների գործադրման հարցերը կարգավորող բոլոր օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված միջոցները կիրառելու հիմքերի զգալի մասը կապված է անհրաժեշտ պաշտպանության վիճակի հետ: Բայց այդ օրենքներում չկա ոչ մի ցուցում հարձակվողին հասցվող վնասի և հարձակման բնույթի համամասնության մասին: Այս հարցը կարգավորվում է քրեական օրենսգրքի 42–րդ հոդվածի դրույթներով: Դրանցից, ինչպես արդեն նշվել է, բխում է, որ հարձակվողին կյանքից զրկելն իրավաչափ է, երբ հարձակումը զուգորդված է կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության սպառնալիքի հետ:

Անհրաժեշտ պաշտպանության իրավունքը, սակայն, անսահմանափակ չէ: Ըստ օրենքի՝ չպետք է թույլ տրվի անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 42–ի 4–րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտորեն, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

Սրանով, փաստորեն, փորձ է արվում լուծելու գործադրվող բռնության կամ դրա սպառնալիքի և պաշտպանության միջոցի համամասնության հարցը: Օրենքի նշված դրույթը կարող է մեկնաբանվել հետևյալ կերպ՝ պաշտպանություն իրականացնողի կողմից հասցված վնասի և հարձակումից սպառնացող վնասի միջև ակնհայտ մեծ տարբերություն չպետք է լինի: Մասնավորապես, չի կարելի սեփականությունը, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանել՝ հարձակվողին կյանքից զրկելով կամ նրա առողջությանը վնաս հասցնելով:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 108–ը պատասխանատվություն է սահմանում անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված սպանության, իսկ հոդված 116–ը՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ տուժողի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու համար:

***2. Օրինական կալանավորում իրականացնելու կամ օրինական հիմքերով ձերբակալված անձի փախուստը կանխելու համար.***

Տվյալ հարցն օրենսդրորեն կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 43–րդ հոդվածում, որի համաձայն՝ հանցանք չի համարվում այն գործողությունը, որը հանցանք կատարած անձին վնաս է պատճառել նրան իրավասու մարմիններին հանձնելու կամ նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակով բռնելիս, եթե դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանների անցում թույլ չի տրվել (1–ին մաս):

Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում է համարվում բռնելու միջոցների ակնհայտ ան-

համապատասխանությունն արարքի և այն կատարող անձի վտանգավորությանը, ինչպես նաև բռնելու հանգամանքներին, որոնց հետևանքով անձին դիտավորությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ (2–րդ մաս):

Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասով (3–րդ մաս):

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 107–ը պատասխանատվություն է սահմանում հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ կատարված սպանության, իսկ հոդված 115–ը՝ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու համար:

Հանցանք կատարած անձին բռնելու ժամանակ նրան հասցվող վնասի բնույթն ու չափը կախված են նրանից, թե ինչպիսի հանցանք է կատարել անձը, ինչպես նաև բռնելու իրադրությունից: Մասնավորապես, ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձին բռնելիս չի թույլատրվում նրա առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառել կամ նրան զրկել կյանքից:

Բռնելու ժամանակ հանցանք կատարած անձին հասցվող վնասի բնույթն ու չափը կախված են նաև նրանից, թե ինչպիսի վարքագիծ է դրսևորում բռնվողը: Մասնավորապես, բռնվողին կարելի է զրկել կյանքից միայն այն դեպքում, եթե նրա գործողություններն այդ ընթացքում անմիջական վտանգ են սպառնում նրան բռնողի կամ այլ անձի կյանքին: Ընդ որում՝ տվյալ պարագայում կգործեն անհրաժեշտ պաշտպանության կանոնները:

Ի տարբերություն անհրաժեշտ պաշտպանության՝ հանցանք կատարած անձին բռնելիս նրան վնաս հասցնելը թույլատրվում է միայն այն ժամանակ, երբ բռնելու այլ միջոցներ չկան: Հանցագործին բռնելու կամ նրա փախուստը կանխելու համար ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման հարցերը կարգավորվում են արդեն հիշատակված օրենքներում:

***3. Խռովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար.***

Հայաստանի Հանրապետությունում այս հարցերը հատուկ օրենսդրական կարգավորում չեն ստացել:

ՀՀ քրեական օրենսգիրքը (հոդված 225) պատասխանատվություն է սահմանում զանգվածային անկարգությունների համար, որոնք ուղեկցվել են բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով:

Բացի այդ՝ ՀՀ քր. օր. 300–րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում պետական իշխանությունը յուրացնելու, 300.1–րդ հոդվածը՝ սահմանադրական կարգը տապալելու, իսկ 300.2–րդ հոդվածը՝ տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողություններ կատարելու համար:

Հիշատակված հանրորեն վտանգավոր արարքների խափանմանն ուղղված ոստիկանության զորքերի կամ այլ աշխատակիցների գործողությունները կարգավորվում են արդեն նշված օրենքներով, ինչպես նաև անհրաժեշտ պաշտպանությանը և հանցանք կատարած անձին բռնելուն վերաբերող քրեաիրավական նորմերով:

## ԹԵՄԱ 2. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԲԽՈՂ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական կամ մշակութային յուրաքանչյուր իրավունք սկզբունքորեն իր հետ բերում է պետության երեք հիմնական պարտավորություններ: Դրանք են՝ տվյալ իրավունքը «հարգելու», «պաշտպանելու» և «իրականացնելու» պարտավորությունները:

Ըստ այդմ՝ 2–րդ հոդվածը նույնպես պետության համար ոչ միայն պարտավորություն է առաջացնում՝ ձեռնպահ մնալու դիտավորյալ և ապօրինաբար կյանքը խլելուց («հարգելը» տես վերը՝ Դաս 2, Թեմա 1),

այլ նաև պոզիտիվ պարտավորություն է սահմանում՝ համապատասխան քայլեր ձեռնարկելով երաշխավորելու իր իրավազորության ներքո գտնվողների կյանքը, ուստի նաև անելու այն ամենը, ինչ իրենից կարող է պահանջվել անձանց կյանքը ռիսկի ենթարկվելուց պաշտպանելու ուղղությամբ («պաշտպանելը»):

Կյանքի իրավունքից բխող՝ պետության երրորդ պարտավորությունն է «իրականացնելու» պարտավորությունը (այսինքն՝ այդ իրավունքի իրականացմանն աջակցելու ուղղությամբ պոզիտիվ գործողություններ ձեռնարկելու պարտավորությունը), որն ընդգծված կերպով ձևակերպված չէ եվրոպական մակարդակում, քանի որ վերջինս ավանդաբար առաջնորդվում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների նկատմամբ չմիջամտելու սկզբունքով, ընդ որում՝ պետությունների համար չի առաջացնում այնպիսի միջոցառումներ ձեռնարկելու պարտավորություն, որոնք կարող են ընկալվել որպես սոցիալական իրավունքներ տրամադրող միջոցառումներ (օրինակ՝ առողջության իրավունքը կամ սննդի իրավունքը): Ի հակադրություն՝ Միավորված ազգերի կազմակերպության համակարգը կյանքի իրավունքի մեջ է ներառել նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են նորածնային մահացությունը նվազեցնելու՝ պետության պարտավորությունը, թերսնուցումը և համաճարակները վերացնելու՝ պետության պարտավորությունը, ինչպես նաև միջուկային զենքի արգելքը: Ավելին՝ ՄԱԿ–ի մարդու իրավունքների հանձնաժողովի ձևակերպմամբ, «պետությունների գերագույն պարտավորությունն է՝ կանխել պատերազմները, ցեղասպանական գործողությունները և զանգվածային բռնության այլ գործողությունները, որոնք կամայականորեն խլում են մարդկանց կյանքը: Պատերազմի, հատկապես ջերմամիջուկային պատերազմի վտանգից խուսափելու և միջազգային խաղաղության և անվտանգության ամրապնդման ուղղությամբ նրանց կողմից գործադրվող յուրաքանչյուր ջանք կյանքի իրավունքի երաշխավորման կարևորագույն նախապայմանը և ապահովման միջոցն է» (տե՛ս Թիվ 6 ընդհանուր մեկնաբանությունը, 1982 թ.):

Ինչ վերաբերում է կյանքի իրավունքը «պաշտպանելու» պարտավորությանը, ապա ՄԻԵԴ–ն ընդհանուր առմամբ նշել է հետևյալը.

Պետությունները պետք է ոչ միայն ձեռնպահ մնան կյանքից դիտավորյալ և ապօրինաբար զրկելուց, այլ նաև, համապատասխան միջոցներ ձեռնարկելով, երաշխավորեն իրենց իրավազորության ներքո գտնվողների կյանքը, հատկապես սահմանելով քրեաիրավական արդյունավետ նորմեր և իրավակիրառ ապարատներ:

*L.C.B.–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 23413/94, 9 հունիս, 1998 թ., Osman–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 23452/94, 28 հոկտեմբեր, 1998 թ.*

Անհատի մահվան համար պետության ուղղակի պատասխանատվության բացակայությունը դեռևս չի բացառում ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածի կիրառելիությունը:

*Angelova–ն և Iliev–ն ընդդ. Բուլղարիայի, գանգատ թիվ 55523/00, 26 հուլիս, 2007 թ.*

Այնուամենայնիվ, 2–րդ հոդվածից բխող պոզիտիվ պարտավորությունները պետք է՝

մեկնաբանել այնպես, որ իշխանությունների համար չառաջանա անիրական կամ անհամաչափ բեռ: Եթե իշխանությունները մեղադրվում են կյանքի իրավունքը պաշտպանելու իրենց պոզիտիվ պարտավորությունը խախտելու մեջ, (...) ապա [Դատարանի համար] ընդունելի չափով հիմնավորել, որ իշխանություններն այդ ժամանակ իմացել են կամ պետք է իմանային տվյալ անձի կամ անձանց կյանքի համար երրորդ անձի հանցավոր արարքների պատճառով ծագող իրական և անմիջական ռիսկի գոյության մասին, սակայն իրենց լիազորությունների շրջանակում չեն ձեռնարկել միջոցներ, որոնք ողջամիտ դատողությամբ կարող էին ակնկալվել այդ ռիսկից խուսափելու համար:

*Osman–ն ընդդ. Միացյալ Թագավորության*

Պետության կողմից անձի կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորության խախտման հարցին, որպես կանոն, Դատարանն առնչվում է այն գործերի շրջանակում, որոնք հաճախ կապված են երրորդ անձանց ագրեսիայի հետ, ինչպիսին *Osman*–ի գործն է, ում կրակելով սպանել էր իր որդու ուսուցիչը, ով մոլագարության աստիճան հետաքրքրված էր տղայով, և ում մասնագիտական գործունեությունը կասեցվել էր հոգեբուժական փորձաքննությունից հետո: Դատարանը խախտում չարձանագրեց, քանի որ չհիմնավորվեց, որ իշխանություններն իմացել էին կամ պետք է իմանային, որ տղայի և նրա հոր կյանքին ուսուցչի կողմից սպառնում էր իրական և անմիջական վտանգ: Նմանապես, ՄԻԵԴ–ը հակված չեղավ կյանքի իրավունքի խախտում արձանագրելու այն գործի շրջանակում, որում նախկինում սպանության համար դատապարտված և բանտից պայմանականորեն ազատ արձակված տղամարդը սպանել էր 21–ամյա մի երիտասարդի (*Choreftakis–ը և Choreftaki–ն ընդդ. Հունաստանի*, գանգատ թիվ 46846/08, 17 հունվար, 2012 թ.): Մյուս կողմից՝ Թուրքիայի դեմ քննված գործերից մեկով ՄԻԵԴ–ն արձանագրեց 2–րդ հոդվածի խախտում, քանի որ իշխանությունները բավարար չափով չէին ապահովել անվտանգությունը դպրոցի տարածքում, և դպրոցականներից մեկը 15–ամյա մեկ այլ դպրոցականի սպանել էր դանակահարության միջոցով (*Kayak–ն ընդդ. Թուրքիայի,* գանգատ թիվ 60444/08, 10 հուլիս, 2012 թ.): Այդ գործով Դատարանը հատկապես շեշտեց, որ պետությունն առանձնահատուկ պարտավորություն ունի անձանց որոշակի խմբերի, օրինակ՝ երեխաների նկատմամբ:

Այս մոտեցմանը կարելի է հանդիպել նաև այլ գործերի մեջ, որոնք առնչվում են ազատությունից զրկված անձանց կյանքին, առողջությանը և բարօրությանը ոստիկանությունում ազատազրկման պայմաններում, բանտում, սոցիալական խնամքի տներում կամ հոգեբուժական հիվանդանոցներում կամ զինվորական ծառայության ընթացքում: Հարկ է հիշատակել, որ անձանց ազատազրկման մեջ գտնվելու ընթացքում Դատարանն անհրաժեշտ նախապայման չի համարում այն, որ իշխանություններն իմացել են կամ պետք է իմանային ռիսկի գոյության մասին: Փոխարենը, Դատարանի մոտեցումը հետևյալն է.

«Գոյություն ունեն նախազգուշական որոշ տարրական միջոցառումներ, որոնք ակնկալվում է, որ պետք է բոլոր դեպքերում իրականացվեն ոստիկանների և բանտերում աշխատողների կողմից, որպեսզի նվազագույնի հասցվեն պոտենցիալ ռիսկերը և պաշտպանվեն ձերբակալված անձի առողջությունը և բարօրությունը»:

*Keller–ն ընդդ. Ռուսաստանի, գանգատ թիվ 26824/04, 17 հոկտեմբեր, 2013 թ.*

Կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորության վերաբերյալ ՄԻԵԴ–ի կայացրած դատավճիռների մյուս օրինակները վերաբերում են, մասնավորապես, ականները տեղորոշելու և վնասազերծելու պարտավորությանը, ականապատ տարածքը նշագրելու և պատնեշելու պարտավորությանը և ականների մասին տեղի բնակչությանը նախազգուշացնելու պարտավորությանը, ինչպես նաև զինվորական գործողությունների անվտանգությունը և վերահսկողությունն ապահովելու և չպայթած ռազմամթերքի պատճառով հնարավոր դժբախտ պատահարները կանխելու պարտավորությանը: Ավելին՝ անվտանգությունը նավի մեջ, շինարարական հրապարակներում և ճանապարհային անվտանգության համատեքստում կարող են առաջացնել կյանքը պաշտպանելու պետության պատասխանատվությունը: Ինչպես նշվեց, պետությունն առանձնահատուկ պատասխանատվություն է կրում ազատությունից զրկված անձանց նկատմամբ. ազատազրկման ընթացքում ինքնասպանություն գործած անձանց պարագայում ՄԻԵԴ–ը մի շարք առիթներով արձանագրել է ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածի խախտում, քանի որ իշխանությունները չեն պաշտպանել անձի կյանքի իրավունքն ինքնավնասումից: Բացի դրանից՝ Դատարանը վճռել է, որ պետությունները պարտավոր են իրավական ակտեր ընդունել, որոնք մասնավոր և պետական հիվանդանոցներին կպարտադրեն համապատասխան միջոցներ ձեռնարկել խնամառուների կյանքը պաշտպանելու ուղղությամբ: Վերջապես՝ ՄԻԵԴ–ը նշել է նաև, որ պետությունը կյանքի իրավունքի պաշտպանության պատասխանատվություն է կրում բնապահպանական ռիսկերի, տեխնոլոգիական աղետների, բնական աղետների և նմանատիպ

այլ իրավիճակներում: Այդ գործերը վերաբերել են աղբահավաքման վայրերից, սողանքներից կամ ազբեստի առկայության հետևանքով անձանց համար ծագող ռիսկերին[8]:

Ի վերջո՝ կյանքի իրավունքին առնչվող գործերը, օրինակ՝ պետական իշխանությունների կողմից սպանության, ազատազրկման պայմաններում մահվան, այլ անձանց գործողություններով պատճառած մահվան և վերոհիշյալ ցանկացած այլ համատեքստում տեղի ունեցած մահվան դեպքերը քննելու պատասխանատվությունը պետության՝ 2–րդ հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտավորություններից է: Այս խնդիրը կքննարկվի ստորև՝ առանձին գլխում:

## ԴԱՍԵՐ 3–4. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Այս դասերի նպատակն է հստակեցնել խոշտանգման էությունը և սահմանազատել այն անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի այլ ձևերից, օրինակ՝ կալանավայրի անմարդկային պայմաններից կամ ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառումից: Մասնակիցները պետք է խոշտանգումը և վատ վերաբերմունքի այլ ձևերն ընկալեն որպես որոշակի առանձնահատկություններով տարբերվող արարքներ: Նրանք պետք է ծանոթանան այս ոլորտում վերջերս կատարված և նախատեսվող օրենսդրական փոփոխություններին:

### ԹԵՄԱ 1. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԳԵԼՔԸ

ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածը՝ ՔՔԻՄԴ–ի 7–րդ հոդվածի նման, արգելում է խոշտանգման և (դաժան), անմարդկային կամ նվաստացուցիչ վերա-

[8] Լրացուցիչ մանրամասների և հղումների համար տես Linos–Alexander Sicilianos, Out of harm's way: positive obligations under Article 2 of the European Convention on Human Rights, in: The Right to Life under Article 2 of the European Convention on Human Rights. Twenty Years of Legal Developments since McCann v. the United Kingdom. Wolf Legal Publishers, Oisterwijk, 2016, pp. 29–45:

բերմունքի կամ պատժի օգտագործումը: «Դաժան» բառի ավելացումը միջազգային փաստաթղթի մեջ այլևս արդիական չէ, քանի որ այդ բառն արդեն օգտագործվում է որպես «անմարդկային» բառի հոմանիշ, ընդ որում՝ ՄԱԿ–ի մարդու իրավունքների հանձնաժողովը և Խոշտանգման դեմ պայքարի հանձնաժողովը չեն տարբերակում այս երկու եզրույթները:

Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքը բացարձակ է, այսինքն՝ անձին խոշտանգելը կամ նրա նկատմամբ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը երբևէ չի կարող հիմնավորված լինել: ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի ձևակերպումն արտացոլում է արգելքի բացարձակ բնույթը՝ Կոնվենցիայի տեքստում չներառելով որևէ սահմանափակումներ՝ ի տարբերություն այլ իրավունքների մեծ մասի: Բացարձակ իրավունքի հաջորդ օրինակը ստրկության արգելքն է, որը խոշտանգման պես նպատակաուղղված է մարդ արարածին որպես սուբյեկտի և նրա արժանապատվությունը ոչնչացնելուն: Պրակտիկայում, սակայն, կարող է գոյություն ունենալ «թեթևակի» խոշտանգում կիրառելու գայթակղությունը այն գործերի համար, որոնցում դա «անհրաժեշտ» և «նպատակահարմար» է թվում «այլոց կյանքը երաշխավորելու համար» (հաճախ դա անվանում են «վայրկենաչափով ռումբի սցենար»). իրական կյանքում հենց այդպիսի դեպքի օրինակ էր *Gäfgen*–ի գործը, ով առևանգել էր մի տղայի և փրկագին էր պահանջում, որից հետո փողը ստանալու փորձ կատարելիս ձերբակալվել էր ոստիկանության կողմից: Ոստիկանական մարմինները նրան սպառնացել էին, որ տղայի գտնվելու վայրն ասելու համար կիրառելու են խոշտանգում (*Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի*, գանգատ թիվ 22978/05, 1 հունիս, 2010 թ.): Այնուամենայնիվ, պետք է պարզ լինի, որ խոշտանգումը չի կարող կիրառվել միայն սահմանափակ թվով գործերի նկատմամբ, քանի որ պատմությունը ցույց է տվել, որ եզակի դեպքերում խոշտանգումը հանդուրժելու դեպքում այն տարածվում է քրեական արդարադատության ողջ համակարգում և սասանում ամբողջ հասարակությունը:

Խոշտանգումը բացարձակապես արգելված է ողջ աշխարհում՝ անկախ նրանից, թե արդյոք տվյալ պետությունը վավերացրել է դրա օգտագործումն արգելող և մարդու իրավունքներին վերաբերող համապա-

տասխան միջազգային պայմանագիրը, թե ոչ, քանի որ այն *յուս կոգենս* բնույթի նորմ է:

*Յուս կոգենսը* (լատիներեն՝ «պարտադրող իրավանորմ»), որն անվանում են նաև միջազգային իրավունքի իմպերատիվ նորմ, պետությունների միջազգային հանրության՝ որպես մեկ ամբողջության կողմից ընդունված և ճանաչված նորմ, որից շեղում (դերոգացիա) չի թույլատրվում, և որը կարող է փոփոխվել միայն միջազգային ընդհանուր իրավունքի նույնաբնույթ հետագա իրավանորմով:

*Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 53–րդ հոդված*

Ընդհանուր առմամբ ընդունված է, որ *յուս կոգենսը* ներառում է ցեղասպանության արգելքը, ծովային ծովահենության արգելքը, ստրկության և ստրկավաճառության, խոշտանգման, վերադարձման (refoulement) և ագրեսիայի և տարածքի խոշորացման պատերազմների արգելքը:

*Cherif Bassiouni, Crimes Against Humanity: Historical Evolution and Contemporary Application, Cambridge University Press, New York, 2011*

Ի տարբերություն սովորական սովորութային իրավունքի, որի համար ավանդաբար պահանջվել է համաձայնություն, և որը թույլատրում է պետությունների միջև գործող պարտավորությունները փոփոխել պայմանագրերով, *յուս կոգենսը* չի կարող որևէ պետության կողմից փոփոխվել «միջազգային պայմանագրերով կամ տեղական կամ հատուկ սովորույթներով կամ անգամ ընդհանուր սովորութային կանոններով, որոնք օժտված չեն նորմատիվային միևնույն ուժով»:

*Prosecutor v. Furundžija գործը, Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալ, 2002 թ.*

Ավելին՝ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքից շեղումներ չեն թույլատրվում հանրային արտակարգ իրավիճակների ժամանակ (համեմատության համար տե՛ս ՄԻԵԿ–ի 15–րդ հոդվածը):

Ամփոփելով կարելի է նշել, որ ՄԻԵԴ–ը բազմիցս կրկնել է հետևյալ դիրքորոշումը.

Կոնվենցիայի 3–րդ հոդվածում ամրագրված է ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ բարդագույն հանգամանքներում, ինչպիսիք են պայքարն ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ, Կոնվենցիան բացարձակ իմաստով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի ու թիվ 1 և թիվ 4 արձանագրությունների բովանդակային դրույթների մեծ մասի՝ 3–րդ հոդվածը բացառություններ չի նախատեսում, և 15–րդ հոդվածի 2–րդ մասի հիման վրա հնարավոր չէ շեղվել 3–րդ հոդվածի պահանջներից՝ անգամ ազգի կյանքին սպառնացող հանրային արտակարգ իրավիճակի դեպքում:

Ինչ վերաբերում է խոշտանգման սահմանմանը, ապա ՄԻԵԴ–ը լայն իմաստով հաստատել է ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) 1–ին հոդվածում զետեղված սահմանումը.

Սույն Կոնվենցիայի իմաստով «խոշտանգում» եզրույթը նշանակում է ցանկացած գործողություն, որով անձին դիտավորյալ պատճառվում է ֆիզիկական կամ հոգեկան ծանր ցավ կամ տառապանք՝ նպատակ հետապնդելով, մասնավորապես, նրանից կամ երրորդ անձից ստանալու տեղեկություններ կամ խոստովանություն, պատժելու նրան որևէ գործողության համար, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ ահաբեկել կամ հարկադրել նրան կամ երրորդ անձի, որևէ տեսակի խտրականության վրա հիմնված որևէ պատճառով, երբ այդ ցավը կամ տառապանքը պատճառվում են հանրային պաշտոնյայի կամ պաշտոնեական կարգավիճակով գործող այլ անձի կողմից, հրահրմամբ, համաձայնությամբ կամ թողտվությամբ:

Այսպիսով՝ որպեսզի արարքը լինի «խոշտանգում», պետք է գոյություն ունենան հետևյալ տարրերը.

- ֆիզիկական և/կամ հոգեկան ծանր ցավ կամ տառապանք,
- դիտավորություն,
- որոշակի նպատակ (խոստովանություն, տեղեկություններ ստանալը, ահաբեկելը, խտրականությունը…),
- պետության պատասխանատվություն:

ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) սահմանման համաձայն՝ պատճառված վնասը պետք է լինի «սուր ցավ կամ տառապանք», որպեսզի համարվի խոշտանգում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ օբյեկտիվ չափման ենթարկել ցավի կամ տառապանքի ծանրությունը, քանի որ դա ցանկացած դեպքում կախված է տուժողի սուբյեկտիվ զգացողությունից: Այսպես կոչված *Greek գործով* (Denmark–ն ընդդ. Հունաստանի, Norway–ն ընդդ. Հունաստանի, Sweden–ն ընդդ. Հունաստանի և Netherlands–ն ընդդ. Հունաստանի, գանգատներ թիվ 3321/67, 3322/67, 3323/67 և 3344/67, 5 նոյեմբեր, 1969 թ.) Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը[9] սահմանեց վատ վերաբերմունքի հիերարխիան, որի ծայրահեղ դրսևորումը խոշտանգումն է: Գործը վերաբերում էր Հունաստանում ռազմական բռնապետության տարիներին (1967–1974 թթ.) իշխանությունների կողմից կատարված խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերին:

Հանձնաժողովն իր որոշման մեջ մանրամասնել է, թե ինչով է «խոշտանգումը» տարբերվում «անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից».

[9] Մինչև 1998 թվականն անհատները հնարավորություն չունեին ուղղակիորեն դիմելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանին: Նրանք ստիպված էին դիմել Հանձնաժողովին, որը գործը բավարար չափով հիմնավորված համարելու դեպքում էր միայն այն տվյալ անհատի անունից ուղարկում Դատարանին: 11–րդ արձանագրությամբ Հանձնաժողովը վերացվեց, Դատարանն ընդլայնվեց, և անհատներն իրավունք ստացան գործերն անմիջականորեն ներկայացնելու Դատարանին:

Պարզ է, որ կարող է գոյություն ունենալ վերաբերմունք, որի նկատմամբ կիրառելի կլինեն վերոհիշյալ բոլոր նկարագրությունները, քանի որ ցանկացած խոշտանգում պետք է որ նաև անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք լինի, իսկ անմարդկային վերաբերմունքը պետք է որ նաև նվաստացուցիչ լինի: **Անմարդկային վերաբերմունք** հասկացությունը ներառում է առնվազն այն վերաբերմունքը, որը դիտավորյալ պատճառում է ծանր հոգեկան կամ ֆիզիկական տառապանք, որը տվյալ իրավիճակում չի կարող հիմնավորված լինել... «Խոշտանգում» բառի օգտագործմամբ հաճախ նկարագրվում է անմարդկային այն վերաբերմունքը, որն ունի որոշակի նպատակ, օրինակ՝ տեղեկություններ կամ խոստովանություն ստանալը կամ պատիժ պատճառելը, և ընդհանուր առմամբ, անմարդկային վերաբերմունքի ծանրացած ձև է:

*Greek* գործից ի վեր ՄԻԵԴ–ը ծանրության այդ աճողական դասակարգումը կիրառել է մի շարք որոշումներում: Օրինակ՝ *Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության* գործի շրջանակում (գանգատ թիվ 5310/71, 18 հունվար, 1978 թ.), ՄԻԵԴ–ը բեկանեց Հանձնաժողովի այն որոշումը, որը որպես խոշտանգում էր որակել Իռլանդական հանրապետական բանակի (IRA) ահաբեկչության դեմ պայքարի նպատակով բրիտանական իշխանությունների կողմից կիրառված քննչական հինգ հնարքները: ՄԻԵԴ–ը վճռեց, որ հնարքները պարունակել են անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք, սակայն չեն հասել խոշտանգման շեմին: Դատարանն իր դիրքորոշումը պատճառաբանեց հետևյալ կերպ.

«Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի տարբերակումը հիմնականում պայմանավորված է պատճառված տառապանքի ծանրության աստիճանի տարբերությունից: [...] «Խոշտանգում» եզրույթը հատուկ խարան է վերագրում դիտավորյալ անմարդկային վերաբերմունքին, որը շատ ծանր և դաժան տառապանք է պատճառում: ՄԻԵԴ–ը վճռել է, որ հինգ հնարքները չեն պատճառել այնպիսի ծանրության և դաժանության տառապանք, որպիսին ներհատուկ է «խոշտանգում» բառին»:

Ծանր ցավ կամ տառապանք պատճառելու տարրի մեջ հաշվի է առնվում արարքի ազդեցությունը կոնկրետ տուժողի վրա: Նույն արարքը կարող է տարբեր կերպ ազդել տարբեր անձանց վրա՝ կախված նրանց ֆիզիկական և հոգեկան էությունից և ցավի նկատմամբ հանդուրժողության ընդհանուր մակարդակից: Դրանից բխում է նաև, որ որոշ խմբեր մյուսներից ավելի խոցելի են խոշտանգման նկատմամբ: Հետևապես, ՄԻԵԴ–ը միանշանակորեն սուբյեկտիվ ստանդարտ է ընդունել: Արարքի ծանրությունը չափվում է կոնկրետ գործի հիման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցությունը վնասը կրող անձի վրա, արարքի տևողությունը և վնասը կրող անձի տարիքը, սեռը և մշակույթը:

ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) 1–ին հոդվածում զետեղված խոշտանգման սահմանումը տարածվում է ցավի կամ տառապանքի նկատմամբ, որը կա՛մ հոգեկան է, կա՛մ ֆիզիկական: Թեպետ խոշտանգման բազմաթիվ արարքներ տուժողին պատճառում են և՛ հոգեկան, և՛ ֆիզիկական ցավ կամ տառապանք, ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայում (CAT) հաշվի է առնվում զգացողության այդ երկու տեսակների միջև տարբերության առկայությունը: Այնուամենայնիվ, այդ միջազգային պայմանագրում (կամ ուրիշներում) լրացուցիչ ուղենիշներ չկան այն մասին, թե որ արարքները կարող են պատճառել հոգեկան կամ ֆիզիկական ցավ:

Հոգեկան ցավի կամ տառապանքի տարրի առավել մանրակրկիտ, սակայն միևնույն ժամանակ անհարկիորեն սահմանափակող նկարագրությանը կարելի է հանդիպել Ամերիկայի Միացյալ Նահանգների «պաշտոնական ընկալման» մեջ, որը վերջինս տվեց ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիան (CAT) վավերացնելիս:

«Հոգեկան ցավը կամ տառապանքը վերաբերում է տևական հոգեկան վնասին, որը պատճառվել է ստորև նշվածների միջոցով կամ հետևանքով. (1) ծանր ֆիզիկական ցավը կամ տառապանքը դիտավորյալ պատճառելը կամ պատճառել սպառնալը, (2) մտածողությունը փոփոխող նյութերի կամ զգացողությունները կամ անձը խորապես խաթարելու

նպատակ հետապնդող այլ ընթացակարգերի կիրառությունը կամ օգտագործումը կամ կիրառության կամ օգտագործման սպառնալիքը, (3) մոտալուտ մահվան սպառնալիքը, (4) մեկ այլ անձի վերահաս մահն առաջ բերելու, նրան ծանր ֆիզիկական ցավ կամ տառապանք պատճառելու սպառնալիքը կամ այլ անձի մտածողությունը փոփոխող նյութերի կամ զգացողությունները կամ անձը խորապես խաթարելու նպատակ հետապնդող այլ ընթացակարգերի կիրառությունը կամ օգտագործումը»:

Ինչպես նշվեց, այս «ընկալումը», անկասկած լինելով չափազանց նեղ, չի կարող համապատասխանել «հոգեկան ցավի կամ տառապանքի» այն լայն ընկալմանը, որը նկատի են ունեցել ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) հեղինակները: Այդ սահմանումը չի ներառում որոշ արարքներ, օրինակ՝ տևական մեկուսացումը և զգացողություններից զրկելը, որոնք ընդունված է խոշտանգում համարել որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այն կարող է օգտագործվել որպես սահմանափակ թվով որոշակի արարքների ցուցիչ, որոնք իրականում կարող են տեղի ունենալ, ներառյալ կեղծ մահապատիժը (mock execution) կամ մեկ այլ անձի խոշտանգմանն ականատես լինելը:

Նմանապես, գոյություն չունի «ֆիզիկական ցավի կամ տառապանքի» սահմանում, և խոշտանգում համարվող արարքների տեսակները պարզելու համար անհրաժեշտ է լինում ուսումնասիրել տարածաշրջանային և միջազգային տարաբնույթ մարմինների նախադեպային պրակտիկան: Ֆիզիկական խոշտանգման առավել տարածված մեթոդներից են ծեծը, էլեկտրահարումը, ձգումը, սուզումը, խեղդումը, այրվածքները, բռնաբարությունը և սեռական ոտնձգությունները:

Եվ վերջապես՝ պետք է հստակեցնել, որ թեպետ ֆիզիկական կամ մտավոր կարողությունների մշտական խանգարում առաջացնող արարքները խոսում են խոշտանգման առկայության մասին, դա տվյալ իրավախախտման կարևորագույն տարրերից չէ:

ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) մեջ խոշտանգման սահմանմամբ պահանջվում է անձին ծանր ցավ և տառա-

պանք «դիտավորյալ պատճառելը»: Այլ կերպ ասած, եթե տուժողը ծանր ցավ է կրել պետական պաշտոնյայի գործողությունների հետևանքով, սակայն պաշտոնյան մտադիր չի եղել պատճառելու ծանր ցավ, ապա արարքը չի համարվի խոշտանգում: Այս առումով հաճախ հանդիպող օրինակ է բանտերի վատ պայմանների և գերբնակեցման հետևանքով ազատազրկվածների տառապանքը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ դեպքերի մեծ մասում իշխանություններն ազատազրկվածներին ծանր տառապանք պատճառելու դիտավորություն չեն ունենում, դա չի համարվում խոշտանգում:

ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) 1–ին հոդվածում «դիտավորյալ պատճառել» բառակապակցության օգտագործումից բխում է, որ խոշտանգողը պետք է տվյալ արարքը կատարելու և միաժամանակ տվյալ վնասը պատճառելու դիտավորությամբ գործած լինի: Այնուհանդերձ, նշված Կոնվենցիայի նախագծի առաջին տարբերակը ՄԱԿ–ին ներկայացրած՝ Շվեդիայի ներկայացուցիչներ Բուրգերսը և Դանելիուսը բացատրեցին, որ «այն դեպքում, երբ ցավը կամ տառապանքը պատահականության կամ պարզ անփութության հետևանքով են, արարքը խոշտանգում համարելու չափորոշիչները բավարարված չեն»՝ այդ կերպ անհրաժեշտ դիտավորությունը թողնելով նվազագույն մակարդակի վրա[10]: Այլ կերպ ասած՝ կարելի է պնդել, որ ծանր ցավը պետք է «դիտավորությամբ գործելու կանխատեսվող հետևանքը» լինի:

Ընդհանուր առմամբ հաշվի առնելով, որ խոշտանգումից տուժած անձը տվյալ վերաբերմունքի վերաբերյալ բողոքելիս լուրջ դժվարություններ կունենա իշխանությունների դիտավորությունն ապացուցելու հարցում, ՄԻԵԴ–ը ձևավորել է ապացուցման բեռը տուժողից իշխանությունների վրա տեղափոխելու մոտեցումը (տես ստորև՝ Դաս 5):

ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) սահմանման մեջ պարզաբանված է, որ տվյալ արարքը խոշտանգում է, միայն

[10] J. Herman Burgers and H. Danelius, The United Nations Convention against Torture. A Handbook on the Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, Martinus Nijhoff Publishers, Dordrecht, 1988.

եթե այն կատարվել է որոշակի նպատակների համար: Այդ նպատակները ներառում են, ի թիվս այլ նպատակների, տուժողից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն ստանալը, նրան որևէ գործողության համար պատժելը, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ ահաբեկելը կամ հարկադրելը նրան կամ երրորդ անձի, կամ որևէ տեսակի խտրականության վրա հիմնված որևէ այլ նպատակ: «Մասնավորապես» բառի օգտագործումը վկայում է այն մասին, որ նպատակների ցուցակը սպառիչ չէ: Մյուս կողմից՝ ոչ բոլոր նպատակներն են համապատասխանում այս կետին, քանի որ այդ պարագայում նպատակների ցանկ սահմանելն իմաստ չէր ունենա: Վերաբերելի նպատակները պետք է առնվազն որոշակի ընդհանրություն ունենան թվարկման մեջ ներառված նպատակների հետ: Համարվում է, որ թվարկված նպատակները և դրդապատճառները գոյություն ունեն, եթե իշխանությունը դիտավորյալ ծանր ցավ կամ տառապանք է պատճառում անձին, և խոշտանգման սահմանումից դուրս կարող են մնալ միայն այնպիսի արարքներ, ինչպիսիք են, օրինակ, բացառապես սադիստական բնույթ ունեցող անհատական արարքները:

Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալը (ICTY) որդեգրեց այն դիրքորոշումը, որ «պարտադիր չէ, որպեսզի տվյալ գործողությունը բացառապես կատարված լինի արգելված նպատակին հասնելու համար: Այսպես՝ պահանջը բավարարված համարվելու համար՝ արգելված նպատակը պարզապես պետք է գործողության դրդապատճառների թվում լինի, և պարտադիր չէ, որ դա լինի գերիշխող կամ միակ նպատակը»[11]:

ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) սահմանմամբ նախատեսված է, որ արարքը պետք է կատարված լինի «հանրային պաշտոնյայի կամ պաշտոնական կարգավիճակով գործող այլ անձի կողմից, հրահրմամբ, համաձայնությամբ կամ թողտվությամբ», որպեսզի համարվի խոշտանգում: Այս պահանջը նախ և առաջ խոշտանգման սահմանումից դուրս է թողնում իշխանությունների հետ կապ

[11] Prosecutor v. Kunarac, Kovac and Vukovic, Case No. IT–96–23 and IT–96–23/11 (Trial Chamber), February 22, 2001, para. 486.

չունեցող մասնավոր անձանց արարքները, որոնք պետք է կարգավորվեն ազգային քրեական օրենսդրությամբ: Ավելին՝ գործողությունների այդ ցանկից հստակորեն պարզ է դառնում, որ խոշտանգումը ներառում է ոչ միայն հանրային պաշտոնյայի կողմից ուղղակիորեն կիրառված վատ վերաբերմունքը, այլ նաև հավասարապես ներառում է մասնավոր անհատների միջև տեղի ունեցած արարքները, որոնց մասին թեկուզ աննշան չափով իմացել են իշխանությունները, կամ որոնք տեղի են ունեցել վերջիններիս համաձայնությամբ: Այսինքն, օրինակ, եթե բանտարկյալը վատ վերաբերմունքի է ենթարկվում այլ բանտարկյալների կողմից, և բանտապահները լռելյայն թողտվություն են ցուցաբերում այդ վերաբերմունքի նկատմամբ (կամ անգամ հրահրում են այն) և չեն միջամտում, ապա այդ արարքները կարող են խոշտանգում լինել (եթե բավարարված են այլ տարրերը): Այսպիսով՝ մասնավոր բռնության նկատմամբ պետության անգործությունը կարող է խոշտանգում հանդիսանալ:

Խոշտանգման հարցերով ՄԱԿ–ի նախկին հատուկ զեկուցող Նայջել Ս. Ռոդլին մեկնաբանել է, որ պետության գործողության պահանջը բավարարված է, եթե հանրային պաշտոնյաները «չեն կարող կամ չեն ցանկանում անձին արդյունավետորեն պաշտպանել վատ վերաբերմունքից (այսինքն՝ չեն կանխում այդ արարքները կամ չեն վերացնում դրանց հետևանքները), ներառյալ՝ ոչ պետական սուբյեկտների կողմից վատ վերաբերմունքից»: *Z.–ն և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* գործով (գանգատ թիվ 29392/95, 10 մայիս, 2001 թ.) ՄԻԵԴ–ը նմանապես լայն ընկալմամբ է մեկնաբանել «հանրային պաշտոնյայի թողտվության» այն աստիճանը, որը բավարար կլիներ ՄԻԵԴ–ի 3–րդ հոդվածի խախտում արձանագրելու համար: Կառավարությանը պատասխանատու ճանաչելով տարիներ շարունակ սեփական ծնողների կողմից չորս երեխաներին անուշադրության մատնելու և ծանր բռնության ենթարկելու համար՝ ՄԻԵԴ–ը վճռեց, որ պետությունները պարտավոր են արդյունավետ քայլեր ձեռնարկելով ապահովել, որպեսզի իրենց իրավազորության ներքո գտնվող անձինք չենթարկվեն խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի՝ ներառյալ մասնավոր անձանց կողմից կիրառվող վատ վերաբերմունքի: Այդ քայլերը պետք է

ապահովեն, մասնավորապես, երեխաների և այլ խոցելի անձանց արդյունավետ պաշտպանությունը և ներառեն այն վատ վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված խելամիտ քայլեր, որի մասին իշխանություններն իմացել են կամ պետք է իմանային: Դատարանը վճռեց, որ հաշվի առնելով, որ տեղի սոցիալական ծառայություններն իմացել են կամ պետք է իմանային այդ երեխաների նկատմամբ իրենց ծնողների բռնության ծանր դրսևորումների մասին, պետությունը պարտավոր էր հատուկ քայլեր ձեռնարկել խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը կանխելու ուղղությամբ: Այսպիսով՝ խոշտանգումը, ՄԻԵԿ–ի համաձայն, կարող է ներառել նաև մասնավոր անձանց գործողությունները, եթե պետությունը պարտավոր է պաշտպանել տուժողներին: Այդ պարտավորությունը կարող է ծագել ներպետական օրենսդրության, տվյալ դեպքում՝ երեխաների խնամքի մասին օրենսդրության հիման վրա:

Եվ վերջապես՝ թեպետ իրավական սահմանումն այն ուղղակիորեն չի պարունակում, կարևոր է կրկնել, որ խոշտանգումը ոչ թե «հասարակ» հանցագործություն է, այլև բռնության կոնկրետ տեսակ՝ հաշվի առնելով վերը թվարկված պատճառները (ծանր ցավ կամ տառապանք, դիտավորություն, կոնկրետ նպատակ, հանրային պաշտոնյայի ներգրավում), ինչպես նաև՝ հաշվի առնելով այն փաստը, որ դա ուղղակի հարձակում է տուժողի արժանապատվության և անձնական անձեռնմխելիության նկատմամբ, որն անձին զրկում է «սուբյեկտությունից» և նրան դարձնում զուտ «օբյեկտ» մեղսագործների ձեռքերում:

Խոշտանգումների արգելքը սահմանված է նաև ***ՀՀ Սահմանադրության հոդված 26–ում,*** որի համաձայն՝

«1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք»:

Սահմանադրական այս նորմը մարդու արժանապատվության և անձեռնմխելիության իրավունքների ապահովման կարևորագույն երաշ-

խիքներից է: Միաժամանակ, այն, ինչպես արդեն նշվել է, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է:

Մինչև 2015 թ. հունիսի 9–ին «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումն իրավիճակն այնպիսին էր, որ ՄԱԿ–ի ***«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ»*** 1984 թ. դեկտեմբերի 10–ի կոնվենցիայով[12] և ՀՀ ներպետական օրենսդրությամբ խոշտանգման հանցակազմի համար սահմանված իրավակարգավորումների միջև առկա էր էական անհամապատասխանություն: Մասնավորապես, Կոնվենցիայի 4–րդ հոդվածի համաձայն՝ «մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի խոշտանգման հետ կապված բոլոր արարքները սահմանվեն քրեական օրենսդրությամբ»:

Բացի այդ՝ Խոշտանգումների դեմ ՄԱԿ–ի կոմիտեն 2007 թ. նոյեմբերին Կոնվենցիայի 2–րդ հոդվածի ընդհանուր մեկնաբանության մեջ շեշտել է, որ «մասնակից պետությունները պարտավոր են քրեական օրենսդրությամբ խոշտանգումը դարձնել պատժելի՝ Կոնվենցիայի 1–ին հոդվածով սահմանված նվազագույն հատկանիշներին համապատասխան»:

Միևնույն ժամանակ, Կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2012 թ. հուլիսի 6–ի 3–րդ պարբերական զեկույցում մտահոգություն է հայտնել ՀՀ ներպետական օրենսդրության մեջ «խոշտանգման» հանցակազմի՝ կոնվենցիոն պահանջներին անհամապատասխանության վերաբերյալ և առաջարկել է անհապաղ ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական միջոցներ:

Այսպիսի գնահատականներ հնչել են նաև Հայաստանի վերաբերյալ այլ կազմակերպությունների զեկույցներում ու վերլուծական նյութերում: Օրինակ՝ Եվրոպական հարևանության քաղաքականության իրագործման առաջընթացի գնահատման Հայաստանի վերաբերյալ Եվրոպական միության 2014 թ. զեկույցում նշվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգման հանցակազմի բնորոշումը չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված չափանիշներին հատկապես այն առումով, որ

[12] Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1993 թ. հոկտեմբերի 13–ին՝ այդպիսով դառնալով ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը:

այն չի ներառում խոշտանգման հանցակազմի համար հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի առկայության պահանջ:

Բանն այն է, որ մինչև ՀՀ քրեական օրենսգրքում վերոհիշյալ փոփոխություններն ու լրացումը կատարելը խոշտանգման հանցակազմը նախատեսված էր դասել մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքին և չէր համապատասխանում հիշատակված Կոնվենցիայով առաջադրվող չափանիշներին: Մասնավորապես, ՀՀ քր. օր. 119–րդ հոդվածի համաձայն՝ խոշտանգում էր համարվում ցանկացած գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112–րդ (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) և 113–րդ (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) հոդվածներով նախատեսված հետևանքներ:

Այսպիսով՝ ՀՀ քրեական, քրեական դատավարության օրենսգրքերի (մինչև դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելը) և Կոնվենցիոն կարգավորումների համեմատական ուսումնասիրությունը վկայում է, որ՝

1. ՀՀ քրեական օրենսգրքում վերոնշյալ հանցակազմը սահմանված էր մարդու կյանքի և առողջության, այլ ոչ թե պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների բաժնում և ավելի մեղմ պատիժ էր սահմանում, քան անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հանցակազմը:

2. Նշված արարքը պատժվում էր ազատազրկմամբ մինչև երեք տարի ժամկետով և չէր ներառում առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելը, ինչը մեծապես նվազեցնում էր խոշտանգման հանրային վտանգավորությունը՝ այն դասելով միջին ծանրության հանցագործությունների շարքին:

3. Հատուկ սուբյեկտը, այն է՝ պաշտոնատար անձը, իբրև հանցակազմի պարտադիր հատկանիշ սահմանված չէր:

4. Բացակայում էր կոնկրետ նպատակը, այն է՝ տուժողից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն ստանալու, կա-

տարած կամ ենթադրյալ արարքի համար պատժելու, վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն հարկադրելու նպատակ և այլն:

5. Կոնվենցիայի 12–րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունների իրավապահ մարմինները պետք է պատշաճ և անաչառ քննություն իրականացնեն, երբ առկա են խոշտանգման բավարար ողջամիտ հիմքեր: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183–րդ հոդվածը քրեական օրենսգրքի 119–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված խոշտանգման հանցակազմի վրա տարածում էր քրեական գործի հարուցման մասնավոր մեղադրանքի ռեժիմը, ինչը նշանակում է, որ քրեական գործի հարուցման համար անհրաժեշտ է տուժողի բողոքի առկայություն, իսկ կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու դեպքում քրեական գործը ենթակա է կարճման: Նման կարգավորումը հակասում է խոշտանգման և, ընդհանրապես, վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ արդյունավետ և անաչառ քննություն իրականացնելու պետության պոզիտիվ պարտականությունների հայեցակարգին[13]:

***Հայաստանի Հանրապետության «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 09.06.15 թ. ՀՕ–69–Ն օրենքի համաձայն՝***

*1.* Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18–ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 119–րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 119. Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը**»

2) 1–ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենս-

[13] Տե՛ս նաև՝ Հիմնավորում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման / http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=7510&Reading=0:

գրքի 112–րդ և 113–րդ հոդվածներով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 309.1–ին հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝ …

պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2. Օրենսգիրքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 309.1–ին հոդվածով.

«**Հոդված 309.1. Խոշտանգումը**

1. Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով՝

պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

5) առանձին դաժանությամբ,

6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով»:

3. Օրենսգրքի 341–րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 341. Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը**»

2) 1–ին մասի «հետաքննություն կատարող անձի կողմից» բառերը փոխարինվել են «հետաքննության մարմնի կողմից բռնություն կամ» բառերով, իսկ «վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք» բառերը՝ «դատավարությանը մասնակցող անձանց ցուցմունք կամ բացատրություն» բառերով, ինչպես նաև նույն մասի սանկցիայի «երկու» բառը փոխարինվել է «երեք» բառով.

3) 2–րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«2. Նույն արարքը, որը զուգորդվել է խոշտանգմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

4) 3–րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

5) առանձին դաժանությամբ,

6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կող-

մից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով»:

Այսպիսով՝ ՀՀ քրեական գործող օրենսգրքի 3091–րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ***խոշտանգման՝ պաշտոնապար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար, որը կատարվել է այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:***

Տվյալ արարքի ***օբյեկտիվ կողմը*** երկընտրելի է: Այն կարող է դրսևորվել՝

1) ***ֆիզիկական ուժեղ ցավ*** պատճառելով,

2) ***հոգեկան ուժեղ տառապանք*** պատճառելով:

***Սուբյեկտիվ կողմից*** խոշտանգումը բնութագրվում է ***միայն ուղղակի դիտավորությամբ:*** Սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նպատակը: Մասնավորապես, քննարկվող հանցակազմը առկա կլինի, եթե ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառվի՝

– այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով,

– այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է,

– այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով,

– ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

Նշված նպատակներից գոնե մեկի բացակայության դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր. 309–րդ հոդվածով՝ որպես պաշտոնեական լիազորությունների անցում:

ՀՀ քր. օր. 3091–րդ հոդվածի դիսպոզիցիայի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ քննարկվող հանցագործության սուբյեկտ կարող է լինել ինչպես ***պաշտոնատար անձը կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավունք ունեցող անձը,*** այնպես էլ ***պաշտոնատար անձ չհանդիսացող ցանկացած այլ անձ,*** որը գործել է ***պաշտոնատար անձի գիտությամբ, կարգադրությամբ կամ դրդմամբ:***

Հարց է առաջանում՝ նման դեպքերում ինչպե՞ս պետք է որակել պաշտոնատար անձի և պետական մարմնի անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի արարքները. որպես խոշտանգո՞ւմ, թե՞ խոշտանգման հանցակցություն (կազմակերպում, դրդչություն կամ օժանդակություն):

Ի տարբերություն ՀՀ քրեական գործող օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքի նախագիծը լուծել է այս հարցը՝ սահմանելով, որ ***խոշտանգում է համարվում պաշտոնատար անձի կողմից անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք ապօրինաբար պատճառելը կամ դրան դրդելը կամ դրա համաձայնություն տալը կամ դրա կապակցությամբ թողտվություն դրսևորելը՝ այդ կամ մեկ այլ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ անձը կամ մեկ ուրիշը կատարել է կամ որի կատարման մեջ մեղադրվում է, այդ կամ մեկ այլ անձին վախեցնելու կամ որևէ գործողություն կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված որևէ պատճառով:***

ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդված 3091–ի 2–րդ մասով նախատեսված են խոշտանգման ծանրացնող հանգամանքները:

Դրանք են՝ նույն արարքը, որը՝

1) կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) կատարվել է անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,

3) կատարվել է ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

5) կատարվել է առանձին դաժանությամբ,

6) կատարվել է անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

Այն դեպքերում, երբ խոշտանգումը կատարում է ***դատավորը, դատախազը, քննիչը կամ հետաքննություն կատարող անձը՝*** **ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար, արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր. 341–րդ հոդվածի 2–րդ մասով:**

**Խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելման առումով կարևոր նշանակություն ունի նաև ՀՀ քրեական օրենսգրքի 11–րդ հոդվածը, որը քրեական օրենսդրության սկզբունքների շարքում նախատեսում է մարդասիրության սկզբունքը: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝**

«1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Բացի այդ՝ տվյալ ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն են նվիրված մի շարք այլ իրավական ակտերում նախատեսված համապատասխան դրույթները: Մասնավորապես.

***ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 6–ի («Մարդասիրության սկզբունքը») համաձայն՝***

«1. Պատժի կատարումը, ինչպես նաև պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը չպետք է զուգակցվեն անձի նկատմամբ ֆիզիկական բռնությամբ, ինչպես նաև այնպիսի գործողություններով, որոնք կարող են հանգեցնել անձի սոցիալ–հոգեբանական զարգացման հետընթացի:

2. Դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգամանք չի կարող հիմք ծառայել խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արդարացնելու համար»:

***«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ 2002 թ. փետրվարի 6–ի օրենքի հոդված 2–ի համաձայն՝***

«Ձերբակալված անձին արգելանքի կամ կալանավորված անձին կալանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին և Քրեական դատավարության օրենսգրքին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ արգելվում է ֆիզիկական բռնություն գործադրել, ինչպես նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ:

Սույն օրենքով նախատեսված՝ ձերբակալված անձանց արգելանքի կամ կալանավորված անձանց կալանքի տակ պահելու կարգն ու պայմանները տարածվում են բոլոր ձերբակալված կամ կալանավորված անձանց վրա՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից»:

***ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11–րդ հոդվածի («Անձի անձեռնմխելիությունը») 7–րդ մասի համաձայն՝***

«Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

***Նույն օրենսգրքի 497–րդ հոդվածի («Տարանցիկ փոխադրման թույլտվությունը») 3–րդ մասի համաձայն՝*** «Տարանցումը չի թույլատրվում այն երկիր, որտեղ հանձնման ենթակա անձի կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի, ազգային կամ ռասայական պատկանելության, կրոնի, քաղաքացիական կամ քաղաքական հայացքների պատճառով»:

***«Ոստիկանության մասին» ՀՀ 2001 թ. ապրիլի 16–ի օրենքի 3–րդ հոդվածի համաձայն՝***

«Ոստիկանության գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների վրա:

Ոստիկանությունն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, լիազորությունների իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Ոստիկանության հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: (...)»:

***Նույն օրենքի 5–րդ հոդվածը*** սահմանում է մարդու անձեռնմխելիության երաշխիքները: Մասնավորապես, նշված հոդվածի 2–րդ և 3–րդ պարբերությունների համաձայն՝

«Ոստիկանության կողմից մարդուն խոշտանգումների, բռնության, այլ դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը պատժվում է օրենքով:

Ոստիկանության կողմից իրավունքների ու ազատությունների սահմանափակումները հնարավոր են միայն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում»:

***Խոշտանգման հիմնախնդիրներին է անդրադարձել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը:*** Մասնավորապես, այդ կապակցությամբ իրավական դիրքորոշումներ են արտահայտել հետևյալ որոշումներում.

***1) Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի և Արայիկ Զալյանի վերաբերյալ 22.12.2006 թ. ՎԲ–176/06 գործով.***

***2) Արայիկ Գզոյանի վերաբերյալ 12.02.2010 թ. ԵԱՔԴ/0049/01/09 գործով.***

***3) Ալիկ Մաթևոսյանի վերաբերյալ 26.03.2010 թ. ՎԲ–04/10 գործով.***

***4) Սվետլանա Գրիգորյանի վերաբերյալ 11.05.2011 թ. ԵԿԴ/0281/01/10 գործով.***

***5) Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ 01.11.2012 թ. ԱՐԴ/0176/01/11 գործով.***

***6) Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ 28.11.2013 թ. ՎԲ–05/13 գործով.***

***7) Ռուզաննա Նիազյանի վերաբերյալ 31.05.2014 թ. ԵԿԴ/0118/11/13 գործով.***

***8) Իլլարիոն Նունուշյանի վերաբերյալ 05.06.2015 թ. ԵՇԴ/0070/01/13 գործով:***

## ԹԵՄԱ 2. ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՅԼ ՁԵՎԵՐԸ

Խոշտանգումն այլ (դաժան), անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից տարբերակելն ունի իրավական հետևանքներ: Մասնավորապես, խոշտանգման արգելքը *յուս կոգենս* նորմ է, ինչպես նշվեց, մինչդեռ վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքը միջազգային իրավունքի համաձայն միևնույն իրավական կարգավիճակը չունի: Այնուամենայնիվ, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը նույնպես բացարձակապես արգելված է, և այդ արգելքից որևէ շեղում հնարավոր չէ (ՄԻԵԿ–ի 15–րդ հոդված): Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի առումով պետության պարտավորությունների տարբերակումը կարելի է գտնել ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայում: Օրինակ՝ վերջինիս միացած պետությունները պարտավոր են որպես այդպիսին քրեականացնել խոշտանգումը, այսինքն՝ իրենց քրեական օրենսգրքում ներառել խոշտանգումը որպես առանձին հանցատեսակ, սակայն նույն պարտավորությունը գոյություն չունի վատ վերաբերմունքի այլ ձևերի առումով (ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի 4–րդ հոդված): Այնուամենայնիվ, առնվազն անմարդկային վերաբերմունքի ձևերի մեծ մասը, օրինակ՝ մարմնական վնասվածք պատճառելը կամ իշխանության չարաշահումը, ցանկացած պետությունում հանցագործություն է: Մյուս կողմից՝ ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի մասնակից պետություններն ուղղակի պարտավոր են իրականացնել խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ բողոքների արդյունավետ քննություն:

Այնուհանդերձ, ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայով կամ որևէ այլ միջազգային պայմանագրով նախատեսված չէ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի ընդհանուր առմամբ ընդունելի համարվող սահմանում: ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի 16–րդ հոդվածով ընդամենը նախատեսվում է հետևյալը.

Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ

պատժի այլ՝ I հոդվածի իմաստով խոշտանգում չհանդիսացող գործողությունները, երբ այդ գործողությունները կատարվել են հանրային պաշտոնյայի կամ պաշտոնեական կարգավիճակով գործող այլ անձի կողմից, հրահրմամբ, համաձայնությամբ կամ թողտվությամբ:

Սահմանման բացակայության պատճառով վերջին տարիներին մշակվել են տարբերակման տարաբնույթ մեթոդներ: Ամենահաճախ կիրառվող հայեցակարգային մոտեցումը ՄԻԵԴ–ի մշակածն է, որը հիմնականում կախված է ցավի ծանրությունից: *Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության* գործով ՄԻԵԴ–ը վճռեց, որ Բրիտանական անվտանգության ուժերի կողմից Հյուսիսային Իռլանդիայում կիրառված հարցաքննության հինգ հնարքների համակցությունն անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք է եղել, սակայն ո՛չ խոշտանգում ՄԻԵԿ–ի իմաստով՝ ի տարբերություն Հանձնաժողովի կողմից նախկինում կայացված որոշման: ՄԻԵԴ–ն իր դիրքորոշումը պատճառաբանեց հետևյալ կերպ.

[խ]ոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի տարբերակումը հիմնականում պայմանավորված է եղել պատճառված տառապանքի ծանրությամբ: […] «Խոշտանգում» եզրույթը հատուկ խարան է վերագրում դիտավորյալ անմարդկային վերաբերմունքին, որը շատ ծանր և դաժան տառապանք է պատճառում:

[Հինգ հնարքները] չեն պատճառել այնպիսի ծանրության և դաժանության տառապանք, ինչպիսին բխում է «խոշտանգում» բառի իմաստից:

Այնուամենայնիվ, այս տարբերակումն անթերի չէ, քանի որ դրանով նախատեսվող բաժանարար գիծն իրավական հետևանքներ է առաջացնում՝ ելնելով սուբյեկտիվ զգացողությունից, որը քանակական չափման ենթակա չէ, այն է՝ տուժողի կողմից ցավը զգալու ծանրությունից: Այսպիսով՝ ուրիշները նախընտրում են կիրառել այն հայեցակարգային մոտեցումը, որի համաձայն՝ «անմարդկային» վերաբերմունքը նույնպես

պետք է ցավի կամ տառապանքի որոշակի նվազագույն մակարդակի հասնի, սակայն պարտադիր չէ, որ կիրառված լինի որոշակի նպատակի համար կամ որոշակի դիտավորությամբ:

Խոշտանգման հարցերով նախկին հատուկ զեկուցողը՝ Մանֆրեդ Նովակը, առաջարկել է խոշտանգումը վատ վերաբերմունքի այլ ձևերից տարբերակելու չափորոշիչ դարձնել տուժողի անօգնականությունը կամ անպաշտպանությունը, երբ նա ամբողջովին գտնվում է խոշտանգողի իշխանության ներքո և այլևս չի կարող պաշտպանել իրեն:

Անմարդկային վերաբերմունքի բազմաթիվ դեպքեր են տեղի ունենում ազատազրկման իրավիճակում, որում տուժողներն ազատազրկված են անմխիթար և գերբնակեցման պայմաններում, առանց իմաստավորված զբաղմունքի կամ բուժօգնության, որը կարող է ծանր տառապանքի զգացողություն առաջացնել, սակայն իշխանությունների կողմից չեն կիրառվում որոշակի դիտավորությամբ կամ որոշակի նպատակի համար: Այնուհանդերձ, այդ օրինակը հիմնավորում է նաև այն փաստը, որ պարտադիր չէ, որպեսզի անմարդկային վերաբերմունքը միշտ ներառի կոնկրետ *գործողություն*, այլ կարող է պատճառվել նաև իշխանությունների *անգործությամբ*:

Այնուամենայնիվ, վատ վերաբերմունք կարող է տեղի ունենալ նաև ազատազրկման վայրերից դուրս, հատկապես ցույցերի և ամբոխի վերահսկման նպատակով իրականացվող ոստիկանական օպերացիաների, ինչպես նաև ձերբակալությունների ընթացքում: Այդ դեպքերում անհրաժեշտ է համաչափությունը խստորեն ստուգելու միջոցով պարզել, թե արդյոք ուժի գործադրումը եղել է համաչափ (և ըստ այդմ՝ օրինական), թե ոչ (այսինքն՝ առաջացրել է անմարդկային վերաբերմունք): Այլ կերպ ասած՝ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածով արգելվում են անձանց ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ միջամտության ոչ բոլոր դեպքերը: Որոշակի դեպքերում հանրային իշխանությունները, մասնավորապես իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք, ստիպված են լինում կիրառել ֆիզիկական ուժը, որը փաստացի կարող է ծանր ցավ պատճառել համապատասխան անձին, օրինակ՝ պղպեղի սփրեյն օգտագործելու դեպքում: Այնուամենայնիվ, այդ վերաբերմունքը չի համար-

վի անմարդկային, եթե այն կիրառվել է օրենքի համաձայն, հետապնդել է իրավաչափ նպատակ (օրինակ՝ այլոց կյանքի պաշտպանությունը) և համաչափ է եղել տվյալ հանգամանքներում: Որպես օրինակ կարելի է դիտարկել ուժի գործադրումը պատանդ վերցնողի նկատմամբ: Բռնարարին վերահսկելի դարձնելու պահից սկսած, սակայն, նրա նկատմամբ ցավի գործադրումը շարունակելն այլևս չի կարող հիմնավորված լինել, քանի որ դա կհամարվի անմարդկային վերաբերմունք, իսկ նպատակի (այսինքն՝ պատժելու նպատակի) առկայության և համապատասխան այլ տարրերի գոյության դեպքում՝ անգամ խոշտանգում:

«Նվաստացուցիչ» վերաբերմունքն այն է, որը պատճառում է վախի, տառապանքի և ստորակարգության զգացումներ, որոնք ի զորու են նվաստացնելու և ստորացնելու տուժողին: Որպես նվաստացուցիչ է նկարագրվել նաև այն վերաբերմունքը, որը հանգեցնում է տուժողի ֆիզիկական կամ բարոյական դիմադրությունը կոտրելուն (*Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության*) կամ տուժողին հասցնում է նրան, որ վերջինս գործի սեփական կամքին կամ խղճին հակառակ (Հանձնաժողովի եզրակացությունները *Greek* գործի վերաբերյալ): Պարտադիր չէ, որ նվաստացուցիչ վերաբերմունքը հասնի ցավի որոշակի մակարդակի, սակայն այն պետք է հանգեցնի նվաստացման կամ ստորացման որոշակի մակարդակի, որն ավելին է, քան նվաստացման այն անխուսափելի մակարդակը, որը բխում է, օրինակ, ազատազրկումից և նման-օրինակ այլ դատական պատժամիջոցներից:

*Tyrer–ն ընդդ. Միացյալ Թագավորության* գործով Դատարանը վճռեց, որ Մենի կղզում կիրառվող ֆիզիկական պատիժը փաստացի նվաստացուցիչ է եղել այդ պատժին ենթարկվողների համար: Դատարանն իր փաստարկներում սահմանազատեց թույլատրելի պատիժները և ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում առաջացնող պատիժը.

Դատարանն առաջին հերթին նկատում է, որ քրեական գործով դատապարտվելու փաստն ինքնին կարող է նսեմացնել անձին: Այնուհանդերձ, 3–րդ հոդվածի իմաստով նշանակալին այն է, որ

նա պետք է նվաստացված լինի ոչ միայն դատապարտման, այլև իր նկատմամբ նշանակված պատժի կատարման հետևանքով: Բոլոր կամ գրեթե բոլոր գործերի շրջանակում դա կարող է դատական պատժի հետևանքներից մեկը լինել՝ իր հետ բերելով սեփական կամքին հակառակ քրեակատարողական համակարգի պահանջներին ենթարկվելը: Այնուամենայնիվ, […] Կոնվենցիայի 3–րդ հոդվածով նախատեսված արգելքը բացարձակ է. բացառության որևէ հնարավորություն նախատեսված չէ, և 15–րդ հոդվածի 2–րդ մասով նույնպես արգելվում են շեղումները 3–րդ հոդվածից: Անհեթեթ կլիներ վճռել, որ դատական պատիժը, ունենալով նսեմացման՝ իրեն բնորոշ և գրեթե անխուսափելի տարր, ընդհանրապես «նվաստացուցիչ» է Կոնվենցիայի 3–րդ հոդվածի իմաստով: […] Հիրավի, ուղղակիորեն արգելելով «անմարդկային» և «նվաստացուցիչ» պատիժը, 3–րդ հոդվածը ենթադրում է, որ այդ պատիժը տարբերվում է ընդհանուր առմամբ կիրառվող պատժից:

Դատարանը համարում է, որ պատիժը «նվաստացուցիչ» է և առաջացնում է 3–րդ հոդվածի խախտում, եթե նվաստացումը կամ ստորացումը հասել է որոշակի աստիճանի, որը ցանկացած պարագայում տարբերվում է նախորդ պարբերության մեջ նշված նսեմացման սովորական պարագայից:

[…] պետք է ընդգծել, որ պատիժը չի զրկվում իր նվաստացուցիչ բնույթից զուտ այն պատճառով, որ այն համարվում կամ փաստացի հանդիսանում է հանցավորության դեմ պայքարի կամ հանցավորության կանխարգելման արդյունավետ միջոց: Որպես կարևորագույն հանգամանք՝ Դատարանը պարտավոր է ընդգծել, որ երբևէ չի թույլատրվում դիմել 3–րդ հոդվածին հակասող պատիժների՝ անկախ դրանց կանխարգելիչ արդյունքից:

[…] 3–րդ հոդվածի իմաստով պատժի «նվաստացուցիչ» լինելը գնահատելիս նշանակալի գործոն կարող է լինել հրապարակայնությունը, սակայն Դատարանը չի համարում, որ հրապարակայնության բացակայությունն ինքնին նշանակում է, որ պատիժն այդպիսին չի կարող լինել. հնարավոր է, որ լիովին բավարար կլինի տուժողի՝

սեփական աչքերում նվաստացված լինելը, անգամ եթե դա տեսանելի չի եղել ուրիշներին:

[…] դատական ֆիզիկական պատիժն իր բուն բնույթով ներառում է մեկ մարդու կողմից մեկ այլ մարդու նկատմամբ ֆիզիկական բռնության գործադրումը: Ավելին՝ դա ինստիտուցիոնալացված բռնություն է, որը տվյալ դեպքում օրենքով թույլատրված բռնություն է, որը նշանակվում է պետության դատական իշխանությունների կողմից և ի կատար է ածվում պետության ոստիկանական մարմինների կողմից: Այսպիսով՝ թեպետ գանգատաբերը ծանր կամ տևական ֆիզիկական հետևանքներ չի կրել, նրա պատիժը, որի շրջանակում նրան վերաբերվել են՝ ինչպես իշխանությունների կամքից կախված առարկայի, ոտնձգություն է եղել հենց 3–րդ հոդվածով պաշտպանվող հիմնական արժեքի, այն է՝ անձի արժանապատվության և ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ: Ավելին՝ հնարավոր չէ բացառել, որ տվյալ պատիժը կարող է հոգեբանական հետևանքներ առաջացրած լինել:

Այս բռնության ինստիտուցիոնալացված բնույթն էլ ավելի է բարդանում՝ հաշվի առնելով պատժի ի կատար ածմանը ներհատուկ պաշտոնական ընթացակարգը և այն փաստը, որ այն ի կատար ածողները բացարձակապես անծանոթ են եղել իրավախախտին:

[…], իր վերապրած ֆիզիկական ցավից զատ, պրն Թայրերը նաև կրել է հոգեկան տառապանք՝ սպասելով իր նկատմամբ կիրառվելիք բռնությանը:

Դատարանը սույն գործի համար անէական է համարում այն հանգամանքը, որ դատարանը ֆիզիկական պատիժը նշանակել էր բռնությամբ կատարված հանցագործության համար: Ավելին՝ Դատարանը անէական է համարում այն հանգամանքը, որ պրն Թայրերի համար ճիպոտի հարվածները եղել են այլընտրանք որոշակի ժամկետով ազատազրկմանը. այն փաստը, որ պատժատեսակներից մեկը կարող է նախընտրելի լինել կամ մյուսից պակաս բացասական հետևանքներ ունենալ կամ պակաս ծանր լինել, ինքնին դեռ չի նշանակում, որ առաջին պատիժը «նվաստացուցիչ» չէ 3–րդ հոդվածի իմաստով:

Ինչպես ցանկացած այլ իրավունք, այնպես էլ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի չենթարկվելու իրավունքը ներառում է նեգատիվ կողմը, այսինքն՝ խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքը («հարգելը»), ինչպես նաև պետության պոզիտիվ պարտավորությունները («պաշտպանելը», «իրականացնելը»): Այս իմաստով «պաշտպանելը» ներառում է մասնավոր անձանց պաշտպանությունն այլ մասնավոր անձանց կողմից դրսևորվող վատ վերաբերմունքից, որը հիմնականում ապահովվում է երկրի քրեական օրենսդրության և արդարադատության համակարգի միջոցով: Դրա օրինակներ են ընտանեկան բռնության, բանտարկյալների միջև բռնության և նմանօրինակ այլ խնդիրների դեմ պայքարի արդյունավետ միջոցները: ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածից և ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայից (CAT) բխող պոզիտիվ պարտավորությունների օրինակներ են նաև խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքի հնարավոր խախտման դեպքում արդյունավետ քննության իրականացումը (տես ստորև՝ 5–9–րդ դասեր): Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքից բխող՝ պետության պարտավորությունների «իրականացման» միջոցառումներից կարող են լինել վատ վերաբերմունքի կանխարգելման երաշխիքները, օրինակ՝ ոստիկանությունում հարցաքննվելու ընթացքում փաստաբան ունենալու իրավունքը և ոստիկանների և բանտերում աշխատողների համար պատշաճ վերապատրաստման կազմակերպումը:

## ԴԱՍԵՐ 5–10. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս դասերի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել ՄԻԵԴ–ի դիրքորոշումներին՝ կապված համապատասխան պաշտոնատար անձանց կողմից սպանության (մահվան ելքով այլ դեպքերի), ինչպես նաև խոշտանգման ու վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների արդյունավետ քննություն կատարելու պարտականության հետ: Նրանց պարզաբանվում են նման քննություն նախաձեռնելու հիմնական սկզբունքները, ինչպես նաև դրա հնարավոր դադարեցումը: Մասնակիցներին ներկայացվում են այդ կարգի գործերով քննության առանձնահատուկ բնույթը, տուժողի (նրա ընտանիքի) առանձնապես խոցելի վիճակը, որի

կապակցությամբ բացատրվում է ապացուցման բեռի տեղափոխման էությունը: Մանրամասնորեն պարզաբանվում են, մասամբ՝ ազգային փորձագետների կողմից, «արդյունավետ քննության» տարրերը՝ ներառյալ անկախությունը/անկողմնակալությունը, անհապաղությունը, համարժեքությունը (լիազորությունները և լիարժեքությունը) և տուժողի ներգրավումը/հանրային վերահսկողությունը: Միջազգային պարտավորությունների համատեքստում ներկայացվում են արդյունավետ քննությանը վերաբերող ազգային օրենսդրությունը և դատական պրակտիկան (մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները):

## ԴԱՍ 5. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌԸ

Խոշտանգման արգելքն իրականացնելու՝ պետության պարտավորություններից է խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի համար անպատժելիության դեմ պայքարը: Նմանապես, կյանքի իրավունքի շրջանակում պետությունը պարտավոր է արդյունավետ քննություն իրականացնել այն դեպքերում, երբ անձը զրկվել է կյանքից, կամ երբ հանրային պաշտոնյայի կողմից անձի նկատմամբ կիրառվել է պոտենցիալ մահաբեր ուժ, իսկ խախտումները հիմնավորելու դեպքում՝ նաև արդարադատություն իրականացնել նրանց նկատմամբ:

Կոնվենցիայի 1–ին հոդվածով սահմանված՝ պետության ընդհանուր պարտավորության («իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց համար ապահովել սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և ազատությունները») հետ մեկտեղ ընթերցվելու պարագայում ստացվում է, որ այս դրույթի ներքո կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորությունն անուղղակիորեն ներառում է որոշակի արդյունավետ պաշտոնական քննություն իրականացնելու պարտավորությունն այն դեպքում, երբ անձը սպանվել է, ի թիվս այլոց, պետության ներկայացուցիչների կողմից ուժի գործադրման հետևանքով:

*McCann–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության*

2–րդ հոդվածի, այսպես կոչված, դատավարական բաղադրիչին վերաբերող դատական նախադեպի ձևավորումը սկիզբ առավ *McCann–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* գործից, որը վերաբերում էր պետության ներկայացուցիչների կողմից մի շարք անձանց սպանությանը: Հետագա դատավճիռներում Դատարանն ընդլայնեց պետության պատասխանատվությունը՝ դրանում ներառելով նաև ազատազրկման մեջ գտնվելու ընթացքում մահվան դեպքերի, չբացահայտված սպանությունները և հանցավոր համաձայնության մեղադրանքները և «անհետացումների» դեպքերի արդյունավետ քննության պարտավորությունը:

Թեպետ այս և հետագա գլուխները հիմնականում վերաբերում են սպանության այն դեպքերին, որոնք ինչ–որ ձևով կարող են կապվել իշխանությունների հետ (օրինակ, երբ հանրային պաշտոնյաներն ուժ են գործադրել, կամ երբ ազգականները բողոք են ներկայացրել իշխանությունների կողմից անօրինական սպանության վերաբերյալ, կամ երբ անձը մահացել է ազատազրկման մեջ), այնուհանդերձ, հարկ է վերհիշել, որ կյանքի իրավունքը պաշտպանելու՝ պետության պատասխանատվությունը ներառում է «պետության ընդհանուր առաջնային պարտականությունը՝ անձի նկատմամբ հանցագործությունները կանխող արդյունավետ քրեաիրավական նորմերի սահմանմամբ երաշխավորելու կյանքի իրավունքը, ինչպես նաև ձևավորելու այդպիսի նորմերի խախտումները կանխող, պատժող և դրանց դեմ պայքարող իրավապահ համակարգ» (*Osman–ն ընդդ. Միացյալ Թագավորության*): Իսկապես, պետությունը նույն կերպ պարտավոր է քննել մահվան ցանկացած դեպք, բացառությամբ երբ մահը վրա է հասել բնական ճանապարհով, ներառյալ այն դեպքերը, երբ անձը մահացել է մասնավոր անձանց կամ անհայտ անձանց գործողությունների հետևանքով, ինչպես Դատարանը նշել է *Angelov–ը և Iliev–ն ընդդ. Բուլղարիայի* գործով: Գանգատաբերի 28–ամյա որդին և եղբայրը ծեծվել և դանակահարությամբ սպանվել էին յոթ դեռահասների կողմից, որը ենթադրաբար ունեցել էր ռասիստական շարժառիթ՝ պայմանավորված նրանց գնչուական ծագմամբ:

Թեպետ պետությունը որևէ մասնակցություն չի ունեցել գանգատաբերների ազգականի մահվանը, Դատարանը համարում է, որ դատավարական վերոհիշյալ նվազագույն պահանջները հավասարապես կիրառելի են անձի կյանքի համար վտանգավոր հարձակման քննության նկատմամբ՝ անկախ դրա հետևանքով նրա մահանալու կամ չմահանալու հանգամանքից […]: Ավելին՝ պետք է հավելել, որ այն դեպքում, երբ հարձակումն ունեցել է ռասայական շարժառիթ, առանձնապես կարևոր է, որպեսզի քննությունն իրականացվի հատուկ եռանդով և անկողմնակալությամբ՝ հաշվի առնելով, որ անհրաժեշտ է հասարակության մեջ շարունակաբար արմատավորել ռասիզմը դատապարտող վերաբերմունքը և ապահովել փոքրամասնությունների վստահությունը ռասայական բռնության վտանգից իրենց պաշտպանելու՝ իշխանությունների կարողության նկատմամբ:

ՄԻԵԴ–ը ոչ պակաս հաճախականությամբ արձանագրել է նաև 3–րդ հոդվածի «դատավարական բաղադրիչի» մեծաթիվ խախտումներ՝ անգամ այն գործերով, որոնցում այդ հոդվածի նյութահիրավական խախտումը հնարավոր չի եղել արձանագրել: Դա կրկնվել է մի քանի անգամ:

[Դ]ատարանը վերհիշում է, որ այն դեպքում, երբ անձը արժանահավատ կերպով պնդում է, որ ոստիկանության կամ պետության այլ նմանատիպ ներկայացուցիչների ձեռքում ենթարկվել է 3–րդ հոդվածը խախտող վերաբերմունքի, այդ դրույթը, Կոնվենցիայի 1–ին հոդվածով սահմանված՝ պետության ընդհանուր պարտավորության («իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց համար ապահովել սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և ազատությունները») հետ մեկտեղ ընթերցվելու պարագայում նշանակում է, որ պահանջվում է իրականացնել արդյունավետ պաշտոնական քննություն: […] Այլապես խոշտանգման և անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի ու պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած դրա հիմնարար կարևորությանը, անարդյունավետ կլինի գործնականում, իսկ որոշ դեպքերում պետության ներկայացուցիչները հնարավորություն կունենան գրեթե

անպատիժ կերպով ոտնահարելու իրենց վերահսկողության ներքո գտնվողների իրավունքները:

Նմանապես, Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովը (ԽԿՀ, CPT) 14–րդ ընդհանուր զեկույցում (2004 թ.) նշել է հետևյալը.

[Խ]ոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի նկատմամբ վստահությունը սասանվում է յուրաքանչյուր անգամ, երբ այդ իրավախախտումների համար պատասխանատու պաշտոնյաներն իրենց գործողությունների համար չեն ենթարկվում պատասխանատվության: Չձեռնարկելով արդյունավետ գործողություններ, համապատասխան անձինք՝ գործընկերները, բարձրաստիճան ղեկավարները, քննող և քրեական հետապնդում իրականացնող մարմինները, վերջին հաշվով կնպաստեն այն արժեքների քայքայմանը, որոնք ժողովրդավարական հասարակության հիմունքներն են: Եվ հակառակը, եթե խոշտանգումը և վատ վերաբերմունքը կարգադրող, թույլատրող, հանդուրժող կամ կատարող պաշտոնյաներն արդարադատության առաջ են կանգնում իրենց գործողությունների կամ բացթողումների համար, ուղարկվում է միանշանակ ուղերձ այն մասին, որ նման վարքը չի հանդուրժվելու: Ի լրումն իր լուրջ կանխարգելիչ նշանակությանը՝ այդ ուղերձը վերահավաստիացնում է հանրության լայն շրջանակներին, որ ոչ ոք օրենքից վեր չէ, անգամ այն պահպանելու համար պատասխանատու անձինք: Վատ վերաբերմունքի պատասխանատուներին արդարադատության առաջ կանգնեցնելու մասին իմանալը շահեկան ազդեցություն է ունենում նաև տուժողների համար:

3–րդ հոդվածին հակասող վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության առաջին սկզբունքային նախապայմանը պետության քրեական օրենսգրքում խոշտանգման հանցակազմի գոյությունն է: Ինչպես նշվեց նախորդ դասի շրջանակում, Խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի համաձայն՝ դրան միացած պետությունները պարտավոր են

քրեականացնել խոշտանգումն առանձին դրույթով, որը կարտացոլի տվյալ հանցագործության առանձնահատկությունները:

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 4–ՐԴ ՀՈԴՎԱԾ

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է ապահովել, որպեսզի խոշտանգման գործողությունները քրեականացված լինեն իր քրեական օրենսդրությամբ: Նույնը վերաբերում է խոշտանգում կատարելու փորձին և խոշտանգմանը մասնակցելու կամ խոշտանգման մեջ հանցակցության գործողություններին:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է այդ հանցագործությունների համար սահմանել այնպիսի համապատասխան պատիժներ, որոնցում հաշվի կառնվի դրանց ծանր բնույթը:

Խոշտանգման դեմ պայքարի հանձնաժողովը կանոնավոր կերպով խորհուրդ է տալիս, որպեսզի խոշտանգման հանցակազմի՝ ազգային օրենսդրությամբ տրված սահմանումը լինի Խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի 1–ին հոդվածով նախատեսված սահմանման հայելային արտացոլումը: Եվ հակառակը, կարիք չկա առանձին քրեականացնելու պետության ներկայացուցիչների կողմից անօրինական սպանությունը, քանի որ աշխարհի գրեթե բոլոր պետություններն իրենց քրեական օրենքներով արդեն իսկ քրեականացրել են անօրինական սպանությունը, որը նույնպես ողջ աշխարհում դասվում է ծանր հանցագործությունների շարքին: Ավելին՝ Խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի հեղինակները ուղղակիորեն չեն սահմանել պետությունների պարտավորությունը՝ համապատասխան քրեական օրենքներով առանձին հանցատեսակներով քրեականացնելու նաև անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը: Ուստի վատ վերաբերմունքի այլ ձևերը քննելիս հաճախ պետք է լինում բավարարվել ավանդական հանցատեսակներով, ինչպիսիք են մարմնական վնասվածք պատճառելը, պաշտոնեական դիրքը չարաշահելը և այլք:

Դատարանի նախադեպային պրակտիկային և միջազգային այլ փաստաթղթերին և այլ մարմինների պրակտիկային համահունչ, ներառյալ

Ստամբուլյան արձանագրությունը[14] կամ ԽԿՀ–ն, գոյություն ունեն տարաբնույթ իրավիճակներ, որոնցում իշխանությունները պարտավոր են հարուցել և իրականացնել արդյունավետ քննություն: Նախ և առաջ, իհարկե, պահանջվում է քննել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի կամ պետության ներկայացուցչի կողմից սպանության վերաբերյալ ցանկացած բողոք, որը ներկայացվել է պաշտոնապես («արժանահավատ պնդում») և ակնհայտորեն անհիմն չէ («փաստականորեն անհնարին» չէ):

Այնուամենայնիվ, իշխանությունները պարտավոր են նաև *սեփական նախաձեռնությամբ ի պաշտոնե* քննություն իրականացնել, երբ չեն ստացել պաշտոնական բողոք, սակայն ստացել են ՄԻԵԿ–ի 2–րդ և 3–րդ հոդվածներին հակասող վերաբերմունքի մասին արժանահավատ (այսինքն՝ փաստականորեն ոչ անհնարին) տեղեկություններ, ինչպես նաև՝ երբ բավականաչափ հստակ այլ տվյալներ են ստացել խոշտանգման կամ անօրինական սպանության փաստ տեղի ունեցած լինելու մասին: Վերջինս կարող է ներառել ազատազրկված անձանց վրա տեսանելի մարմնական վնասվածքները կամ դրանց վերաբերյալ ստացված հաղորդումները՝ որպես վատ վերաբերմունքի հնարավոր նշաններ, որոնք պետք է պաշտոնապես քննել, կամ՝ ոստիկանությունում ազատազրկումից հետո դատավորի մոտ տարվող անձի ընդհանուր տեսքը կամ պահվածքը: Ինչ վերաբերում է 2–րդ հոդվածին, ապա Դատարանը շարունակաբար պահանջել է, որպեսզի պետության անվտանգության ուժերի գործողություններով պատճառված մահվան ցանկացած դեպքի, ինչպես նաև ազատազրկման վայրերում տեղի ունեցած մահվան ցանկացած դեպքի կապակցությամբ իրականացվի արդյունավետ քննություն: Դատարանը *Salman–ն ընդդ. Թուրքիայի* գործով (գանգատ թիվ 21986/93, 27 հունիս, 2000 թ.) արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

Այն պարզ փաստը, որ իշխանությունները տեղյակ են եղել ազատազրկման պայմաններում Ագիթ Սալմանի մահվան մասին, ինքնին

[14] Խոշտանգման և դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ այլ վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության և փաստաթղթավորման ձեռնարկ (Manual on Effective Investigation and Documentation of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment):

առաջացրել է մահվանն առնչվող հանգամանքների արդյունավետ քննություն իրականացնելու՝ 2–րդ հոդվածից բխող պարտավորություն: Համապատասխան դեպքերում դա ներառում է դիահերձումը, որը պետք է լիարժեք և ճշգրիտ տեղեկություններ տրամադրի վատ վերաբերմունքի հնարավոր նշանների և մարմնական վնասվածքների մասին, ինչպես նաև կլինիկական բացահայտումների, ներառյալ՝ մահվան պատճառի օբյեկտիվ վերլուծությունը:

Քննություն հարուցելու առումով կարևորվում են նաև Վատ վերաբերմունքի արդյունավետ քննության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղենիշները[15], որոնցում պետություններին առաջարկվում է ունենալ մեխանիզմների և ընթացակարգերի հստակ համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի հաղորդել վատ վերաբերմունքին, ինչպես նաև պետության ներկայացուցչի մասնակցությամբ տեղի ունեցած մահվան կասկածելի դեպքերին վերաբերող բողոքները, տվյալները և ապացույցները: Այդ համակարգը պետք է հավասար հիմունքներով հասանելի լինի բոլոր անհատներին՝ ներառյալ ազատազրկվածներին: Պետությունները պետք է ապահովեն տարաբնույթ մեխանիզմներ, որոնց միջոցով անհատները կամ նրանց ներկայացուցիչները կամ ընտանիքի անդամները կկարողանան իրենց բողոքները գաղտնի կերպով հաղորդել ներպետական և միջազգային իրավասու մարմիններին՝ ներառյալ վերադաս պաշտոնատար անձանց, կառավարական մարմիններին, դատական և դատախազական մարմիններին, բողոքներ քննող մասնագիտացած մարմիններին և տեսչական ու դիտորդական մեխանիզմներին: Նման համակարգի գոյությունը չապահովելն ինքնին կարող է առաջացնել արդյունավետ քննություն կատարելու պարտավորության խախտում: Դատախազները և դատավորները, մասնավորապես, պետք է ձգտեն ապահովելու վատ վերաբերմունքին վերաբերող տեղեկությունների և ապացույցների հաղորդումը: Նրանք պետք է վճռորոշ քայլեր ձեռնարկեն այն դեպքերում, երբ տեղեկություններ կստանան իրենց

[15] Eric Svanidze, Effective investigation of ill–treatment. Guidelines on European Standards, Council of Europe Publication, 2009, pp. 29 et seq.

առաջ բերվող անձանց նկատմամբ տեղի ունեցած վատ վերաբերմունքի մասին: Նրանք պետք է վարույթներն իրականացնեն այնպես, որպեսզի անհատին իրական հնարավորություն ընձեռեն բաց կերպով, այսինքն՝ առանց ոստիկանների ներկայության հայտարարություն անելու իր նկատմամբ տեղի ունեցած վերաբերմունքի մասին:

Ուղենիշներում առաջարկվում է նաև, որ հանրային պաշտոնյաները (ներառյալ ոստիկանները և բանտերի աշխատողները) պաշտոնապես պարտավոր լինեն վատ վերաբերմունքի մասին պնդումների կամ այլ նշանների մասին տեղեկանալուց անմիջապես հետո ծանուցել իրավասու մարմիններին: Մահվան դեպքերի կապակցությամբ անհրաժեշտ է ունենալ հստակ և պարտադիր մեխանիզմ, որով հաշվետվություններ կներկայացվեն բոլոր դեպքերում, երբ հանրային պաշտոնյաների կողմից կիրառվել է մահաբեր պոտենցիալ ունեցող ուժ, կամ երբ պետական ազատազրկման պայմաններում մահացել է ազատազրկված անձ: Երբ նման տեղեկություններ ստացող մարմիններն իրավասու չեն դրանք քննելու, նրանք պարտավոր են համապատասխան տեղեկությունները հաղորդել իրավասու մարմիններին:

Այն, որ ՄԻԵԴ–ի դատական նախադեպի համաձայն՝ քննությունը պետք է հարուցվի երկու հնարավոր եղանակներով՝ բողոքի հիման վրա կամ իշխանությունների սեփական նախաձեռնությամբ, համահունչ է նաև ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայով (CAT) պետությունների համար նախատեսված պարտավորություններին:

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 12–ՐԴ ՀՈԴՎԱԾ

Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է ապահովել, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ և անկողմնակալ քննություն իրականացնեն բոլոր այն դեպքերում, երբ խելամիտ հիմքեր կան՝ կարծելու, որ պետության իրավազորության ներքո գտնվող տարածքում կատարվել է խոշտանգման գործողություն:

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13–ՐԴ ՀՈԴՎԱԾ

Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է ապահովել, որպեսզի ցանկացած անձ, ով պնդում է, թե տվյալ պետության

իրավազորության ներքո գտնվող որևէ տարածքում ենթարկվել է խոշտանգման, ունենա իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու իրավունք և նրանց կողմից այդ բողոքի անհապաղ և անկողմնակալ քննության իրավունք: Քայլեր պետք է ձեռնարկել, որպեսզի բողոքաբերը և վկաները պաշտպանված լինեն բողոքելու կամ ապացույցներ տալու հետևանքով հնարավոր վատ վերաբերմունքից կամ ահաբեկումից:

Հաշվի առնելով, որ խոշտանգումից տուժողը կամ ազատազրկման պայմաններում մահացած անձի ընտանիքը տվյալ վերաբերմունքի մասին բողոքելիս իրենց պնդումների ապացուցման ժամանակ լուրջ դժվարությունների է հանդիպում, ՄԻԵԴ–ը ձևավորել է ապացուցման բեռը տուժողից իշխանությունների վրա տեղափոխելու հայեցակարգը:

Ապացուցման բեռի տեղափոխման վերաբերյալ ձևավորված դատական նախադեպը հետևյալն է.

Դատարանը համարում է, որ այն դեպքում, երբ անձը ոստիկանության կողմից ազատազրկվում է առողջ վիճակում, սակայն ազատ արձակման պահին ունենում է մարմնական վնասվածքներ, պետությունն է պարտավոր հիմնավորապես բացատրել, թե ինչպես են պատճառվել այդ մարմնական վնասվածքները, իսկ հակառակ պարագայում ակնհայտորեն խնդիր է ծագում Կոնվենցիայի 3–րդ հոդվածի ներքո:

*Selmouni–ն ընդդ. Ֆրանսիայի, գանգատ թիվ 25803/94, 28 հուլիս, 1999 թ.*

Հաշվի առնելով, որ նման բացատրություն չէր տրվել, ՄԻԵԴ–ը վճռեց, որ իշխանությունները խոշտանգել են անձին, թեպետ չկային կատարողի դիտավորության, նպատակի կամ ինքնության մասին որևէ ապացույցներ: Պետության կողմից ազատազրկվելու ընթացքում վնասվածքներ ստանալու ֆիզիկական ապացույցները և տուժողի ցուցմունքը բավարար եղան՝ եզրակացնելու համար, որ նա խոշտանգվել է:

*Salman–ն ընդդ. Թուրքիայի* գործով Դատարանը, նշելով, որ ազատազրկված անձինք խոցելի վիճակում են, և իշխանությունները պար-

տավոր են պաշտպանել նրանց, կրկնեց վերոգրյալը և ավելացրեց հետևյալ դիտարկումը.

Ազատազրկման ընթացքում անձի նկատմամբ վերաբերմունքի համար հաշվետու լինելու՝ իշխանությունների պարտավորությունն առանձնապես խիստ է այն դեպքում, երբ անձը մահանում է: Եթե համապատասխան խնդիրների մասին ամբողջությամբ կամ մեծ մասամբ տեղյակ են բացառապես իշխանությունները, ինչպես ազատազրկման ընթացքում իշխանությունների հսկողության ներքո գտնվող անձանց պարագայում է, ապա այդ ազատազրկման ընթացքում տեղի ունեցող մարմնական վնասվածքների և մահվան առնչությամբ ծագում են փաստերին վերաբերող ծանրակշիռ կանխավարկածներ: Այդ գործերի շրջանակում իսկապես կարելի է համարել, որ ապացուցման բեռն ընկած է իշխանությունների վրա, և հենց վերջիններս պետք է ներկայացնեն գոյացուցիչ և համոզիչ բացատրություն:

Ապացուցման բեռի այս՝ ՄԻԵԴ–ի կողմից կիրառվող տեղափոխությունը և պետությունների կողմից մարդու իրավունքների նորմերի խախտում արձանագրելը չպետք է շփոթել ազգային քրեական վարույթի ընթացքում ապացուցման բեռը մեղադրողից վատ վերաբերմունքի կամ անօրինական սպանության համար պատասխանատուի վրա տեղափոխելու հետ: *Selmouni–ն ընդդ. Ֆրանսիայի* գործով Դատարանն ակնհայտորեն տարբերակեց Կոնվենցիայի ներքո պետության պատասխանատվությունը և ոստիկանների նկատմամբ վարվող քրեական գործը՝ նշելով, որ «մեղքի խնդիրը բացառապես Ֆրանսիայի դատարանների, մասնավորապես՝ քրեական դատարանների իրավասությանը վերապահված խնդիր է»: Կամ, *Centre for Legal Resources on Behalf of Valentin Câmpeanu–ն ընդդ. Ռումինիայի* գործով (գանգատ թիվ 47848/08, 17 հուլիս, 2014 թ.).

Քննելու այս պարտավորությունը չի ենթադրում, որ յուրաքանչյուր գործով պարտադիր կերպով պետք է տրամադրել քրեաիրավական պաշտպանություն: Օրինակ, եթե հիմնավորվել է անփութությունը,

ապա տվյալ պարտավորությունը կարող է կատարված համարվել անգամ այն դեպքում, երբ իրավական համակարգը տուժողներին ընձեռել է քաղաքացիական դատարաններում պաշտպանություն ստանալու հնարավորություն՝ կա՛մ առանձին վերցված, կա՛մ քրեական դատարաններում իրականացվող պաշտպանության հետ մեկտեղ: Այնուհանդերձ, Կոնվենցիայի 2–րդ հոդվածի պահանջը բավարարված չէ, եթե ներպետական օրենսդրությամբ ընձեռվող պաշտպանությունը գոյություն ունի միայն տեսականորեն. ամենակարևորն այն է, որ տվյալ պաշտպանությունն արդյունավետորեն գործի նաև պրակտիկայում:

Այսպիսով՝ խոշտանգման կամ անօրինական սպանության մեղավորների գործերի քննիչները և դատախազները չեն կարող պարզապես հենվել ապացուցման բեռի տեղափոխման վերաբերյալ ՄԻԵԴ–ի ձևավորած դիրքորոշման վրա, և ինչպես ցանկացած այլ գործով, պարտավոր են օբյեկտիվ ապացույցներ հավաքել ենթադրյալ մեղավորների դեմ, ովքեր անձնապես նույնպես օգտվում են անմեղության կանխավարկածից: Այնուամենայնիվ, ապացուցման բեռն իշխանությունների համար առաջացնում է պարտավորություն՝ բացատրելու ազատազրկման պայմաններում տեղի ունեցած մահվան կամ մարմնական վնասվածքների բոլոր դեպքերը, որոնք պետք է համարվեն որպես խոշտանգման կամ անօրինական սպանության փաստի գոյության մասին վկայող «բավարար չափով հստակ տվյալներ», որոնց վերաբերյալ յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի արդյունավետ քննություն:

Հանրային պաշտոնյայի մասնակցությամբ տեղի ունեցած վատ վերաբերմունքի կամ մահվան դեպքի քննության հարուցումը մերժելու կամ քննությունը դադարեցնելու մասին որոշումները կարող են կայացվել միմիայն անկախ, իրավասու մարմնի կողմից՝ մանրամասնորեն և անհապաղ կերպով ուսումնասիրելով վերաբերելի բոլոր փաստերը: Այդ որոշումները պետք է ենթակա լինեն պատշաճ վերանայման և բողոքարկման հրապարակային և մրցակցային դատական վերանայման գործընթացի միջոցով: Մեղադրանքի անհիմն լինելու մասին որոշումը հավասարազոր է քննությունը մերժելուն և ենթադրյալ տուժողին զրկում է

քննելու պարտավորությունից բխող իրավունքներից: Ուստի այդ որոշումը պետք է բավարարի հիմնավորվածության ամենաբարձր պահանջները: Արդյունավետ քննության չափանիշները (ներկայացված են ստորև) կիրառելի են նաև քննության սկզբնական (նախնական) փուլի նկատմամբ:

Քննարկվող հիմնախնդիրներին են առնչվում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվածներ 18–ը (Անմեղության կանխավարկածը), 27–ը (Քրեական գործ հարուցելու և հանցագործությունը բացահայտելու պարտականությունը), 41–ը (Դատարանի լիազորությունները), 53–ը (Դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում), 124–ը (Ապացուցումը), 175–ը (Քրեական գործ հարուցելու պարտականությունը) և 176–ը (Քրեական գործ հարուցելու առիթները):

Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 18–րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

Նույն օրենսգրքի 27–րդ հոդվածի համաձայն՝

«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

Նույն քրեական գործի նախաքննության ընթացքում նույն անձի կողմից այլ հանցագործություններ կատարելու փաստերի հայտնաբերման դեպքում կարող է նոր քրեական գործ չհարուցվել, եթե արդեն իսկ հարուցված քրեական գործի շրջանակներում հնարավոր է գործի նախաքննությունն իրականացնել ամբողջ ծավալով»:

ՀՀ քր. դատ. օր. 41–րդ հոդվածի 2–րդ մասի 4–րդ կետով, ի թիվս դատարանի այլ լիազորությունների, նախատեսված է՝ «սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելը»:

Նույն օրենսգրքի 53–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի համաձայն՝ դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է «հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ»:

ՀՀ քր. դատ. օր. 124–րդ հոդվածի համաձայն՝

«1. Ապացուցումը գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

2. Մեղադրյալի մեղքի և պատասխանատվությունը խստացնող հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները»:

Նույն օրենսգրքի 175–րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հա-

ռուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քր. դատ. օր. 176–րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»:

## ԴԱՍ 6. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպայի խորհրդի մի շարք պետություններ վերջին շրջանում ստեղծել են ոստիկանների կամ ընդհանրապես հանրային պաշտոնյաների կատարած հանցագործությունները քննող հատուկ մարմիններ: Այդ պետություններից են Հայաստանը, Կիպրոսը, Դանիան, Անգլիան, Հյուսիսային Իռլանդիան, Նորվեգիան, Շոտլանդիան և Ուելսը: Հարկ է հիշատակել նաև Կոսովոյում ստեղծված համակարգը՝ Կոսովոյի ոստիկանության տեսչությունը:

Նման մարմնի ստեղծումն անշուշտ ճիշտ քայլ է 2–րդ և/կամ 3–րդ հոդվածների խախտումների վերաբերյալ բողոքների գործերի քննության անկախության խնդրի վերաբերյալ ՄԻԵԴ–ի մեծածավալ նախադեպի պահանջների կատարման ուղղությամբ: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, որոնցում Դատարանը վճռել է, որ քննող մարմինը բավարար ինստիտուցիոնալ անկախություն չի ունեցել այն մարմնից,

որին մեղսագրվել են քննությամբ ուսումնասիրվող փաստերը: Սակայն վերլուծության պետք է ենթարկվեն ոչ միայն քննող մարմինները. անկախության պարտավորությունը կարող է կիրառելի լինել քննության ընթացքում որոշում կայացնող կամ քննությունն իրականացնող բոլոր անձանց նկատմամբ (ներառյալ քննչական կոնկրետ գործողություններ կատարողները, օրինակ՝ վկաներին գտնելու հանձնարարություն կատարող ոստիկանները, դատական բժիշկները, վերահսկող դատախազները և հատուկ մարմինները, ինչպիսիք են անվտանգության ուժերի հետ կապեր ունեցող վարչական խորհուրդները):

Մեր օրերում ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկայով հստակորեն ձևակերպված է, որ անկախ չեն կարող համարվել ոստիկանական այն կառույցի ներկայացուցիչները, որում աշխատում են ենթադրյալ մեղսագործները: Ավելին՝ Դատարանը համարել է, որ ինստիտուցիոնալ անկախությունը խախտում են նաև հիերարխիկ և/կամ ընթացակարգային առավել բարդ կապերը:

> […] Արդարադատության նախարարության քննչական վարչությունը կատարել էր քննչական բոլոր գործողությունները, սակայն նույն այդ նախարարության ենթակայությամբ էր գործում բանտային համակարգը: Նրանց եզրակացությունները պարզապես հաստատվել էին դատախազի կողմից… Քննիչների և միջադեպի մեջ մեղադրվողների միջև ինստիտուցիոնալ այդ կապը հիմնավոր կասկածներ է հարուցում կատարված քննության անկախության վերաբերյալ:
>
> *Mikiashvili–ն ընդդ. Վրաստանի, գանգատ թիվ 18996/06, 9 հոկտեմբեր, 2012 թ.*

Ավելին՝ քննության և քրեական հետապնդման տարբեր փուլերում որոշումներ կայացնող տարբեր անձինք պետք է «գործնականապես» անկախ լինեն այն անձանցից, ում մեղսագրվում են քննվող փաստերը, ներառյալ քննչական որոշակի գործողությունների կատարման համար ներգրավված փորձագետները: Ավելին՝ փաստացի անկախությունից զատ՝ Դատարանը նշում է նաև անկախության *ընկալման* կարևորությունը:

Որպեսզի պետության ներկայացուցիչների կողմից անօրինական սպանության քննությունն արդյունավետ լինի, անհրաժեշտ է, որպեսզի քննությունը կատարողները և քննության համար պատասխանատուներն անկախ լինեն տեղի ունեցածի մեջ մեղադրվողներից: Դա նշանակում է ոչ միայն հիերարխիկ կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական անկախություն:

[…] հատկապես կարևոր էր այն հանգամանքը, որ քննող մարմինը գործառնական առումով անկախ էր ռազմական հրամանատարությունից և միաժամանակ նաև ընկալվում էր որպես այդպիսին:

*Al-Skeini-ն և այլք ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 55721/07, 7 հուլիս, 2011 թ.*

Դատարանն ուղղակիորեն չի բացահայտել «գործառնական անկախության» կոնկրետ իմաստը: ՄԻԵԴ-ի նախկին դատավորներից մեկի ձևակերպմամբ[16], քննությանը մասնակցող անձանց գործնական անկախությունը հետևյալն է.

«Նրանք չպետք է ենթակա լինեն իշխանությունների կամ իրադարձությունների հետ առնչություն ունեցողների կողմից որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակումների, անհարկի ազդեցության, շահադրդման, ճնշման, սպառնալիքի կամ միջամտության: Նույնը վերաբերում է դատախազին, ում հաշվետու են քննությունը կատարող անձինք, և ով պետք է որոշում կայացնի քրեական հետապնդում իրականացնելու համար փաստերի բավարարության մասին […]:

Բացի դրանից՝ պետությունը պետք է ապահովի մարդկային, նյութական և ֆինանսական բավարար ռեսուրսների առկայությունը քննության պատշաճ կազմակերպման համար: Անհարկի ազդեցությունից խուսափելու համար քննիչները պետք է համապատասխան վարձատրություն ստանան»:

[16] Egbert Myjer, Investigation into the use of lethal force: standards of independence and impartiality, in: The Right to Life under Article 2 of the European Convention on Human Rights. Twenty Years of Legal Developments since McCann v. the United Kingdom. Wolf Legal Publishers, Oisterwijk, 2016, pp. 115–132, at p. 128.

Եվ վերջապես՝ ՄԻԵԿ–ի 2–րդ կամ 3–րդ հոդվածի հնարավոր խախտումներին վերաբերող գործերի քննությանը մասնակցողները պետք է անձնապես անկախ լինեն կատարվածի մեջ կասկածվողներից: ՄԻԵԴ–ը վճռել է, որ անձնական հարաբերությունները կամ ընկերությունը, ներառյալ սերտ աշխատանքային կապերը, վկայում են անկախության բացակայության մասին:

Ինչ վերաբերում է անկողմնակալությանը, ապա Դատարանը հատկապես անդրադարձել է կյանքի իրավունքի կամ վատ վերաբերմունքի արգելքի խախտման մեջ մեղադրվողների նկատմամբ գործը քննող կամ գործով քրեական հետապնդում իրականացնողների հնարավոր երկակի դերակատարման խնդրին: Այսպես՝ շահերի բախումից խուսափելու համար այդ քննիչները և դատախազները պետք է միևնույն ժամանակ պատասխանատու չլինեն տուժողի նկատմամբ հնարավոր քրեական գործով: Հույժ կարևոր է ենթադրյալ տուժողի նկատմամբ քրեական գործն առանձնացնել վատ վերաբերմունքի կամ մահաբեր ուժի գործադրման մեջ կասկածվողների նկատմամբ քրեական գործից:

Հարկ է կրկնել, որ դատախազների կամ փորձագետների և իրավապահ մարմինների պաշտոնյաների միջև սերտ աշխատանքային հարաբերությունները համարվել են անկողմնակալության պակասի նշաններ: Դատական նախադեպից ակնհայտ է դառնում նաև, որ ՄԻԵԴ–ը որոշ դեպքերում անուղղակիորեն քննադատել է այն հանգամանքը, որ քննող մարմինները երկակի ստանդարտներ են կիրառել ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս՝ տուժողի ցուցմունքից ավելի մեծ կշիռ տալով հանրային պաշտոնյաների ցուցմունքներին, հատկապես երբ տուժողը որոշ դեպքերում հայտնի հանցագործ է կամ ահաբեկչության մեջ կասկածվող:

Ավելին՝ անկողմնակալության և օբյեկտիվության պակաս է նկատվել այն դեպքերում, երբ փաստերը հետևողականորեն չեն վերլուծվել, և չափից ավելի շատ են արժանահավատ համարվել ներգրավված պաշտոնյաների ասածները, կամ երբ քննությամբ լուրջ փորձ չի արվել՝ պարզաբանելու իրարամերժ ապացույցները՝ մեկ կողմի ասածները չընդունելով և պարզապես հավատալով մյուս կողմի ասածներին: Նման մոտեցման հատկանշական օրինակ է հետևյալ դատավճիռը.

Դատարանը նկատում է նաև ապացույցների գնահատման նկատմամբ որոշակիորեն ոչ միատեսակ մոտեցումը [...]: Քրեական հետապնդում իրականացնող մարմինների և ներպետական դատարանների որոշումներից ակնհայտ է դառնում, որ նրանք իրենց համոզմունքներում մեծապես հիմնվում են միջադեպին մասնակցած ոստիկանների ցուցմունքների վրա: [...] Իշխանություններն ընդունել են ոստիկանների ցուցմունքների արժանահավատությունը՝ դրա համար չնշելով որևէ համոզիչ պատճառներ, չնայած որ այդ պաշտոնյաների ցուցմունքները կարող էին սուբյեկտիվ լինել և ուղղված լինել գանգատաբերի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի համար քրեական պատասխանատվությունից խուսափելուն:

*Dvalishvili-ն ընդդ. Վրաստանի, գանգատ թիվ 19634/07, 18 դեկտեմբեր, 2012 թ.*

Քննարկվող հիմնախնդիրներին են առնչվում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ (Գործի արդարացի քննությունը) և 190-րդ (Քննչական ենթակայությունը) հոդվածները:

Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 17-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:

2. Դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը չեն կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նրանք ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են գործի ելքով:

3. Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

4. Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարություններն իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

Նույն օրենսգրքի 190–րդ հոդվածի համաձայն՝

«1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104–164, 166–187, 191, 192, 195–201, 204, 212–214, 218, 222, 223, 225, 2251 , 227–232, 235–249, 251–298, 300, 300.1, 300.2, 301, 301.1, 308–328, 331–3323, 336, 341, 343–3451 , 347–355 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

2. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188, 189, 193, 194, 202, 203, 205–211 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի կամ հարկային մարմինների քննիչները:

3. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190, 217, 2171 , 219–221, 224, 226, 233, 234, 250, 299, 302–307, 329, 329.1, 330, 384–3971 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

4. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215 հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները:

5. Նախաքննությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային զինվորական ծառայության զինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոմսերի կառավարման լիազորությունը

հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

***6. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 1541, 1542 հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները:***

***Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:***

***6.1. Նախաքննությունը հատուկ քննչական ծառայության ծառայողների՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:***

7. Սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերով նախատեսված գործերով նախաքննություն կատարում է այն մարմինը, որը հարուցել է տվյալ քրեական գործը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի:

8. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական

օրենսգրքի 128, 165, 200, 208, 209, 216, 308–310, 314, 315, 333–335, 337–340, 342, 345 և 346 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում է նախաքննության այն մարմինը, որի վարույթում գտնվող գործի քննության ընթացքում բացահայտվել է այդ հանցագործությունը, բացառությամբ սույն հոդվածի 6–րդ և 6.1–ին մասերում նշված անձանց կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի:

9. Ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները 188, 189, 205, 206, 235, 263, 266, 268, 271, 272, 275 և 325 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են նախաքննություն, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի:

10. Տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու կամ գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է դատախազը: Այս կարգը չի տարածվում սույն հոդվածի 6–րդ և 6.1–ին մասերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի վրա, որոնցից 6–րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են բացառապես հատուկ քննչական ծառայության քննիչները, իսկ 6.1–ին մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննիչները»:

Միևնույն ժամանակ, քննարկվող հիմնախնդիրների կապակցությամբ ***Արայիկ Գզոյանի վերաբերյալ թիվ ԵԱՔԴ/0049/01/09 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանն*** արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նախաքննության մարմնի դեմ ներկայացված բողոքները պետք է քննվեն անկախ

մարմնի կողմից, որը չպետք է կապված լինի նախաքննության մարմնի հետ և պետք է առանձնացված լինի վերջինիցս:

ՄԱԿ–ի Մարդու իրավունքների կոմիտեի 1998 թվականի նոյեմբերի 19–ի Եզրափակիչ Դիտարկումներում նշված է. «Կոմիտեն առաջարկում է հատուկ անկախ մարմին հիմնադրել՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի առնչությամբ բերված բողոքներն ուսումնասիրելու նպատակով» (տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ Դիտարկումները, Հայաստան, CCPR/C/79/Add.100., 19 նոյեմբերի, 1998 թ., կետ 12):

Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների և Բատին և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ չպետք է լինի ինստիտուցիոնալ կամ ենթակարգային կապ քննիչների և այն ոստիկանների միջև, ում դեմ բողոք է ներկայացվել (տե՛ս Bati and Others v. Turkey, 2004 թվականի հունիսի 3–ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, Ramsahai v. The Netherlands, 2007 թվականի մայիսի 15–ի վճիռը, գանգատ թիվ 52391/99)»:

## ԴԱՍ 7. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ. ԱՆՀԱՊԱՂՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻԵԴ–ը պահանջում է, որպեսզի քննությունը կատարվի անհապաղ կերպով, այսինքն՝ խախտումների կասկածի կամ բողոքի ի հայտ գալուց հետո հնարավորինս կարճ ժամկետում, ինչպես նաև որպեսզի ազգային դատարաններում հնարավոր ընթացակարգն ավարտին հասցվի ողջամիտ ժամկետում:

Ինչ վերաբերում է քննության անհապաղությանը, ապա ակնհայտ է, որ որոշ ժամանակ անց ապացույցները կարող են կորցնել արժեքը, կամ կարող է անհնար դառնալ դրանք ձեռք բերելը, որի մասին նշված է նաև համապատասխան միջազգային փաստաթղթերում, օրինակ՝ Ստամբուլյան արձանագրությունում: Ավելին՝ Դատարանի նախադեպային որոշումներում բազմիցս ընդգծվել է, որ քննությունը պետք է

արագընթաց լինի: Կոնվենցիայի 2–րդ և 3–րդ հոդվածներին առնչվող գործերով, երբ խնդիրը վերաբերել է պաշտոնական քննության արդյունավետությանը, Դատարանը հաճախ անդրադարձել է այն հարցի գնահատմանը, թե արդյոք իշխանությունները.

- Անհապաղ և ճիշտ ժամանակին արձագանքել են բողոքներին (տե՛ս *Labita–ն ընդդ. Իտալիայի*, գանգատ թիվ 26772/95, 6 ապրիլ, 2000 թ.): Հաշվի են առնվել, մասնավորապես.
- Քննության մեկնարկի պահը և ցուցմունքներ ստանալու հարցում ձգձգումները (տե՛ս *Timurtaş–ն ընդդ. Թուրքիայի,* գանգատ թիվ 23531/94, 13 հունիս, 2000 թ., և *Tekin–ն ընդդ. Թուրքիայի,* գանգատ թիվ 22496/93, 9 հունիս, 1998 թ.), և
- Նախնական քննության վրա ծախսված ժամանակի ընդհանուր տևողությունը (տե՛ս *Indelicato–ն ընդդ. Իտալիայի*, գանգատ թիվ 31143/96, 18 հոկտեմբեր, 2001 թ.):

Ժամանակ չկորցնելը հատկապես կարևոր է բժշկական զննությունների արդյունավետության և վկաների ցուցմունքների օգտակարության և հուսալիության տեսանկյուններից, ինչը բազմիցս ընդգծվել է Դատարանի կողմից.

[…], մի շարք քննչական գործողություններ կատարվել են ուշացմամբ: Գանգատաբերի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, օրինակ, թվագրված է եղել 1998 թ. հոկտեմբերի 26–ով, այսինքն՝ ստացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքից ավելի քան հինգ շաբաթ անց: Վատ վերաբերմունքի մեջ կասկածվող ոստիկանները հոտնկայս ճանաչման համար ներկայացվել էին գանգատաբերին միջադեպից երկու տարի անց: Գանգատաբերի մայրը հարցաքննվել էր միայն 2000 թվականին, իսկ թիվ 33 հիվանդանոցից բժիշկ Մ–ն՝ միայն 2001 թվականին, չնայած որ նա միջադեպից հետո գանգատաբերին տեսած առաջին վկաներից էր: Քննիչը թիվ 39 հիվանդանոցի աշխատողներին և հիվանդներին հարցաքննել էր միայն 2000 թվականի հունվարին […]: Եվ վերջապես՝ գանգատաբերի հոգեբուժական փորձաքննությունն իրականացվել էր միայն 2001 թվականին, չնայած որ իշխանությունները

նրա ինքնասպանության փորձը բացատրել էին հիմնականում հենց նրա հոգեկան վիճակով, որի հիմքով նաև կարճել էին վարույթը:

*Mikheyev–ն ընդդ. Ռուսաստանի, գանգատ թիվ 77617/01, 26 January 2006*

*Păduret–ն ընդդ. Մոլդովայի* գործով (գանգատ թիվ 33134/03, 5 հունվար, 2010 թ.) Դատարանն էլ ավելի խիստ կերպով գնահատեց բողոքելու պահից կամ վատ վերաբերմունքի նշանների ի հայտ գալու պահից (տվյալ դեպքում դատախազը գործել էր սեփական նախաձեռնությամբ՝ ազատազրկվածի վրա մարմնական վնասվածքները նկատելուց անմիջապես հետո նշանակելով բժշկական զննություն) մինչև ենթադրյալ տուժողի բժշկական զննության փաստացի կատարման պահն անցած ժամանակի տևողությունը: Դատարանը վճռեց.

Դատարանը նկատում է, որ դատախազը գանգատաբերի զննությունը հանձնարարել էր դատական բժշկին նրա նկատմամբ վատ վերաբերմունքի օրը՝ 2000 թ. մարտի 31–ին […]: Չնայած այդ կարգադրությանը՝ գանգատաբերը բժշկի մոտ տարվել էր միայն 2000 թ. ապրիլի 3–ին [այսինքն՝ երեք օր հետո]: Ներպետական մարմինները և կառավարությունը որևէ կերպ չբացատրեցին այդ ուշացումը: Դա հակասում է անհապաղ քննություն կատարելու պարտավորությանը, քանի որ ժամանակ անցնելու և վերքերի լավանալու պարագայում առկա է վատ վերաբերմունքի ապացույցների անհետացման ռիսկ:

Վատ վերաբերմունքի արդյունավետ քննության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղենիշների մեջ նույնպես նշվում է, որ սկզբնական քննությունից մինչև հնարավոր իրավական վարույթն ընկած ժամանակահատվածում անհրաժեշտ է գործել արագորեն: Ուղենիշներով սահմանված չեն ժամկետներ, սակայն առաջարկվում է, որ պահպանվող ստանդարտներն արտացոլեն ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասի հիման վրա Դատարանի ձևավորած դիրքորոշումը, որի համաձայն՝ Դատարանը մեկնաբանել է, որ «ողջամիտ ժամկետի» համար պա-

հանջվում է «հատուկ ջանասիրություն» և «առանձնակի արագագործություն»: Ուղենիշների համաձայն՝ գնահատումը մեծ չափով կախված կլինի կոնկրետ գործի հանգամանքներից:

Նույնը վստահաբար կարելի է ասել նաև ենթադրյալ իրավախախտների նկատմամբ իրականացվող դատական վարույթի ժամկետների մասին, որի առնչությամբ դատարանը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր գործի առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, որպես ընդհանուր ուղենիշ, կարելի է ասել, որ ՄԻԵԴ–ը պետություններին քննադատել է ՄԻԵԿ–ի 2–րդ կամ 3–րդ հոդվածներին վերաբերող այն գործերի վարույթների համար, որոնք տևել են երեք տարուց ավելի երկար՝ հինգ կամ անգամ վեց տարի («ՄԻԵԴ–ը համոզված չէ, որ գործն այնքան բարդ է, որպեսզի այդքան երկար ժամանակ պահանջվի…»):

Եվ վերջապես՝ Դատարանն անհապաղության պահանջը կանոնավոր կերպով կապակցել է հանրության վստահությունը և սատարումն ապահովելու անհրաժեշտության հետ: Դա պարզաբանվել է, ի թիվս այլ գործերի, *Bati–ն և այլք ընդդ. Թուրքիայի* գործով դատավճռում (գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, 3 հունիս, 2004 թ.).

Անկասկած, այս իրավիճակում անուղղակիորեն կիրառելի են նաև անհապաղության և ողջամիտ արագագործության պահանջները: Վատ վերաբերմունքի գործերը քննելիս իշխանությունների անհապաղ արձագանքն ընդհանուր առմամբ վճռորոշ նշանակություն ունի իրավունքի գերակայությանը նրանց հավատարմության նկատմամբ հանրության վստահությունն ապահովելու և անօրինական գործողություններին հանցավոր մասնակցության կամ անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողության տպավորությունը բացառելու տեսանկյունից […]: Թեպետ կարող են գոյություն ունենալ խոչընդոտներ կամ դժվարություններ, որոնք կկանխեն կոնկրետ իրավիճակի քննության առաջխաղացումը, իշխանությունների կողմից քննության անհապաղ հարուցումը ընդհանուր առմամբ հույժ կարևոր պետք է համարել իրավունքի գերակայությանը նրանց հավատարմության նկատմամբ հանրության վստահությունն ապահովելու և անօրինական

գործողություններին հանցավոր մասնակցության կամ անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողության տպավորությունը բացառելու տեսանկյունից:

Քննարկվող հիմնախնդիրներին են առնչվում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվածներ 17–ը (Գործի արդարացի քննությունը), 180–ը (Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը), 196–ը (Նախնական քննության ավարտը) և 197–ը (Նախնական քննության ժամկետները):

Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 17–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն, ինչպես արդեն նշվել է, «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

Նույն օրենսգրքի 180–րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»:

ՀՀ քր. դատ. օր. 196–րդ հոդվածի համաձայն՝

«1. Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով:

2. Հետաքննությունն ավարտելուց հետո հետաքննության մարմնի պետը գործն ուղարկում է քննիչին, որի մասին կայացվում է համապա-

տասխան որոշում: Հետաքննությունն ավարտվում է, երբ՝

1) ավարտվում է հետաքննության ժամկետը.

2) մինչև հետաքննության ժամկետը լրանալն ի հայտ է գալիս հանցանք կատարած անձը.

3) դատախազը հետաքննության մարմնի վարույթում գտնվող գործը հանձնում է քննիչին՝ նախաքննություն կատարելու համար, կամ քննիչը ներգրավվում է գործի քննությանը»:

Նույն օրենսգրքի 197–րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում:

2. Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը:

3. Քրեական գործի նյութերին մեղադրյալի կամ նրա պաշտպանի ծանոթանալու ժամկետը չի մտնում գործի քննության ժամկետի մեջ: Եթե մեղադրյալը կամ նրա պաշտպանն առանց հարգելի պատճառների ձգձգում է քրեական գործին ծանոթանալը, քննիչի որոշմամբ կարող է սահմանափակվել ծանոթանալու ժամկետը:

4. Նախաքննության ժամկետի մեջ չի հաշվակցվում այն ժամանակը, որի ընթացքում նախաքննությունը սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով եղել է կասեցված:

5. Նախաքննության ժամկետը կարող է երկարացնել դատախազը քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա:

6. Քննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 3 օր առաջ:

7. Քրեական գործի նախաքննությունը վերսկսելու, քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու, ինչպես նաև կարճված գործի վարույթը նորոգելու դեպքերում նախաքննությունը պետք է ավարտվի մեկամսյա ժամկետում՝ համապատասխանաբար գործի նախաքննու-

թյունը վերսկսելու մասին որոշում կայացնելու, լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործը քննիչի կողմից ստանալու, գործի վարույթը նորոգելու մասին որոշում կայացնելու օրվանից սկսած: Այդ ժամկետի հետագա երկարացումը կարող է կատարվել սույն հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով»:

## ԴԱՍ 8. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ. ԼԻԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հետաքննություն իրականացնելու պարտականությունը «արդյունքի պարտականություն չէ, այլ միջոցների պարտականություն է». Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր հետաքննություն լինի հաջողված կամ հանգի մի եզրակացության, որը համապատասխանում է գանգատաբերի կողմից նշված դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը, և այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ են, ապա նաև հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանը, ու արդարացված լինելու դեպքում՝ նրանց պատժելուն: Այսպիսով՝ վատ վերաբերմունքի մասին լուրջ պնդումներով հետաքննությունը պետք է ամբողջական լինի: Դրանից հետևում է, որ մարմինները միշտ պետք է լրջորեն ձգտեն պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունների վրա իրենց հետաքննությունը փակելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները՝ միջադեպի հետ կապված ապացույցները պարզելու համար, որը ներառում է, մասնավորապես, առերեսումը, դատաբժշկական փորձաքննության ապացույցները և այլն: Հետաքննության ցանկացած թերություն, որը կարող է խաթարել վնասվածքների պատճառի կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնության հաստատմանը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վտանգ առաջացնել:

*Virabyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 40094/05, 2 հոկտեմբեր, 2012 թ.*

Այս մեջբերումը նման է տարբեր պետությունների վերաբերյալ 3–րդ հոդվածին առնչվող բազմաթիվ գործերով Դատարանի արտահայտած դիրքորոշմանը:

ՄԻԵԴ–ը գտնում է, որ ապացույցների ապահովման համար պետք է կատարվեն բոլոր ողջամիտ քայլերը: Հնարավոր չէ տալ «ողջամիտ քայլերի» սպառիչ ցանկ, սակայն Դատարանն իր դատավճիռներում թվարկել է այն քայլերի որոշ օրինակներ, որոնք ակնկալում է քննությունն իրականացնող մարմիններից, որպեսզի վերջիններս ապացուցեն, որ իրենք իսկապես ջանք են գործադրել ճշմարտությունը բացահայտելու և մեղավորներին արդարադատության առաջ կանգնեցնելու համար: Կիրառելի նախադեպային պրակտիկան վկայում է, որ քննիչները պետք է, ի թիվս այլ քայլերի, ձեռնարկեն հետևյալ քայլերը.

- Տուժողի (տուժողների) մանրակրկիտ հարցազրույցը.
- Իրավախախտի (իրավախախտների) ճանաչումը՝ հոտնկայս ճանաչման ներկայացվելը.
- Ենթադրյալ իրավախախտի (իրավախախտների) հարցաքննությունը.
- Դատաբժշկական/դատահոգեբանական և ֆիզիկական զննությունները կամ մահացածի դիահերձումը.
- Բժշկական բոլոր փաստաթղթերի հավաքումը.
- Վկաների նույնացումը և հարցազրույցները.
- Տեղում քննչական գործողությունների կատարումը՝ ներառյալ խոշտանգման գործիքների որոնումը.
- Ազատազրկման գրառումների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը.
- …

Վատ վերաբերմունքի արդյունավետ քննության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղենիշների մեջ ամփոփ ներկայացված է վերոհիշյալ տարբեր գործողությունների առնչությամբ ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկան: Վերջինս վերարտադրված է ստորև և կարող է տրամաբանական ձևափոխություններով կիրառվել կյանքի իրավունքին վերա-

բերող գործերի նկատմամբ (օրինակ՝ տուժողի հետ հարցազրույցի փոխարեն հարցազրույց ընտանիքի անդամների հետ).

➢ Ենթադրյալ տուժողների մանրակրկիտ և սպառիչ ցուցմունքներ՝ ստացված համապատասխան աստիճանի զգայնությամբ:

Շատ դեպքերում կամ ընդհանրապես չի ստացվում տուժողի ցուցմունքը, կամ իշխանությունները չեն պարզաբանում հանգամանքների համար էական նշանակություն ունեցող որոշ հարցեր: Նման թերացումը քննադատության է արժանացել Դատարանի կողմից.

Հարկ է հիշատակել, որ գանգատաբերն ինքը չէր հարցաքննվել կապտուկների առաջացման պատճառների վերաբերյալ՝ թե՛ Կրինել Մ–ի կողմից նրան ծեծի ենթարկելու մասին տվյալներ ներկայացնելիս, թե՛ ոստիկանության կողմից ծեծի ենթարկված լինելու մասին նրա կողմից դատախազին բողոքելուց հետո: Նմանապես, այն ոստիկաններից, ովքեր հայտարարել էին, որ ոստիկանության բաժին հասնելու պահին գանգատաբերի վրա արդեն իսկ առկա էին կապտուկներ, ոչ մեկից չի պահանջվել բացատրել, թե ինչու գանգատաբերին չեն հարցաքննել իր կապտուկների առաջացման պատճառների վերաբերյալ կամ 1997 թ. հուլիսի 4–ին ոստիկանություն հասնելիս, կամ ավելի ուշ, երբ իմացել են, որ նա տեղափոխվել է հիվանդանոց: Իշխանությունները որևէ կերպ չեն բացատրել, թե ինչու քայլեր չեն ձեռնարկվել Կրինել Մ–ի կողմից նրան ենթադրաբար ծեծի ենթարկելու վերաբերյալ ստացված տվյալները քննելու ուղղությամբ:

*Cobzaru–ն ընդդ. Ռումինիայի, գանգատ թիվ 48254/99, 26 հուլիս, 2007 թ.*

Վատ վերաբերմունքից տուժողների խոցելիությունը, մասնավորապես, անհրաժեշտություն է առաջացնում՝ նրանց հարցաքննելիս ցուցաբերելու առանձնահատուկ զգուշավորություն: Ստամբուլյան արձանագրությունը սրան առնչվող մանրակրկիտ դրույթներ է պարունակում: Այնուհանդերձ, «վատ վերաբերմունքից տուժող» եզրույթը կարող էր սխալ ենթադրության հանգեցնել առ այն, որ վատ վերաբերմունքի են-

թարկված բոլոր անձինք միևնույն կերպ են արձագանքում և գործում, և որ նման վերաբերմունքից տուժած անձի հետ խոսելու «ճիշտ» ձևը միայն մեկն է: Մարդիկ, սակայն, պատճառված հոգեկան և ֆիզիկական ցավին արձագանքում են խիստ տարբեր ձևերով: Որոշ անձինք փակվում են, դառնում չշփվող և չեն ցանկանում խոսել իրենց հետ տեղի ունեցածի մասին: Ոմանք զայրանում են իրենց հետ պատահած անարդարությունից և ցանկանում են դրա մասին տեղեկացնել ողջ աշխարհին: Ոմանք էլ խիստ նվաստացած են զգում իրենց՝ պայմանավորված վատ վերաբերմունքի սեռական կամ առանձնապես ստորացուցիչ բնույթով: Ոմանք անտարբերության են մատնվում, քանի որ կարծում են, որ բողոքը ոչնչի չի հանգեցնի: Իրենց կամ իրենց համար թանկ անձանց նկատմամբ նման վերաբերմունքի կրկնության վախի պատճառով որոշ տուժողներ կարող են ձեռնպահ մնալ բողոքելուց կամ ճշմարտությունը բարձրաձայնելուց: Վատ վերաբերմունքի ենթարկված անձանց շրջանում հաճախ հանդիպող երևույթներից են նաև համակարգի նկատմամբ անվստահությունը և բողոքի պարագայում իրենց իրավիճակի վատթարացման ակնկալիքը:

Ինչ վերաբերում է խոշտանգման հանցագործությանը և վատ վերաբերմունքի այլ ձևերին, «սևուսպիտակ աշխարհակարգն» այլևս կիրառելի չէ: Մի կողմից՝ ենթադրյալ հանցագործը ոստիկան է, քննիչ, բանտապահ կամ այլ հանրային պաշտոնյա, այսինքն՝ մարդ, ով սովորաբար օրենքի «պահապանի» դիրքերից է հանդես գալիս: Մյուս կողմից՝ ենթադրյալ տուժողը երբեմն այն «անմեղը» չէ, ում պատկերացնում ենք «տուժող» բառը լսելիս: Առավել հաճախ դա անձ է, ով առնվազն կասկածվում է քրեական գործի շրջանակում, կամ գտնվում է նախնական կալանքի տակ կամ դատապարտվել է հանցագործության համար: Երբեմն այդ անձինք, տվյալ պարագայում՝ տուժողները, առնվազն կասկածվում են դաժանագույն ոճրագործությունների մեջ, որոնք ցնցող են հանրային կարծիքի տեսանկյունից: Դա չի նշանակում, թե մեծաթիվ չեն վատ վերաբերմունքից տուժող այն անձինք, ովքեր հիրավի անմեղ են կամ կասկածվում են ընդամենը մանր հանցագործությունների մեջ: Բերված օրինակը, սակայն, ցույց է տալիս, որ քննիչները պետք է հրա-

ժարվեն այն մոտեցումից, թե միայն «անմեղ» կամ «բարի» մարդիկ են արժանի մարդու իրավունքներին՝ հատկապես վատ վերաբերմունքի չենթարկվելու իրավունքին:

Վատ վերաբերմունքից ենթադրաբար տուժած անձը երբեմն իսկապես հայտնի հանցագործ է: Այն պետություններում, որոնցում քրեական արդարադատության համակարգը թույլ է, և/կամ հանցագործությունների բացահայտման ուղղությամբ իշխանությունների նկատմամբ մեծ ճնշումներ կան, ոստիկանությունը հաճախ հավաքում և տանում է «սովորական կասկածյալներին» յուրաքանչյուր անգամ, երբ ի հայտ է գալիս հանցագործություն, սակայն հանցագործն ակնհայտ չէ: Այդ կասկածյալները, ովքեր հաճախ նախկինում մի քանի անգամ դատված են և/կամ նախկինում օգտագործել են թմրադեղեր, ճնշումների և վատ վերաբերմունքի են ենթարկվում, մինչև նրանցից մեկը կոտրվում է և խոստովանում տվյալ հանցագործության կատարումը: Ունենալով հանցավոր անցյալ՝ այդ մարդկանց համար առանձնապես դժվար է որևէ մեկին համոզելը, որ իրենց ասածները ճշմարիտ են, և ոստիկանությունը զգում է, որ կարող է որոշակի գործողություններ կատարել նման տուժողների հետ ու մնալ անպատժելի:

Ուստի խոշտանգումից և վատ վերաբերմունքից տուժածների հետ խոսող քննիչները պետք է վերապատրաստվեն, որպեսզի տիրապետեն հարցազրույցի վարման զգայուն մեթոդներին և կրկնակի տրավմա չպատճառեն անձին, ինչպես նաև շահեն վնասված կամ նվաստացված անձանց վստահությունը: Այդ քննիչները պետք է նաև շատ բաց մտածելակերպ ունենան և զերծ լինեն կանխակալ կարծիքներից:

- Պատշաճ հարցաքննությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոտնկայս ճանաչման կազմակերպումը և քննության այլ հատուկ գործողությունների իրականացումը մեղավորներին բացահայտելու համար.

Վատ վերաբերմունքի քննության կարևորագույն տարրերից են նաև մեղավորների հայտնաբերման և հարցաքննության ուղղությամբ տար-

վող իրական աշխատանքները: ՄԻԵԴ–ն իր նախադեպային պրակտիկայի միջոցով բազմաթիվ թերություններ է բացահայտել այս ոլորտում.

Դատարանը հատկապես զարմանալի է համարում այն հանգամանքը, որ թեպետ գանգատաբերը 1995 թ. մարտի 9–ին կրկնել է, որ ինքն ի վիճակի կլինի ճանաչելու համապատասխան պահակներին նրանց անձամբ տեսնելու դեպքում, ոչինչ չի արվել նրան նման հնարավորություն ընձեռելու համար, և միայն 9 օր հետո է դատախազությունը միջնորդություն ներկայացրել ու որոշում ստացել գործը կարճելու վերաբերյալ՝ ոչ թե բողոքի անհիմն լինելու, այլ մեղավորներին չհայտնաբերելու հիմքով:

*Labita–ն ընդդ. Իտալիայի*

Ավելին՝ ենթադրյալ մեղավորի (մեղավորների) հարցաքննությունը պետք է կատարել անհապաղ՝ բացառելով հնարավոր հանցավոր համաձայնությունը կամ ապացույցների ոչնչացումը.

Ավելին՝ ոստիկաններ Բրոնսը և Բուլթսթրան միջադեպից հետո առանձնացված չէին պահվել և հարցաքննվել էին միայն մոտ երեք օր անց […]: Թեպետ, ինչպես նշվեց, միմյանց հետ կամ Ամստերդամի/Ամստելանդի ոստիկանությունում աշխատող իրենց գործընկերների հետ հանցավոր պայմանավորվածության ապացույցներ չկան, նման պայմանավորվածության ռիսկը նվազեցնելու ուղղությամբ համապատասխան քայլեր չձեռնարկելն ինքնին էական թերություն է քննության համարժեքության տեսանկյունից:

*Ramsahai–ն և այլք ընդդ. Նիդերլանդների, գանգատ թիվ 52391/99, 15 մայիս, 2007 թ.*

➢ Ենթադրյալ տուժողների գաղտնի և ճշգրիտ բժշկական (նախընտրելի է՝ դատաբժշկական) ֆիզիկական և հոգեբանական զննությունը: Դա պետք է իրականացվի անկախ և համարժեքորեն պատրաստված մասնագետների կողմից, ովքեր ի վիճակի կլինեն բացահայտելու վնասվածքների պատճառները և դրանց համապատասխանությունը ստացված բողոքներին.

➢ Լիարժեք դիահերձումն ազատազրկման պայմաններում մահվան կամ պետության ներկայացուցչի գործողությունների հետևանքով հնարավոր մահվան դեպքում.

➢ Բժշկական այլ ապացույցներ՝ ներառյալ ազատազրկման վայրերի և առողջապահական ծառայությունների փաստաթղթերը:

Այս կապակցությամբ Ստամբուլյան արձանագրությամբ նախատեսվում է.

«Բժշկական զննությունն անհրաժեշտ է իրականացնել՝ անկախ խոշտանգումից անցած ժամանակի տևողությունից, սակայն եթե բողոքի մեջ նշվել է, որ այն տեղի է ունեցել վերջին վեց շաբաթների ընթացքում, ապա նման զննությունը պետք է կազմակերպել հրատապորեն, քանի դեռ սուր նշանները չեն անհետացել: Զննությունը պետք է ներառի վնասվածքների և հիվանդությունների բուժման անհրաժեշտության գնահատումը, հոգեբանական օգնությունը, խորհրդատվությունը և հետագա հսկողությունը […]: Խոշտանգումից ենթադրաբար տուժած անձի հոգեբանական գնահատումը նույնպես բոլոր դեպքերում անհրաժեշտ է և կարող է ֆիզիկական զննության մաս կազմել, իսկ եթե ֆիզիկական նշաններ չկան, ապա պետք է կատարվի առանձին […]»:

Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովը (ԽԿՀ, CPT) իր 23–րդ տարեկան զեկույցը (2013 թ.) նվիրել է վատ վերաբերմունքի բժշկական ապացույցները փաստաթղթավորելու և հաշվետվություններով ներկայացնելու խնդրին: Այդ զեկույցում ԽԿՀ–ն առանձնակի ուշադրություն է դարձրել ազատազրկման վայրերում վատ վերաբերմունքի դեպքերը վաղ հայտնաբերելու և դրանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու գործում առողջապահական համակարգի դերակատարմանը: Հաշվետվությունների կապակցությամբ ԽԿՀ–ն առաջարկել է հետևյալը.

… անհրաժեշտ է վերանայել առկա ընթացակարգերը՝ ապահովելով, որպեսզի բոլոր այն դեպքերում, երբ բժշկական մասնագետն

արձանագրել է մարմնական վնասվածքներ, որոնք համահունչ են վատ վերաբերմունքի մասին ազատազրկված անձի հնչեցրած պնդումներին, այդ տեղեկություններն անմիջապես և համակարգված ձևով ներկայացվեն իրավասու մարմինների ուշադրությանը՝ անկախ տվյալ անձի ցանկությունից: Եթե ազատազրկվածի մոտ հայտնաբերվում են մարմնական վնասվածքներ, որոնք ակնհայտորեն վկայում են վատ վերաբերմունքի մասին (օրինակ՝ մեծ կապտուկներ ոտքերի տակ), սակայն նա հրաժարվում է դրանց պատճառը ներկայացնելուց կամ ներկայացնում է վատ վերաբերմունքի հետ առնչություն չունեցող պատճառ, ապա նրա հայտարարությունը պետք է ճշգրիտ կերպով արձանագրվի և հաշվետվությամբ ներկայացվի իրավասու մարմնին՝ բժշկական զննության օբյեկտիվ բացահայտումների լիարժեք նկարագրության հետ մեկտեղ:

«Իրավասու մարմինը», որին պետք է ուղարկվի բժշկական մասնագետի հաշվետվությունը, առաջին հերթին այն անկախ մարմինն է, որը լիազորված է իրականացնելու խնդրի պաշտոնական քննությունը և համապատասխան դեպքերում ներկայացնելու մեղադրանք. […]

Հաշվետվությունն իրավասու մարմնին (մարմիններին) ուղարկելու փաստացի մեխանիզմը պետությունից պետություն տարբերվում է՝ ելնելով կազմակերպական կառուցվածքից, և կարող է նաև չներառել ուղղակի հաղորդակցություն բժշկական մասնագետի ու տվյալ մարմնի միջև: Հաշվետվությունը կարող է փոխանցվել բժշկական մասնագետի հիերարխիայի (օրինակ՝ նախարարության բժշկական վարչության) կամ այն ազատազրկման հիմնարկի ղեկավարության միջոցով, որում նա աշխատում է (օրինակ՝ բանտի պետի միջոցով): Այնուհանդերձ, անկախ նրանից, թե որ մոտեցումն է կիրառվում, պետք է ապահովել հաշվետվության արագ ուղարկումը համապատասխան իրավասու մարմնին:

Ինչ վերաբերում է ազատազրկման պայմաններում մահվան կամ պետության ներկայացուցչի գործողությունների հետևանքով հնարավոր մահվան դեպքերին, ապա իշխանությունները, ինչպես նշվեց, սկզբունքորեն պարտավոր են նշանակել մահացածի դիահերձումը: Այնուհանդերձ, նույնիսկ դիահերձումը կատարած լինելու դեպքում ՄԻԵԴ–ի նախադեպային որոշումները ծավալուն քննադատություն են

պարունակում՝ մահացածի նկատմամբ կատարված դատաբժշկական փորձաքննությունների հասցեին:

Ինչ վերաբերում է դիահերձման ընթացակարգերին, ապա դրանք լուրջ թերություններ են ունեցել: Թեպետ կոտրվածքի երկու տեսական հնարավոր պատճառները կարող էին լինել սրտի արտաքին մերսումը կամ հարվածը, որևէ քայլեր չեն ձեռնարկվել՝ համոզիչ կերպով պարզելու համար՝ արդյոք կատարվել է մերսում, թե ոչ: Դիահերձման եզրակացության մեջ կատարված այն նշումը, թե պատճառը կարող էր մերսումը եղած լինել, լիարժեք և անկեղծ ձևակերպում չի եղել և կարող էր թյուրընթերցմամբ տպավորություն թողնել, թե բժիշկ Շենն իմացել է վերակենդանացման փորձ կատարելու մասին, թեպետ իրականում նա դա չի իմացել: Նա պետք է փաստերը տարբերակած լիներ ենթադրություններից: Անհրաժեշտ էր նաև հնարավորինս նկարագրողական մանրամասներ ներառել կապտուկի, կոտրվածքի և սրտի հիվանդության մասին, սակայն այդ առումով մանրամասներն ակնհայտորեն անբավարար էին:

*Salman–ն ընդդ. Թուրքիայի*

Ոչինչ հայտնի չէ դիահերձումը կատարած իրաքցի պաթոլոգի որակավորումների մասին: Ավելին՝ պաթոլոգի հաշվետվությունը լուրջ թերություններ է ունեցել. այն չափազանց կարճ է եղել և չի պարունակել բավարար մանրամասներ կամ անգամ լուսանկարներ:

*Jaloud–ն ընդդ. Նիդերլանդների, գանգատ թիվ 47708/08, 20 նոյեմբեր, 2014 թ.*

➢ Վկաների համապատասխան ցուցմունքներ, հնարավորության դեպքում՝ ներառելով ազատազրկված այլ անձանց, անվտանգության աշխատողների, հանրության ներկայացուցիչների, իրավապահ մարմինների և այլ պաշտոնյաների բացատրությունները.

Վատ վերաբերմունքը սովորաբար տեղի է ունենում մարդկանց տեսադաշտից դուրս: Այնուհանդերձ, քննության շրջանակում պետք է

իրական ջանքեր գործադրվեն այն անձանցից ապացույցներ հավաքելու ուղղությամբ, ովքեր, հնարավոր է, ականատես եղած լինեն միջադեպին կամ ի վիճակի լինեն լույս սփռելու դրան առնչվող հանգամանքների վրա: Դա արտացոլված է Ստամբուլյան արձանագրության մեջ, որով պահանջվում է հետևյալը.

Տեղեկություններ պետք է ստանալ բոլոր նրանցից, ովքեր ներկա են եղել քննվող տարածքում կամ շինության ներսում, որպեսզի պարզվի, թե արդյոք նրանք ականատես են եղել ենթադրյալ խոշտանգման միջադեպերին:

Նմանապես, ՄԻԵԴ–ը որոշ դեպքերում մատնացույց է արել հնարավոր վկաներին հայտնաբերելու և հարցաքննելու թերացումները.

Քննիչը չի փորձել գտնել և հարցաքննել այն անձանց, ովքեր գանգատաբերի հետ ազատազրկված են եղել Նիժնի Նովգորոդի Բոգորոդսկի և Լենինսկու ոստիկանական բաժիններում 1998 թվականի սեպտեմբերի 10–ից 19–ն ընկած ժամանակահատվածում և կարող էին օգտակար տեղեկություններ ունենալ ինքնասպանության փորձից առաջ գանգատաբերի վարքագծի մասին: Պարզ չէ, թե արդյոք V–ն՝ գանգատաբերի խցակիցներից մեկը, ընդհանրապես հարցաքննվել է քննիչի կողմից:

*Mikheyev–ն ընդդ. Ռուսաստանի*

Իսկապես որևէ տվյալներ չկան այն մասին, որ դատախազը կամ քննիչները քննության ընթացքում խոսել են Մուստաֆա Դյոլեքսոյի տան մերձակայքի բնակիչների հետ: Դատարանը համարում է, որ հնարավոր վկաներին դիակի հայտնաբերումից հետո հնարավորինս շուտ հարցաքննելը կարող էր տեղեկություններ տրամադրել այն մասին, թե արդյոք նրանք տեսել կամ լսել են որևէ կասկածելի բան: Դատարանը համարում է, որ այդ ակնհայտ քայլը չձեռնարկելը քննության էական բացերից է:

*Sultan Dölek–ը և այլք ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 34902/10, 28 ապրիլ, 2015 թ.*

➢ Դեպքի վայրի զննությամբ իրեղեն ապացույցների՝ ներառյալ վատ վերաբերմունքի համար օգտագործված պարագաների, մատնահետքերի, մարմնի հեղուկների և մանրաթելերի հայտնաբերումը. Զննությանը պետք է ներգրավվեն դատական փորձագետների և այլ մասնագետներ, որպեսզի հնարավոր լինի ապահովել և ուսումնասիրել ապացույցները, ստեղծել պատշաճ գծագրեր և/կամ վերակառուցել համապատասխան իրադարձությունները:

Ստամբուլյան արձանագրությամբ նախատեսվում է վատ վերաբերմունքի դեպքում ապացույցների հավաքման և պահպանության միջոցառումների ոչ սպառիչ ցանկ, որը կարող է տրամաբանական ձևափոխությունների ենթարկելուց հետո կիրառել նաև մահվան կասկածելի դեպքերի նկատմամբ:

Բոլոր ապացույցները պետք է հավուր պատշաճի հավաքել, մշակել, փաթեթավորել, պիտակավորել և անվտանգ պահպանել՝ կանխելու համար ապացույցների կեղտոտումը, միջամտությունը կամ կորուստը: Եթե խոշտանգումը ենթադրաբար տեղի է ունեցել ոչ վաղ անցյալում, և այդ ապացույցները վերաբերելի են, ապա պետք է հավաքել, պիտակավորել և պատշաճ կերպով պահպանել նաև հայտնաբերված մարմնի հեղուկները (արյուն կամ սերմնահեղուկ), մազերը, մանրաթելերը և թելերը: Պետք է վերցնել և պահպանել ցանկացած պարագա, որը կարող էր օգտագործված լինել խոշտանգման համար՝ անկախ այդ պարագաների՝ հատկապես խոշտանգման համար նախատեսված լինելու կամ իրավիճակային կիրառություն ստացած լինելու հանգամանքից: Առկա մատնահետքերը պետք է վերցվեն և պահպանվեն, եթե դրանք բավականաչափ թարմ են, որպեսզի վերաբերելի լինեն: Խոշտանգման կատարման ենթադրյալ վայրի կամ տարածքի պիտակային գծագիր պետք է կազմել՝ ըստ մասշտաբի, որում ներկայացված կլինեն բոլոր էական մանրամասները, օրինակ՝

շենքի ներսում հարկաբաժինների դիրքը, սենյակները, մուտքերը, պատուհանները, կահույքը և շրջակա տարածքը: Նույնը պետք է նաև ունենալ գունավոր լուսանկարների տեսքով: Խոշտանգման ենթադրյալ վայրում եղած բոլոր անձանց ինքնությունը պետք է արձանագրել՝ ներառելով լրիվ անունը, հասցեն և հեռախոսահամարը կամ կապի այլ տվյալները: Եթե խոշտանգումը բավականաչափ թարմ է, որպեսզի դա վերաբերելի լինի, ապա պետք է կազմել խոշտանգման մասին բողոքող անձի հագուստի ցանկը, ապա՝ մարմնի հեղուկների և իրեղեն այլ ապացույցների առկայության դեպքում հագուստը ենթարկել լաբորատոր անալիզի:

Այս կապակցությամբ ՄԻԵԴ–ը բազմաթիվ հնարավորություններ է ունեցել՝ կտրուկ քննադատության ենթարկելու իշխանություններին կասկածելի մահվան դեպքում քննչական ամենատարրական գործողությունները չկատարելու համար:

[Դ]ատարանն ի վիճակի չէ հասկանալու Կառավարության այն պնդումը […], թե Գյուլփերի Օ–ի մարմինը լուսանկարելը և «հիվանդանոցում հանցագործության դեպքի վայրի քննություն կատարելը» ինչպես կարող է փոխարինել զույգի բնակարան կատարվելիք այցելությունը, որտեղ տեղի էր ունեցել կռիվը: Դատարանը գտնում է, որ այդ թերացման հետևանքով դատախազը վատնել է կարևորագույն ապացույցներ հավաքելու և/կամ Գյուլփերի Օ–ի մահվան մեջ այդ կռվի դերակատարման մասին կասկածները փարատելու իրական հնարավորությունը:

*Durmaz–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 3621/07, 13 նոյեմբեր, 2014 թ.*

Դատարանը նկատում է նաև, որ Մացգիրտի դատախազը չի զննել Մ.Բ–ի տունը, որպեսզի ստուգեր նրա տան վրա գնդակներ արձակելու փաստը և այդ կերպ գնահատեր գործադրված ուժի համաչափությունը: Նա նաև չի ապահովել գործողության ընթացքում օգտագործված գնդակների հավաքումը:

[…] Մասնավորապես նա բավարար ապացույցներով չի հաստատել, թե արդյոք անվտանգության ուժերը փաստացի արձակել են նախազգուշական կրակոցներ նախքան գանգատաբերին կրակելը: Դատախազը պետք է վերցրած և դատաձգաբանական փորձաքննության ուղարկած լիներ ժանդարմերիայի ծառայողների գնդակները, դատարկ պարկուճները և հրազենը:

*Taydaş–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 52534/09, 26 նոյեմբեր, 2013 թ.*

Դատարանը նաև կասկածի տակ է առնում հանցագործության դեպքի վայրում՝ Մուստաֆա Դյոլեքսոյի տանը նրա դիակը հայտնաբերելուց հետո կատարված քննչական գործողությունների արդյունավետությունը: […] Ըստ երևույթին, որևէ փորձ չի կատարվել՝ փնտրելու մատնահետքեր կամ ուսումնասիրելու տան մուտքի և ելքի կետերի վիճակը: Ավելին՝ Մուստաֆա Դյոլեքսոյի հագին եղած հագուստը չի պահպանվել և չի ենթարկվել դատական փորձաքննության, քանի որ դատախազը համարել է, որ այն «չունի ապացուցողական նշանակություն» […]:

Ավելին՝ թեպետ Մուստաֆա Դյոլեքսոյի բջջային հեռախոսը հայտնաբերվել է նրա գրպանում և կարող էր կարևոր տեղեկություններ պարունակել նրա տեղաշարժի և մահվանից անմիջապես առաջ նրա հետ շփումներ ունեցած անձանց մասին, այն չի ուսումնասիրվել:

Դատարանը նկատում է, որ ազգային իշխանությունները ոչ միայն չեն կատարել քննչական այդ ամենապարզ գործողությունները, այլ նաև քայլեր չեն կատարել անգամ այն ժամանակ, երբ դրա վերաբերյալ ստացել են բազմաթիվ միջնորդություններ գանգատաբերներից:

*Sultan Dölek–ը և այլք ընդդ. Թուրքիայի*

➢ Ազատազրկման գրառումների, որոշումների, գործի նյութերի և համապատասխան միջադեպին առնչվող այլ փաստաթղթերի զննությունը.

Ազատազրկման գրառումների, փաստաթղթերի, գործի նյութերի պահպանումը, ինչպես նաև պետական իշխանությունների կողմից ան-

ձի ազատազրկման, ուժի գործադրման կամ այլ գործողությունների վերաբերյալ այլ փաստաթղթերի պահպանումն ինքնանպատակ չեն: Նյութը կարող է կենսական կարևորություն ձեռք բերել կասկածելի մահվան կամ վատ վերաբերմունքի մասին բողոքները քննելիս: Այդ կապակցությամբ Ստամբուլյան արձանագրությամբ նախատեսվում է հետևյալը.

Բոլոր վերաբերելի փաստաթղթերը, գրառումները կամ նյութերը պետք է պահպանել ապացուցողական նշանակությամբ օգտագործման և ձեռագրաբանական փորձաքննության համար:

Քննության դատավարական թերացումները, որոնք անձանց դեմ առկա ապացույցները դարձնում են անօգտագործելի, որպես կանոն համարվում են արդյունավետ քննության չափանիշի կատարման թերացումներ: Այսպես՝ հույժ կարևոր է, որպեսզի խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի և սպանության կասկածների քննությունը և քրեական հետապնդումն իրականացվեն՝ առավելագույնս պահպանելով ազգային դատավարական կանոնները:

Դատարանը նկատում է, սակայն, որ 2000 թ. օգոստոսի 16–ին գործի նախնական քննությունից հետո գործը քննող դատարանը հայտնաբերեց ներպետական դատավարական կանոնների մի քանի լուրջ խախտումներ, որոնցով խախտվել էին մեղադրյալի իրավունքները, […] որի հետևանքով գործով ավելի վաղ հավաքված բոլոր ապացույցները դառնում էին անթույլատրելի […]: Գործը վերադարձվեց նոր քննության, ապա դադարեցվեց դատախազության կողմից, մասնավորապես՝ քննության առաջին հինգ ամիսների ընթացքում քննիչների կողմից ներպետական դատավարության խախտումներն ուղղելու անհնարինության հիմքով […]: Հաշվի առնելով գործը քննող դատարանի կողմից անթույլատրելի ճանաչված ապացույցների բնույթը՝ այն ըստ երևույթին չէր կարող կրկին օգտագործվել գործը լրացուցիչ քննության վերադարձնելուց հետո, և այդ հանգամանքներում զարմանալի չէ, որ քրեական վարույթը վերջին հաշվով դադարեցվել էր

հանցագործության ապացույցների բացակայության հիմքով:

Ուսումնասիրելով գործի հանգամանքները՝ Դատարանը համարում է, որ իսկապես կարելի է ընդունել, որ իշխանությունները պատշաճ քայլեր ձեռնարկել են միջադեպի համար պատասխանատուներին հայտնաբերելու և պատժելու ուղղությամբ, և եթե չլինեին գործի հարուցումից հետո առաջին հինգ ամիսների ընթացքում իշխանությունների կողմից ներպետական դատավարական կանոնների խախտումները, որոնց պատճառով ներպետական դատարաններն անթույլատրելի էին ճանաչել ապացույցների մեծամասնությունը, […] ապա կարելի է պնդել, որ վարույթը կհամապատասխաներ 3–րդ հոդվածի դատավարական պահանջներին: Փաստը, սակայն, մնում է փաստ՝ իրավասու մարմինները կատարել են անուղղելի բնույթի դատավարական սխալներ, որոնց պատճառով մեղադրվող պաշտոնյաների նկատմամբ քրեական վարույթն ի վերջո հայտնվել է անելանելի իրավիճակում:

Հաշվի առնելով, որ Կառավարությունը որևէ այլ հիմքերով չի բացատրել այդ սխալները, Դատարանը վճռում է, որ այդ սխալների հիմնական պատճառը 1999 թ. նոյեմբերի 26–ից մինչև 2000 թ. հուլիսի 5–ը քննությունն իրականացրած՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների ակնհայտ մասնագիտական թերացումն է:

Ըստ այդմ՝ Դատարանը վճռում է, որ վատ վերաբերմունքի բողոքների […] արդյունավետ քննություն չիրականացնելու պատճառով տեղի է ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի խախտում:

*Maslova–ն և Nalbandov–ն ընդդ. Ռուսաստանի, գանգատ թիվ 839/02, 24 հունվար, 2008 թ.*

Եվ վերջապես՝ լիարժեք քննություն կատարել կարողանալու համար անհրաժեշտ է, որպեսզի քննչական մարմինն օժտված լինի քննչական լիազորությունների ողջ շրջանակով՝ առանց իրավական կամ դատավարական խոչընդոտների: Այդ լիազորությունները պետք է ներառեն, մասնավորապես, ամբողջական դատական փորձաքննություն նշանակելու հնարավորությունը, ենթադրյալ մեղավորներին բացահայտելու համար անհրաժեշտ լիազորությունները (օրինակ՝ քննության հետ

համագործակցելու՝ այլ իրավասու մարմինների պարտավորությունը), ինչպես նաև անձանց ներկայանալուն և ցուցմունք տալուն հարկադրելու իրավասությունը: Իրավական այն նորմերը, որոնք բացառում են հատուկ ուժերի կամ այլ մարմինների ծառայողների նույնականացումը, հավասարազոր են վատ վերաբերմունքի կամ սպանության հնարավոր գործողությունների համար անպատժելիություն ընձեռելուն:

Անկասկած, արդյունավետ քննության համար կարևոր են ոչ միայն իրավական ակտերով սահմանված լիազորությունները, այլ նաև քննիչներին այդ քննություններն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներով և հմտություններով ապահովելը:

Եվ վերջում՝ ևս մեկ կարևոր հանգամանք. այլ մարմինների գործունեությունը քննելու լիազորությամբ օժտված մարմինը պետք է իր տրամադրության տակ ունենա տուժողների պաշտպանության մեխանիզմների լայն շրջանակ: Օրինակ՝ այն պետք է ի վիճակի լինի ապահովելու, որ ենթադրյալ տուժողները չվերադարձվեն բռնության մեջ ներգրավված մարմիններին և անհրաժեշտության դեպքում տեղափոխվեն ազատազրկման այլ վայր: Ավելին՝ քննիչները պետք է նաև պարտավորված լինեն շարունակելու այցելել ենթադրյալ տուժողներին, ովքեր ազատազրկման մեջ են: Պետք է քննել շարունակվող ահաբեկման մասին վկայող ցանկացած տեղեկություններ: Ենթադրյալ տուժողի կողմից բողոքը հետ վերցնելն ինքնին բավարար չէ քննությունը կամ քրեական հետապնդումը դադարեցնելու համար: Պետք է հաշվի առնել հետ վերցնելու շարժառիթները:

Մեղադրյալների պաշտոնավարման կասեցումը նույնպես պետք է վարույթի որոշ փուլերում պարտադիր կիրառման ենթակա միջոցառում լինի. քննության վաղ փուլերում այն անձը, ով կասկածվում է որևէ մեկի նկատմամբ վատ վերաբերմունքի կամ անգամ մահվան մեջ, պետք է առնվազն հեռացվի ազատազրկված անձանց կամ քաղաքացիական այլ անձանց հետ ուղղակի շփումների դաշտից:

## ԴԱՍԵՐ 9–10. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ. ՏՈՒԺՈՂԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Տուժողների պաշտպանության վերոհիշյալ խնդիրներին սերտորեն առնչվում են քննությանը և գործի հետագայում հնարավոր վարույթին տուժողի և/կամ նրա ազգականի մասնակցության խնդիրները: Վատ վերաբերմունքի արդյունավետ քննության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղենիշների մեջ առաջարկվում է հետևյալը.

Վատ վերաբերմունքից ենթադրաբար տուժած անձինք կամ նրանց ներկայացուցիչները պետք է քննչական վարույթներին մասնակցեն այնքանով, որքանով անհրաժեշտ է նրանց իրավաչափ շահերը երաշխավորելու համար: Տուժողները պետք է իրավունք ունենան կոնկրետ գործողություններ կատարելու միջնորդություններ ներկայացնելու և համապատասխան դեպքերում մասնակցելու քննչական որոշակի գործողությունների կատարմանը: Նրանք պետք է կանոնավոր կերպով տեղեկացվեն քննության առաջընթացի և կայացված բոլոր էական որոշումների մասին: Նրանց պետք է անհրաժեշտության դեպքում ցուցաբերել իրավաբանական օգնություն, և նրանք պետք է ի վիճակի լինեն դատական վերանայման հրապարակային և մրցակցային վարույթի միջոցով վիճարկելու քննչական մարմինների գործողությունները կամ բացթողումները:

Ընդհանուր առմամբ, ՄԻԵԴ–ը բազմիցս նշել է քննության և դրա արդյունքների նկատմամբ հանրային վերահսկողության կարևորությունը քննչական մարմինների հաշվետու գործելակերպը երաշխավորելու տեսանկյունից:

[Ք]ննությունը և դրա արդյունքները պետք է բավարար չափով ենթակա լինեն հանրային վերահսկողության, որպեսզի հաշվետու գործելակերպն ապահովված լինի ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում: Հանրային վերահսկողության պահանջվող մակարդակը կարող է յուրաքանչյուր դեպքում տարբեր լինել: Բոլոր դեպքերում, սակայն,

տուժողի ազգականը պետք է վարույթին ներգրավված լինի այնքան, որքան անհրաժեշտ է նրա իրավաչափ շահերը երաշխավորելու համար:

[…] Դատարանը հարկ է համարում նկատել, որ թափանցիկության և արդյունավետության վերոհիշյալ բացերը հակասում են կասկածները և ասեկոսեները փարատելու՝ ներպետական դատարանների մատնացույց արած նպատակին: Պետության ներկայացուցիչների հաշվետու գործելակերպի ապահովման պատշաճ ընթացակարգերը վճռորոշ են հանրային վստահությունն ապահովելու և մահաբեր ուժի գործադրումից ծագող իրավաչափ մտահոգությունները փարատելու համար: Այդպիսի ընթացակարգերի բացակայությունը միայն խորացնելու է չարամիտ շարժառիթների վերաբերյալ մտավախությունը, որի մասին են վկայում, ի թիվս ուրիշների, մահացու կրակոցների վերաբերյալ կանոնակարգի առնչությամբ գանգատաբերի ներկայացրած պնդումները:

*McKerr–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 28883/95, 4 մայիս, 2001 թ.*

Մասնավորապես անհետացումներին և մարդու իրավունքների լրջագույն խախտումներին վերաբերող գործերի շրջանակում ՄԻԵԴ–ի դատական նախադեպի մեջ կարելի է նկատել նոր՝ ՄԻԵԿ–ից «ճշմարտության իրավունքը» բխեցնելու միտումը:

Ավելին, երբ քննության շրջանակում առկա են մարդու իրավունքների լուրջ խախտումների վերաբերյալ պնդումներ, գործի համապատասխան հանգամանքների վերաբերյալ ճշմարտության իրավունքից օգտվում են ոչ միայն հանցագործությունից տուժողը և նրա ընտանիքը, այլ նաև նմանատիպ խախտումներից տուժած այլ անձինք և հանրության լայն շրջանակները, ովքեր իրավունք ունեն իմանալու, թե ինչ է տեղի ունեցել:

*Al Nashiri–ն ընդդ. Լեհաստանի*

Առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում այդ պահանջի բավարարման համար կարող է անհրաժեշտ լինել հրապարակային ուսումնասիրություն, որը կիրականացվի Վատ վերաբերմունքի արդյունավետ քննության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղենիշներին համապատասխան:

Քննարկվող հիմնախնդիրներին են առնչվում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվածներ 53–ը (Դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում), 278–ը (Դատական վերահսկողության ոլորտը), 279–ը (Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները), 280–ը (Դատարանի որոշմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցները), 281–ը (Դատարանի որոշմամբ կատարվող օպերատիվ–հետախուզական միջոցառումները) և 290–ը (Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան):

Մասնավորապես ՀՀ քր. դատ. օր. 53–րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝

1) հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ.

2) ***(կետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ–129–Ն)***.

3) հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար.

4) հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել կատարել անհետաձգելի քննչական գործողություններ.

5) ***(կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ–270–Ն)***

6) հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական ղեկավարում:

2. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝

1) ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման,

գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից.

2) ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում.

3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործը սույն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով.

4) անհրաժեշտության դեպքում քննչական բաժնի պետին գրավոր ցուցում տալ գործի քննությունը քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ, ինչպես նաև ցուցում տալ նախաքննություն իրականացնող տարբեր մարմինների քննչական բաժինների պետերին՝ այդ մարմինների քննիչներից ստեղծված քննչական խմբում ներառելու վերաբերյալ:

Հատուկ քննչական ծառայության քննիչները կարող են ներգրավվել միայն տվյալ ծառայությանը ենթակա քրեական գործերի քննության համար ստեղծված քննչական խմբերում.

5) լուծել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին, ստորադաս դատախազին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի հարցերը.

6) հետաքննության մարմնին, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ.

7) լուծել հետաքննության մարմնի կամ նրա աշխատակցի և քննիչի՝ սույն օրենսգրքով նախատեսված առարկությունները դատավարական ղեկավարում իրականացնող ստորադաս դատախազի ցուցումների վերաբերյալ.

8) գործի քննության օրինականությունն ապահովելու նպատակով հսկողություն իրականացնող դատախազին տալ գրավոր ցուցումներ.

9) լուծել հետաքննության մարմնի, քննիչի որոշումների և գործո-

ղությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին.

10) հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե գործի քննության ընթացքում նրանք թույլ են տվել օրենքի խախտում.

11) դիմել համապատասխան մարմինների քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց կալանավորման հարցը լուծելու, քրեական պատասխանատվության ենթարկելու միջնորդություններով, եթե այդ անձինք քրեական գործով պետք է ներգրավվեն որպես մեղադրյալ.

12) վերադարձնել քրեական գործերը քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար պարտադիր ցուցումներով.

13) վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին, ինչպես նաև նրանց այլ որոշումներ՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում.

14) հաստատել մեղադրական եզրակացությունը, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում կամ անմեղսունակ են դարձել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո, եզրափակիչ որոշումը.

15) գործն ուղարկել դատարան՝ ըստ էության քննելու համար:

3. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև՝

1) ***(կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ–270–Ն)***

2) իր իրավասության շրջանակներում հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ–հետախուզական գործունեության իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին.

3) պահանջել փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին.

4) հետաքննության մարմնին պարտադիր գրավոր ցուցումներ տալ օպերատիվ–հետախուզական միջոցառումների իրականացման մասին՝ կապված քրեական գործով վարույթի հետ.

5) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով.

6) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարճել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը.

7) հետաքննության մարմնին հանձնարարել իրականացնել ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները.

8) միջոցներ ձեռնարկել տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության համար.

9) դիմել դատարան սույն օրենսգրքով նախատեսված միջնորդություններով.

10) ազատել առանց օրինական հիմքերի կամ առանց անհրաժեշտության ձերբակալված կամ կալանավորված անձանց.

11) անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները:

4. Քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում դատախազն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ»:

Նույն օրենսգրքի 278–րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանը քննում է քննչական, օպերատիվ–հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները:

2. Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և

օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

3. Դատարանի՝ սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում ընդունվող որոշումները կարող են վերանայվել վերադաս դատարանի կողմից՝ դատախազի, միջնորդություն հարուցած մարմնի, այն անձանց կամ նրանց ներկայացուցիչների բողոքի հիման վրա, որոնց շահերը շոշափվում են»:

ՀՀ քր. դատ. օր. 279–րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները, ինչպես նաև բանկային, ապահովագրական, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունները և առգրավումները»:

Նույն օրենսգրքի 280–րդ հոդվածի համաձայն՝ «Միայն դատարանի որոշման հիման վրա են կիրառվում քրեադատավարական հարկադրանքի հետևյալ միջոցները՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը, կասկածյալներին, մեղադրյալներին և այն անձանց, որոնց հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրանց ներգրավել որպես մեղադրյալ, բժշկական հաստատությունում տեղավորումը՝ դատահոգեբանական, դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննություն կատարելու համար»:

ՀՀ քր. դատ. օր. 281–րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ–հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ:

2. Դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ–հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» օրենքով»:

Նույն օրենսգրքի 290–րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ–հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկելու հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու, կամ եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

4. Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրեն-

քին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին»:

Միևնույն ժամանակ, «Արդյունավետ քննություն» վերտառությամբ 5–9 դասերին են առնչվում ՀՀ Վճռաբեկ դատարանի հետևյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝

1) Աշոտ Մալխասյանի վերաբերյալ թիվ **ԵԱՔԴ/0051/11/14 գործ,**
2) Արայիկ Գզոյանի վերաբերյալ թիվ **ԵԱՔԴ/0049/01/09 գործ,**
3) Ռուզաննա Նիազյանի վերաբերյալ թիվ **ԵԿԴ/0118/11/13 գործ:**

Մասնավորապես ***Աշոտ Մալխասյանի վերաբերյալ թիվ ԵԱՔԴ/0051/11/14 գործ*****ով** ՀՀ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«38. (…) Վճռաբեկ դատարանը նույնպես անդրադարձել է կյանքի իրավունքի վերլուծությանը մի շարք գործերով կայացված որոշումներում (տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23–ի՝ Սեյրան Այվազյանի վերաբերյալ թիվ ՎԲ–17/08, 2010 թվականի օգոստոսի 27–ի՝ Լևոն Գուլյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0051/11/09, 2010 թվականի դեկտեմբերի 23–ի՝ Կարեն Փափազյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0002/11/10, 2013 թվականի փետրվարի 15–ի՝ Սուսաննա Անտոնյանի գործով թիվ ԵԿԴ/0077/11/12, 2014 թվականի մայիսի 31–ի՝ Ռուզաննա Նիազյանի գործով թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշումները): Մասնավորապես Եվրոպական դատարանի կողմից ձևավորված չափանիշների հիման վրա Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Կոնվենցիայի 2–րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշներից են՝

ա) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ,

բ) քննության արդյունքում պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

գ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնպահ մնան շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևություններից, քանի որ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վտանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և Կոնվենցիայի 2–րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը:

Այն դեպքում, երբ պետության վերահսկողության ներքո (ոստիկանությունում, քրեակատարողական հիմնարկում և այլն) գտնվող անձը մահանում է, և պետությունը Կոնվենցիայի 2–րդ հոդվածի ուժով պարտավորություն է կրում ներկայացնելու մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, ապա իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) կասկածելի մահվան փաստի առթիվ պետք է հարուցեն քրեական գործ և քրեադատավարական ողջ գործիքակազմի ներգրավմամբ իրականացնեն հնարավոր ողջամիտ քայլերը՝ դեպքի հանգամանքները պարզելու համար *(մանրամասն տես Ռուզաննա Նիազյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31–ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշման 25–26–րդ կետերը):*

39. Նախորդ կետում վկայակոչված (ա) ենթակետում շարադրված չափանիշի կապակցությամբ Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է, որ քննության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հատկապես այն հանգամանքը, թե որքան արագ են իշխանություններն արձագանքում Կոնվենցիայի 2–րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներին, ինչը նպաստում է հանրության վստահության պահպանմանը օրինականության ամրապնդման և անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականության բացառման հարցում (տես Hugh Jordan v. United Kingdom գործով 2001 թվականի մայիսի 4–ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետ 108, Yasa v. Turkey գործով 1998 թվականի սեպտեմբերի 2–ի վճիռը, զեկույցներ 1998–IV, էջեր 2439–2440, կետեր 102–104):

Կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության (բ) և (գ) ենթակետերում շարադրված

չափանիշների վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ Կոնվենցիայի 2–րդ հոդվածի պահանջն է, որ իրավասու մարմինները գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ ու պարտավոր լինեն նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ որոշակիացնելու այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել, և կարգավորող համակարգի գործունեության ցանկացած թերություն, երկրորդ՝ բացահայտելու դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին (տե՛ս mutatis mutandis, Kats and Others v. Ukraine, 2008 թվականի դեկտեմբերի 18–ի վճիռ, գանգատ թիվ 29971/04, կետ 116):

Քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ մարմինները միշտ պետք է կատարեն լուրջ քայլեր, որպեսզի պարզեն՝ ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևությունների վրա, որպեսզի փակեն քննությունը կամ որպես իրենց որոշումների հիմք ընդունեն: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: **Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը** (տե՛ս, ի թիվս այլոց, *Gorelov v. Russia,* 2014 թվականի հունվարի 9–ի վճիռ, գանգատ թիվ 49072/11, կետ 52):

**Անհրաժեշտ է նաև բացառել հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը** (տե՛ս *Güleç v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 27–ի վճիռը, գանգատ թիվ 54/1997/838/1044, կետ 82)»:

***Արայիկ Գզոյանի վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/0049/01/09 գործով*** **ՀՀ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.**

«23. Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի

պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը:

Պոզիտիվ գործողություններ կատարելու պահանջը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1–ին հոդվածում ամրագրված պահանջից, որի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի առաջին բաժնում»:

Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշումը, որը վերոշարադրյալ հոդվածում կիրառվող «ապահովել» բառը ենթադրում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն, որոնց արդյունքում կապահովվի իրավունքների երկուստեք՝ օրենսդրական և գործնական պատշաճ պաշտպանություն:

Վերոնշյալ պոզիտիվ պարտականության առկայությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հիմնավորվել է մի շարք այլ որոշումներում ևս: Այսպես՝ *Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի* որոշման մեջ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(…) եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն, ի խախտումն 3–րդ հոդվածի, ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1–ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն: (…) Հակառակ պարագայում, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում ոչ արդյունավետ կլինի, և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատժելի (ի թիվս այլ աղբյուրների՝ տե՛ս Labita v. Italy, գանգատ թիվ 26772/95,

կետ 131)» (Bekos and Ko*utropoulos v. Greece,* 2005 թվականի դեկտեմբերի 13–ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53)»:

***Ռուզաննա Նիազյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0118/11/13 գործով*** ՀՀ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«24. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2–րդ հոդվածի 1–ին կետը պետություններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքի նկատմամբ դիտավորյալ, անօրինական ոտնձգություններից, այլ նաև սահմանում է, որ պետությունները պետք է իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար համապատասխան քայլեր ձեռնարկեն (ի թիվս այլոց՝ տես *Osman v. the United Kingdom* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28–ի վճիռը, գանգատ թիվ 87/1997/871/1083 կետ 115):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2–րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքի պաշտպանությունն անուղղակիորեն պետությունից պահանջում է անձանց մահվան կապակցությամբ պաշտոնապես օբյեկտիվ քննություն իրականացնել: Նման քննություն իրականացնելու պարտականությունը ծագում է բոլոր դեպքերում՝ սպանության կամ կասկած հարուցող մահվան դեպքերում՝ անկախ նրանից, թե հանցանք կատարած անձինք անհատներ են, թե պետական մարմիններ կամ անհայտ անձինք (տես *Nachova and Others v. Bilgaria* գործով 2005 թվականի հուլիսի 6–ի վճիռը, գանգատներ թիվ 43577/98, 43579/98, կետ 110):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2–րդ հոդվածի պահանջն է ապահովել անկախ և անաչառ պաշտոնական քննություն, որը բավարարում է արդյունավետության որոշակի նվազագույն չափանիշների: Իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ և պարտավոր են նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ որոշակիացնելու այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել, և կարգավորող համակարգի գործունեության ցանկացած

թերություն, երկրորդ՝ բացահայտելու դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին: Հասարակական հսկողության պահանջը այս համատեքստում նույնպես կարևոր է (տե՛ս mutatis mutandis, Kats and Others v. Ukraine, 2008 թվականի դեկտեմբերի 18–ի վճիռ, գանգատ թիվ 29971/04, կետ 116):

Քննությունն արդյունավետ կարող է համարվել այն դեպքում, երբ հնարավոր կլինի քննությամբ ձեռք բերված փաստերը համադրել և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկել: Իշխանությունները տեղի ունեցած իրադարձությունը բացահայտելու համար պետք է ձեռնարկեն հասանելի, խելամիտ քայլեր՝ վկաների հարցաքննություն, դատաբժշկական փորձաքննության նշանակում, ինչպես նաև դիահերձում, ինչը թույլ կտա բացահայտել առկա վնասվածքների ամբողջական և իրական պատկերը, ինչպես նաև մահվան պատճառը (տե՛ս *Tanrikulu v. Turkey* գործով 1999 թվականի հուլիսի 8–ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 109 և Gül v. Turkey գործով 2000 թվականի դեկտեմբերի 14–ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89): Քննության եզրակացությունը պետք է հիմնված լինի գործով առկա փաստերի ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա:

Քննության ընթացքում կիրառման ենթակա միջոցները բացարձակ իրավունք չեն սահմանում մեղադրելու կամ դատապարտելու համար, և քննության ընթացքում ցանկացած խախտում կամ հանցանք կատարած անձին չհայտնաբերելը դիտվում է որպես արդյունավետության պահանջի խախտում (տե՛ս *Esat Bayram v. Turkey* գործով 2009 թվականի մայիսի 26–ի վճիռը, գանգատ թիվ 75535/01, կետ 47 և *Ramsahai and Others v. the Netherlands* գործով 2007 թվականի մայիսի 15–ի վճիռը, գանգատ թիվ 52391/99, կետ 321):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է, որ քննության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հատկապես այն հանգամանքը, թե որքան արագ են իշխանություններն արձագանքում Կոնվենցիայի 2–րդ և 3–րդ հոդվածների խախտման վերաբերյալ բողոքներին, ինչը նպաստում է հանրության վստահության պահպանմանը օրինականության ամրապնդման և անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականու-

թյան բացառման հարցում (տե՛ս Hugh Jordan v. United Kingdom գործով 2001 թվականի մայիսի 4–ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետ 108, Yaşa v. Turkey գործով 1998 թվականի սեպտեմբերի 2–ի վճիռը, զեկույցներ 1998–IV, էջեր 2439–2440, կետեր 102–104):

Քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ մարմինները միշտ պետք է կատարեն լուրջ քայլեր, որպեսզի պարզեն՝ ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևությունների վրա, որպեսզի փակեն իրենց քննությունը կամ որպես իրենց որոշումների հիմք ընդունեն: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում պատճառված վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը (տե՛ս, ի թիվս այլոց, Mikheyev v. Russia, 2006 թվականի հունվարի 26–ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, կետ 107):

Քննությունն արդյունավետ համարելու համար այն իրականացնող պատասխանատու մարմիններն օրենքով և գործնականում պետք է անկողմնակալ և անկախ լինեն: Սա նշանակում է, որ ոչ միայն ենթակարգային կապի, այլև պրակտիկ գործունեության մեջ այս մարմինները պետք է անկախ լինեն (տե՛ս *Ramsahai and Others* գործով 2007 թվականի մայիսի 15–ի վճիռը, կետեր 325, 333–346, *Scavuzzo–Hager and Others v. Switzerland* գործով 2006 թվականի փետրվարի 7–ի վճիռը, գանգատ թիվ 41773/98, կետեր 78, 80–86): Անհրաժեշտ է նաև հասարակության անդամներին ինչպես քննության, այնպես էլ դրա արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններով ապահովել, հասարակության անդամների մոտ վստահություն առաջացնել օրենքի գերակայության նկատմամբ, ինչպես նաև բացառել հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը: Բոլոր դեպքերում տուժողները պետք է ներառվեն քննության մեջ՝ վերջիններիս օրինական շահերն

ապահովելու նպատակով (տե՛ս *Güleç v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 27–ի վճիռը, գանգատ թիվ 54/1997/838/1044, կետ 82):

25. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2–րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշների համաձայն՝

ա) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2–րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներն իրավասու մարմինների կողմից պետք է արժանանան արագ արձագանքի,

բ) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ,

գ) քննության արդյունքում պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

դ) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը,

ե) այն իրականացնող պատասխանատու անձինք պետք է անկախ լինեն տվյալ գործում ներգրավված անձանցից,

զ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնպահ մնան շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևություններից, քանի որ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վտանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2–րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը (մահվան փաստի առթիվ արդյունավետ քրեադատավարական քննություն իրականացնելու պարտականության

մասին տես նաև Սուսաննա Անտոնյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15–ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշումը):

26. Ուստի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2–րդ հոդվածով պետության ստանձնած պոզիտիվ պարտավորությունների իրագործումը՝ կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման փաստի առթիվ մանրամասն և արդյունավետ քրեադատավարական քննության իրականացումը քրեական գործի հարուցման փուլում հնարավոր չէ: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետության իրավազորության ներքո գտնվող անձի կասկածելի մահվան կապակցությամբ գործող քրեադատավարական օրենսդրության պայմաններում օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել հնարավոր է բացառապես հարուցված քրեական գործի շրջանակներում:

Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ պետության վերահսկողության ներքո (ոստիկանությունում, քրեակատարողական հիմնարկում և այլն) գտնվող անձը մահանում է, և պետությունը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2–րդ հոդվածի ուժով պարտավորություն է կրում ներկայացնելու մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, ապա իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) կասկածելի մահվան փաստի առթիվ պետք է հարուցեն քրեական գործ և քրեադատավարական ողջ գործիքակազմի ներգրավմամբ իրականացնեն հնարավոր ողջամիտ քայլերը՝ դեպքի հանգամանքները պարզելու համար»:

## 3. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**I. ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկա (հասանելի է համացանցային՝ http://hudoc.echr.coe.int/ էջում)**

1. Denmark–ն ընդդ. Հունաստանի, Norway–ն ընդդ. Հունաստանի, Sweden–ն ընդդ. Հունաստանի և Netherlands–ն ընդդ. Հունաստանի, գանգատներ թիվ 3321/67, 3322/67, 3323/67 և 3344/67, 5 նոյեմբեր, 1969 թ.:
2. Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 5310/71, 18 հունվար, 1978 թ.:
3. Tyrer–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 5856/72, 25 ապրիլ, 1978 թ.:
4. Soering–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 14038/88, 7 հուլիս, 1989 թ.:
5. McCann–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 18984/91, 27 սեպտեմբեր, 1995 թ.:
6. L.C.B.–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 23413/94, 9 հունիս, 1998 թ.:
7. Tekin–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 22496/93, 9 հունիս, 1998 թ.:
8. Osman–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 23452/94, 28 հոկտեմբեր, 1998 թ.:
9. Selmouni–ն ընդդ. Ֆրանսիայի, գանգատ թիվ 25803/94, 28 հուլիս, 1999 թ.:
10. Labita–ն ընդդ. Իտալիայի, գանգատ թիվ 26772/95, 6 ապրիլ, 2000 թ.:
11. Timurtaş–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 23531/94, 13 հունիս, 2000 թ.:
12. Salman–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 21986/93, 27 հունիս, 2000 թ.:
13. Kelly–ն և այլք ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 30054/96, 4 մայիս, 2001 թ.:

14. McKerr–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 28883/95, 4 մայիս, 2001 թ.:

15. Z.–ն և այլք ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 29392/95, 10 մայիս, 2001 թ.:

16. Indelicato–ն ընդդ. Իտալիայի, գանգատ թիվ 31143/96, 18 հոկտեմբեր, 2001 թ.:

17. Pretty–ն ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 2346/02, 29 ապրիլ, 2002 թ.:

18. Bati–ն և այլք ընդդ. Թուրքիայի, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, 3 հունիս, 2004 թ.:

19. Vo–ն ընդդ. Ֆրանսիայի, գանգատ թիվ 53924/00, 8 հուլիս, 2004 թ.:

20. Makaratzis–ն ընդդ. Հունաստանի, գանգատ թիվ 50385/99, 20 դեկտեմբեր, 2004 թ.:

21. Öcalan–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 46221/99, 12 մայիս, 2005 թ.:

22. Nachova–ն և այլք ընդդ. Բուլղարիայի, գանգատներ թիվ 43577/98 և 43579/98, 6 հուլիս, 2005 թ.:

23. Bader–ը և Kanbor–ն ընդդ. Շվեդիայի, գանգատ թիվ 13284/04, 8 նոյեմբեր, 2005 թ.:

24. Mikheyev–ն ընդդ. Ռուսաստանի, գանգատ թիվ 77617/01, 26 հունվար, 2006 թ.:

25. Ramsahai–ը և այլք ընդդ. Նիդերլանդների, գանգատ թիվ 52391/99, 15 մայիս, 2007 թ.:

26. Angelova–ն և Iliev–ն ընդդ. Բուլղարիայի, գանգատ թիվ 55523/00, 26 հուլիս, 2007 թ.:

27. Cobzaru–ն ընդդ. Ռումինիայի, գանգատ թիվ 48254/99, 26 հուլիս, 2007 թ.:

28. Maslova–ն և Nalbandov–ն ընդդ. Ռուսաստանի, գանգատ թիվ 839/02, 24 հունվար, 2008 թ.:

29. Tadevosyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 41698/04, 2 դեկտեմբեր, 2008 թ.:

30. Mkhitaryan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 22390/05, 2 դեկտեմբեր, 2008 թ.:

31. Kirakosyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 31237/03, 2 դեկտեմբեր, 2008 թ.:

32. Karapetyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 22387/05, 27 հոկտեմբեր, 2009 թ.:

33. Pădureţ–ն ընդդ. Մոլդովայի, գանգատ թիվ 33134/03, 5 հունվար, 2010 թ.:

34. Perişan–ը և այլք ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 12336/03, 20 մայիս, 2010 թ.:

35. Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի, գանգատ թիվ 22978/05, 1 հունիս, 2010 թ.:

36. Ashot Harutyunyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 34334/04, 15 հունիս, 2010 թ.:

37. Haas v. Switzerland, գանգատ թիվ 31322/07, 20 հունվար, 2011 թ.:

38. Soare–ը և այլք ընդդ. Ռումինիայի, գանգատ թիվ 24329/02, 22 փետրվար, 2011 թ.:

39. Al–Skeini–ն և այլք ընդդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 55721/07, 7 հուլիս, 2011 թ.:

40. Finogenov–ը և այլք ընդդ. Ռուսաստանի, գանգատներ թիվ 18299/03 և 27311/03, 20 դեկտեմբեր, 2011 թ.:

41. Gorovenky–ն և Bugara–ն ընդդ. Ուկրաինայի, գանգատներ թիվ 36146/05 և 42418/05, 12 հունվար, 2012 թ.:

42. Choreftakis–ը և Choreftaki–ն ընդդ. Հունաստանի, գանգատ թիվ 46846/08, 17 հունվար, 2012 թ.:

43. Sašo Gorgiev–ն ընդդ. Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության, գանգատ թիվ 49382/06, 19 ապրիլ, 2012 թ.:

44. Piruzyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 33376/07, 26 հունիս, 2012 թ.:

45. Kayak–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 60444/08, 10 հուլիս, 2012 թ.:

46. Virabyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 40094/05, 2 հոկտեմբեր, 2012 թ.:
47. Mikiashvili–ն ընդդ. Վրաստանի, գանգատ թիվ 18996/06, 9 հոկտեմբեր, 2012 թ.:
48. Dvalishvili–ն ընդդ. Վրաստանի, գանգատ թիվ 19634/07, 18 դեկտեմբեր, 2012 թ.:
49. Keller–ն ընդդ. Ռուսաստանի, գանգատ թիվ 26824/04, 17 հոկտեմբեր, 2013 թ.:
50. Taydaş–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 52534/09, 26 նոյեմբեր, 2013 թ.:
51. Centre for Legal Resources on Behalf of Valentin Câmpeanu–ն ընդդ. Ռումինիայի, գանգատ թիվ 47848/08, 17 հուլիս, 2014 թ.:
52. Al Nashiri–ն ընդդ. Լեհաստանի, գանգատ թիվ 28761/11, 24 հուլիս, 2014 թ.:
53. Durmaz–ն ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 3621/07, 13 նոյեմբեր, 2014 թ.:
54. Jaloud–ն ընդդ. Նիդերլանդների, գանգատ թիվ 47708/08, 20 նոյեմբեր, 2014 թ.:
55. Davtyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատ թիվ 29736/06, 31 մարտ, 2015 թ.:
56. Nalbandyan–ն ընդդ. Հայաստանի, գանգատներ թիվ 9935/06 և 23339/06, 31 մարտ, 2015 թ.:
57. Sultan Dölek–ը և այլք ընդդ. Թուրքիայի, գանգատ թիվ 34902/10, 28 ապրիլ, 2015 թ.:
58. Zalyan–ը և այլք ընդդ. Հայաստանի, գանգատներ թիվ 36894/04 և 3521/07, 17 մարտ, 2016 թ.:

## II. Պաշտոնական փաստաթղթեր

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ), փոփոխված թիվ 11 և 14 արձանագրություններով, լրացված թիվ 1, 4, 6, 7, 12 և 13

արձանագրություններով: Հասանելի է համացանցային՝ http://www.echr.coe.int/Documents/Convention_HYE.pdf էջում:

2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

3. Խոշտանգման և դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ այլ վերաբերմունքի կամ պատժի դեմ պայքարի մասին ՄԱԿ–ի կոնվենցիա: Հասանելի է համացանցային՝ http://www.parliament.am/library/MAKkonvencianer/9.pdf էջում:

4. Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) կողմից 2013 թվականի ապրիլի 4–ից 10–ը Հայաստան կատարված այցելության վերաբերյալ զեկույցը Հայաստանի Կառավարությանը, CPT/Inf (2015) 8:

### III. Ազգային օրենսդրություն

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6–ի հանրաքվեով: Հասանելի է համացանցային՝ http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm էջում:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք: Ընդունվել է 2003 թ. ապրիլի 18–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 1998 թ. հուլիսի 1–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

4. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք: Ընդունվել է 2004 թ. դեկտեմբերի 24–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

5. ՀՀ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենք: Ընդունվել է 2002 թ. փետրվարի 6–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

6. ՀՀ «Ոստիկանության մասին» օրենք: Ընդունվել է 2001 թ. ապրիլի 16–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

7. ՀՀ «Ոստիկանության զորքերի մասին» օրենք: Ընդունվել է 1997 թ. նոյեմբերի 17–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

8. ՀՀ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենք: Ընդունվել է 2004 թ. փետրվարի 18–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

9. ՀՀ «Զենքի մասին» օրենք: Ընդունվել է 1998 թ. հուլիսի 3–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

10. ՀՀ «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենք: Ընդունվել է 1992 թ. դեկտեմբերի 12–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

11. ՀՀ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենք: Ընդունվել է 1996 թ. մարտի 4–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

12. ՀՀ «Մարդու իմունային անբավարարության վիրուսի հիվանդության կանխարգելման մասին» օրենք: Ընդունվել է 1997 թ. փետրվարի 3–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

13. ՀՀ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենք: Ընդունվել է 1998 թ. դեկտեմբերի 2–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

14. ՀՀ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենք: Ընդունվել է 2001 թ. հունիսի 26–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

15. ՀՀ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենք: Ընդունվել է 2002 թ. ապրիլի 16–ին: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

16. ՀՀ Կառավարության 2004 թ. օգոստոսի 5–ի «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 1116–Ն որոշում: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

17. ՀՀ Կառավարության 1998 թ. հուլիսի 6-ի «Բժշկական ամլացումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 425 որոշում: Հասանելի է համացանցային՝ http://www.arlis.am/ էջում:

**IV. ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկա (հասանելի է համացանցային՝ http://www.datalex.am/ էջում)**

1. Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի և Արայիկ Զալյանի վերաբերյալ 22.12.2006 թ. ՎԲ-176/06 գործով որոշում:
2. Արայիկ Գզոյանի վերաբերյալ 12.02.2010 թ. ԵԱՔԴ/0049/01/09 գործով որոշում:
3. Ալիկ Մաթևոսյանի վերաբերյալ 26.03.2010 թ. ՎԲ-04/10 գործով որոշում:
4. Սվետլանա Գրիգորյանի վերաբերյալ 11.05.2011 թ. ԵԿԴ/0281/01/10 գործով որոշում:
5. Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ 01.11.2012 թ. ԱՐԴ/0176/01/11 գործով որոշում:
6. Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ 28.11.2013 թ. ՎԲ-05/13 գործով որոշում:
7. Ռուզաննա Նիազյանի վերաբերյալ 31.05.2014 թ. ԵԿԴ/0118/11/13 գործով որոշում:
8. Իլլարիոն Նունուշյանի վերաբերյալ 05.06.2015 թ. ԵՇԴ/0070/01/13 գործով որոշում:
9. Աշոտ Մալխասյանի վերաբերյալ 05.06.2015 թ. ԵԱՔԴ/0051/11/14 գործով որոշում:

**V. Ձեռնարկներ, ուղեցույցներ, մեկնաբանություններ**

1. Conor Foley, Combating Torture, A Manual for Judges and Prosecutors, The Human Rights Centre, University of Essex, United Kingdom, available at: https://www.essex.ac.uk/combatingtorturehandbook/index.htm
2. Վահրամ Շահինյան (խմբ.), Հատուկ քննչական ծառայության ուղեցույցը խոշտանգման գործերով քննության կազմակերպման և

իրականացման վերաբերյալ, Երևան, 2014: Հասանելի է համացանցային՝ http://www.ccc.am/hy/1428589437 էջում:

3. Erik Svanidze, Effective Investigation of Ill–Treatment. Guidelines on European Standards. 2nd edition, Council of Europe, Strasbourg, 2014. available at: http://www.coe.int/t/dgi/hr–natimplement/publi/materials/1121.pdf

4. UNODC Handbook on police accountability, oversight and integrity, United Nations, New York, 2011, available at: https://www.unodc.org/documents/justice–and–prison–reform/crimeprevention/PoliceAccountability_Oversight_and_Integrity_10–57991_Ebook.pdf

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., «Իրավունք», 2010: Հասանելի է համացանցային՝ http://concourt.am/armenian/library/cclibrary/index.htm էջում:

## VI. Հատուկ տվյալ դասընթացի համար մշակված վերապատրաստման նյութեր (հավելված)

1. «Կյանքի իրավունքը» խորագրով PowerPoint պրեզենտացիա
2. «Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքը» խորագրով PowerPoint պրեզենտացիա
3. «Կյանքի իրավունքի հնարավոր խախտումների և խոշտանգման և/կամ վատ վերաբերմունքի արգելքի հնարավոր խախտումների գործերի արդյունավետ քննության և քրեական հետապնդման սկզբունքները» խորագրով PowerPoint պրեզենտացիա
4. «Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի հոդված 2–ի հարաբերակցությունը» խորագրով PowerPoint պրեզենտացիա
5. «Խոշտանգումների դեմ պայքարն ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության» խորագրով PowerPoint պրեզենտացիա
6. Մարդու իրավունքների վերլուծության գործիքը
7. ՄԻԵԿ–ի գործերի համառոտագիրը
8. Դերախաղի միջոցով հարցազրույցի վարման հնարքները

## 4. ՀԱՎԵԼՎԱԾ

| Մարդու իրավունքների վերլուծությունը<br>Պետության գործողությունները |
|---|
| 1. Կիրառության շրջանակը. միջամտությո՞ւն մարդու իրավունքի նկատմամբ |
| 1.1. Միջոցառումը համապատասխանո՞ւմ է մարդու իրավունքի կիրառության շրջանակին |
| 1.2. Պետության միջոցառումը միջամտո՞ւմ է մարդու իրավունքի նկատմամբ |
| 2. Հիմնավորո՞ւմ, թե՞ խախտում |
| 2.1. Միջամտությունն ունի՞ իրավական հիմք |
| 2.2. Միջամտությունը հետապնդո՞ւմ է իրավաչափ նպատակ |
| 2.2. Միջամտությունը համաչա՞փ է |
| ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ<br>Միջոցը հարմա՞ր է նպատակին հասնելու համար:<br>Անհրաժե՞շտ է: Հնարավոր միջոցներից ամենամե՞ղմն է: Կա՞ն այլընտրանքներ:<br>Դրված նպատակը համաչա՞փ է հնարավոր վնասին: |

## ԴԱՍ 1. ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԵՐ

### *Գործ Ա*

Ազգային օրենքներից մեկը, նախաբանում հղում անելով պետության աշխարհիկության սկզբունքին և կանանց ու աղջիկների հավասարությանը, արգելում է հանրային դպրոցներում գլխաշորեր կրելը: Այդ օրենքի պահանջները չկատարող երեք աղջիկների արգելում են դպրոց հաճախել:

[*Leyla Şahin–ն ընդդ. Թուրքիայի, 2005 թ.*]

ՄԻԵԿ–ի տեքստի օգտագործմամբ որոշե՛ք, թե մարդու որ իրավունքներին կարող է առնչվել այս իրավիճակը:

Մարդու իրավունքների վերլուծության գործիքի կիրառությամբ գնահատե՛ք, թե արդյոք տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում:

### *Գործ Բ*

14–ամյա աղջիկը, որ դարձել է բռնաբարության զոհ և հղիացել, կոնկրետ պետությունում չի կարող օրինական կարգով ընդհատել հղիությունը: Երբ իշխանությունները տեղեկանում են, որ նա ցանկանում է հեռանալ երկրից, դատավորը որոշում է կայացնում՝ արգելելով նրան մեկնել երկրից:

[*A–ն, B–ն և C–ն ընդդ. Իռլանդիայի, 2010 թ.*]

ՄԻԵԿ–ի տեքստի օգտագործմամբ որոշե՛ք, թե մարդու որ իրավունքներին կարող է առնչվել այս իրավիճակը:

Մարդու իրավունքների վերլուծության գործիքի կիրառությամբ գնահատե՛ք, թե արդյոք տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում:

***Գործ Գ***

Համասեռամոլ բանտարկյալը, բողոքելով այլ բանտարկյալների կողմից իրեն ահաբեկելու և ճնշելու մասին, ընդհանուր տևողությամբ ութ ամսից ավելի ժամկետով պահվում է մենախցում:

[*X–ն ընդդ. Թուրքիայի, 2012 թ.*]

ՄԻԵԿ–ի տեքստի օգտագործմամբ որոշե՛ք, թե մարդու որ իրավունքներին կարող է առնչվել այս իրավիճակը:

Մարդու իրավունքների վերլուծության գործիքի կիրառությամբ գնահատե՛ք, թե արդյոք տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում:

***Գործ Դ***

Ավազակային հարձակում կազմակերպելու մեջ կասկածվող անձը տարվել է ոստիկանություն, որտեղ ճշմարտությունն ասելու համար երդում տալուց հետո նա հարցաքննվել է որպես վկա: Հարցաքննության ընթացքում նրա շահերը չեն ներկայացվել փաստաբանի կողմից:

[*Brusco–ն ընդդ. Ֆրանսիայի, 2010 թ.*]

ՄԻԵԿ–ի տեքստի օգտագործմամբ որոշե՛ք, թե մարդու որ իրավունքներին կարող է առնչվել այս իրավիճակը:

Մարդու իրավունքների վերլուծության գործիքի կիրառությամբ գնահատե՛ք, թե արդյոք տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում:

## ԴԱՍ 8. ԴԵՐԱԽԱՂ՝ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՎԱՐՄԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ

### Հարցազրուցավարի առաջադրանքը

Որպես քննիչ՝ Դուք տեղեկություններ եք ստանում տեղի նախնական կալանքի բանտի պետից այն մասին, որ նախորդ օրը 17–ամյա տղա է տեղափոխվել բանտ, ում մարմնի վրա տեսանելիորեն առկա են բազմաթիվ արյունազեղումներ և կողի հնարավոր կոտրվածք: Տղան նշել է, որ իրեն ձերբակալելիս ծեծել է ոստիկանը, սակայն ըստ երևույթին նա հրաժարվում է միջադեպի վերաբերյալ պաշտոնապես բողոքելուց: Բանտի պետը նամակին կից ուղարկել է բժշկական տեղեկանքի կրկնօրինակը:

Նախքան այս գործով որևէ քայլ կատարելը դիտարկում եք տղայի գործը. նա բազում անգամներ խնդիրներ է ունեցել օրենքի հետ և նախկինում եղել է բանտում: Այս անգամ նա ձերբակալվել է մոտոցիկլի գողությանը մասնակցելու համար: Գործով հիմնական կասկածյալը չափահաս է: Ձերբակալող ոստիկանները նշված են գործի նյութերում՝ իրենց նույնականացման համարներով:

### Հարցեր

1) Ինչ ապացույցներ կհավաքեիք այս գործով: Ինչ քայլեր կկատարեիք և ինչ հերթականությամբ:

2) Եթե որոշեք հարցաքննել ենթադրյալ տուժողին, որտեղ այն կանցկացնեք:

### Առաջադրանքներ

1) Պատրաստել հարցաքննությունը. մեկ անձը՝ որպես դատախազ, մյուսները՝ որպես արձանագրողներ (30 րոպե):

2) Անցկացնել հարցաքննությունը և հնարավորինս շատ տեղեկություններ հավաքել:

3) Համեմատել հարցաքննության վերաբերյալ արձանագրված գրառումները:

## ՀԱՐՑԱՔՆՆՎՈՂԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Անունդ Տիգրան Թավիզյան է, 17 տարեկան ես, այնքան էլ ուժեղ տղա չես քո տարիքի համար: Մեծացել ես անկայուն ընտանիքում: Վերջին տարիներին մի քանի անգամ խնդիրներ ես ունեցել օրենքի հետ: Քրեական անցյալդ ներառում է գրպանահատությունից մինչև դրամաշորթության փորձ: Նախկինում արդեն եղել ես բանտում:

Երկու օր առաջ ընկերներիցդ մեկի հետ (ով չափահաս է) ընթանում էիք մոտոցիկլետով, ընդ որում՝ մոտոցիկլետը վարում էր նա: Դու որոշակիորեն կասկածում էիր, որ մոտոցիկլը գողացված է, սակայն այդ մասին չէիր հարցրել ընկերոջդ: Երբ ոստիկանությունը փորձեց կանգնեցնել երկուսիդ, ընկերդ փորձեց փախուստի դիմել: Այնուհանդերձ, ոստիկաններն իրենց ավտոմեքենայով հետապնդեցին Ձեզ և, ի վերջո, կանգնեցրին խաչմերուկում:

Անմիջապես հասկացար, որ ճանաչում ես մեքենայից իջնող ոստիկանին: Նախորդ անգամ, երբ խանութից ինչ–որ բան էիր գողացել, նա էր քեզ ձերբակալել և սպառնացել, որ հաջորդ անգամ տեսնելիս քեզ ծեծի կենթարկի: Նկատեցիր, որ ոստիկանը շատ զայրացած է: Նախքան փախուստի դիմելու մասին մտածելն անգամ նա քեզ ուժով քաշեց իջեցրեց մոտոցիկլետից և սկսեց բռունցքներով հարվածել մարմնիդ վերին մասերին ու դեմքիդ: Ընկար գետնին, և ոստիկանը շարունակեց ոտքերով հարվածել, քանի դեռ ընկած էիր գետնին: Նա բղավում էր, որ զգուշացրել է, որ այլևս չհայտնվես իր ճանապարհին: Վերջում գործընկերներից մեկը նրան հանգստացրեց և քեզ տարան ոստիկանության բաժին:

Ոստիկանության բաժնում պահվելու ընթացքում քեզ կարճ ժամանակով տարան հիվանդանոց՝ բուժզննության: Այնուհանդերձ, քեզ ծեծած ոստիկանն ասել էր, որ եթե քո լավի մասին մտածում ես, ապա բժշկին ոչինչ չասես: Ցանկացած պարագայում բժիշկն իրականում քեզ

չզննեց և ընդամենը հարցրեց, թե արդյոք քեզ լավ են վերաբերվել, որը դու հաստատեցիր:

Մոտոցիկլետի գողությանը մասնակցելու համար քեզ կալանավորեցին: Երբ հասար բանտ, բանտի բժիշկը հավուր պատշաճի զննեց մարմնիդ վերին մասերը: Նա նշեց, որ մի շարք թարմ արյունազեղումներ ունես կրծքավանդակիդ, ուսերիդ, մեջքիդ և թևերիդ, և որ ձախ կողերիցդ մեկը կարծես մասամբ կոտրված է: Այդ կոտրվածքի պատճառով դու զգալի ցավեր ունես: Երբ բժիշկը քեզ հարցրեց, դու ասացիր, որ քեզ ծեծել է ոստիկանը, սակայն ավելացրիր, որ չես ցանկանում որևէ բողոք ներկայացնել, քանի որ վախենում ես, որ ոստիկանը կվնասի քեզ կամ ընտանիքիդ անդամներին:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Հարցաքննվելիս պատկերացրե՛ք, որ այդ տղան Դուք եք: Տեքստը Ձեզ չի տալիս բոլոր այն հարցերի պատասխանները, որոնք Ձեզ հավանաբար տալու են. եղե՛ք հնարամիտ և մտածե՛ք այն պատասխանները, որոնք հավանաբար կտայիք նման հանգամանքներում: Եթե Ձեզ ապահով չեք զգում կամ չեք վստահում Ձեր հարցաքննությունը վարողին, պարտավոր չեք բոլոր տեղեկությունները տրամադրել նրան:

## ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

1. Սկիզբ
   - Ներկայացեք Ձեր գործառույթը
   - Բացատրեք հարցաքննության նպատակը, և թե ինչպես են օգտագործվելու տեղեկությունները
   - Բացատրեք հարցաքննության եղանակները
   - Ստացեք իրազեկված համաձայնությունը
   - Հատուկ նկատառումներ կանանց հետ հարցաքննություն վարելիս

2. Հարցաքննությունը վարելը
   - Բացումը կատարեք հարգալիր ձևով
   - Տվեք ճշգրիտ հարցեր
   - Ձեր վերահսկողության տակ պահեք հարցաքննությունը
   - Խուսափեք ուղղորդող հարցերից
   - Կասկածներ մի՛ հայտնեք
   - Փորձեք հստակորեն հաստատել իրադարձությունների ժամանակագրությունը
   - Հարցրեք վկաների կամ հաստատող ապացույցների մասին
   - Ցուցաբերեք ապրումակցում, սակայն պահպանեք հուզական տարածությունը
   - Խուսափեք նոր տրավմա պատճառելուց

3. Անհրաժեշտ տեղեկություններ
   - Տուժողի/տուժողների անձի հաստատում
   - Իրավախախտի/իրավախախտների անձի հաստատում
   - Նկարագրեք, թե ինչպես է տուժողը հայտնվել հանրային պաշտոնյաների ձեռքում
   - Հստակեցրեք իրադարձությունների ժամանակագրությունը
   - Բացատրեք, թե որտեղ է վերցվել/պահվել տուժողը
   - Նկարագրեք վատ վերաբերմունքի տեսակը/տեսակները (զենքեր և այլն)

4. Մտապահեք
   - Տուժողներին հատուկ է շփոթվելը
   - Մշակութային առանձնահատկություններ/ հետտրավմատիկ սթրեսային խանգարում (PTSD)
   - Գենդերային նրբություններ
   - Անչափահասներ

5. Եզրափակում
   - Հարցրեք՝ կա արդյոք ավելացնելու բան
   - Հնարավոր օգուտները/բացասական հետևանքները
   - Բժշկի/հոգեբույժի կողմից զննությունը

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ–97» ՍՊԸ–ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak